



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

**You are free to:**

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





91(075)

U-19

91(075)

U-19

1910





91(075)

Ա-ԼԳ

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

## ԴԱՍԱԳԻՐՔ

ԵՐՐՈՐԻ ՄԱՍ

### Ե Ի Ր Ո Պ Ա

(6-րդ տարւայ դասընթաց)

52 ՆԿԱՐՈՎ

Փոխադրեց

### ԱՐՏԱԾԻՍ ԱՐԵՂԵԱՆ

(ըստ Խանովի, Կրուքերի եւ ուր.)

Գինն է՝ 70 կոպ.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպար. Ի. Յ. Շապուհի Դժոբց. փ. տ. Վրաց Ազնաւականների

1910



Հոյս է տեսել եւ վաճառուով է նոյն կազմողի

## ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԳՐՔՈՅԿ

Պարունակում է 1) մօտ 10,000 բառերի ցանկ, 2) Ուղղագրական կանոններ: Օժանդակ ձեռնարկ հայոց լեզւի ուղղագրութիւնը սովորելու համար. 191 երես: Գինն է 20 կոպէկ:

Պ. Ղազարոս Աղայեանը «Սուրհանդակ»-ի

1909 թ. № 27-ի մէջ գրում է այս գրքոյկի մասին. «Պ. Ա. Արեղեանի այս գրքոյկը շատ գեղեցիկ է կազմած և շատ պիտանի կարող է լինել թէ ուսուցիչների և թէ մանաւանդ ուսանողների համար: Ցանկալի է, որ մեր ուսուցիչները ձեռքի տակ ունենան և իրենց աշակերտներին էլ ոչ միայն խորհուրդ տան, այլ և պարտաւորեցնեն գնել և օգուտ քաղել թէ բառարանից և թէ ուղղագրական կանոններից... Իր մատչելի գնով, յոյս ունենք, հեշտութեամբ կտարածւի և շուտով կունենայ իր երկրորդ տպագրութիւնը աւելի ընդարձակ... Ի վերջոյ յաջողութիւն եմ ցանկանում պ. Արեղեանին իր նոր ձեռնարկութեան մէջ, որ ըստ ամենայնի ուղիղ շաւղի վրայ է կանգնած մայրենի լեզւի ուսուցման վերաբերմամբ»

Պ. Մ. Մատենճեանը «Նոր Դպրոցի»

1909 թ. № 11-ի մէջ գրում է. «Հայոց լեզւի ուսուցիչներն արդէն նկատած կլինեն, որ աշակերտները յաճախ տառախախներ են անում լոկ այն պատճառով, որ տանը ոչ ուսուցիչ ունեն, ոչ էլ հայերէն յարմար բառարան, որպէսզի կասկածելի համարւող բառերն ստուգեն և այգալիսով աստիճանաբար սովորեն ուղիղ գրել: Պ. Արտ. Արեղեանի ձեռնարկը գալիս է այս մեծ պակասը լրացնելու: Աւելացնենք նաև այն, որ գրքոյկի ձևը գործածութեան համար շատ յարմար է, տպագրութիւնը մաքուր, ուղղագրական էական կանոններն էլ, իբրև յաւելւած, կցւած բառարանին, ու վերջապէս, գինը մատչելի բոլորին, — ապա կստանանք, որ հեղինակի ձեռնարկութիւնը արժանի է գովեստի»:

2004

81890-ան  
1411-892





3208 5353 91(075)  
Ա-13

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

ԴԱՍԱԳԻՐՔ\*

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

Ե Ի Ր Ո Պ Ա

(6-րդ տարւայ դասընթաց)

52 ՆԿԱՐԱՎ

Փոխադրեց

ԱՐՏԱՇԷՍ ԱՐԵՂԵԱՆ

(ըստ Իւանովի, Կրուքերի եւ ուր.)



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպար. Ի. Յ. Շապուհի Դժոբց. փ. տ. Վրաց Աղնւականների  
1910

Գինն է՝ 70 կոպ.

### Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Երեք տարի առաջ, 1907 թվականին, մենք լոյս ընծայեցինք «Աշխարհագրութեան դասագրքի» Ա. մասը,—տարրական աշխարհագրութիւնը: Դասագրքի այդ մասը համապատասխանում է մեր դպրոցական ծրագրի 4-րդ և մասամբ 3-րդ տարուն: Հետեւեալ տարին, 1908-ին, լոյս ընծայեցինք մենք դասագրքի Բ. մասը—Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Աւստրալիա: Դասագրքի այդ մասը պարունակում է 5-րդ ուս. տարւոյ գասընթացը:

Դասագրքի յիշած երկու մասերի համար ևս մեր ուղղեցոյցը եղել է Գ. Իւանովի Աշխարհագրութեան յայտնի ձեռնարկը, որից և գլխաւորապէս փոխադրել ենք. օգտւել ենք նաև Կրուբերի, Գրիգորի, Չեֆրանովի և Բարկովի նմանապէս յայտնի ձեռնարկից: Լրացումների և ստուգումների համար դիմել ենք նաև գերմանական յայտնի աղբիւրների—Ջայզլիցին, Դանիէլին և Կիրխօֆին:

Դպրոցական պրակտիկան ցոյց տւեց, որ չենք սխալւել մեր աղբիւրների, յատկապէս գլխաւոր աղբիւրի՝ Իւանովի դասագրքի ընտրութեամբ: Մեր դասագրքի երկու մասերն ևս կարճ ժամանակւոյ ընթացքում լոյս տեսան երկրորդ տպագրութեամբ: Այժմ ահա մենք լոյս ենք ընծայում «Աշխարհագրութեան դասագրքի» Գ. մասը—«Եւրոպան», որ կազմում է 6-րդ ուս. տարւոյ կամ Գ. դասարանի գասընթաց: Մեր աղբիւրները նոյնն են, վերև յիշատակածները: Դասագրքի այս մասում մենք աւելի ենք հետեւել Իւանովին, համարեա ամբողջապէս փոխադրելով այդ դասագիրքը. միւս աղբիւրները միայն որոշ լրացումների համար են ի նկատի առնւած:

Իւանովի դասագրքի Գ. մասը, որից փոխադրւած է ներկայ հատորը, ունի այն եզակի առանձնայատկութիւնը, որ նրա հեղինակը իր դասագիրքը պատրաստել է ոչ թէ միայն կարօնատալին աշխատանքների և ուսումնասիրութիւնների վրայ հիմնւած, այլ և իր հաւաքած ու մշակած նիւթը ստուգման է ենթարկել անմիջական դիտողութիւնների հիման վրայ: Այդ նպատակով նա ձեռնարկել է մի շարք էքսկուրսիաների դէպի Եւրոպայի զանազան կողմերը. նա եղել է համարեա եւրոպական բոլոր երկիրներում, անմիջական տպաւորութիւններ ստանալով այն վայրերից, որոնք ծառայել են ներկայ դասագրքի նըկարագրութեան առարկան: Դասագրքի մէջ գետեղած պատկերների մի մասն էլ հեղինակն ինքն է լուսանկարել իր էքսկուրսիաների միջոցին: Իսկ թէ ինչ նշանակութիւն ունի մանաւանդ դասագրքի հա-



մար յիշած հանգամանքը, այդ արդէն հասկանալի է ամեն մի դասատուի համար:

Ինչ վերաբերում է դասագրքի գիտական-մանկավարժական սկզբունքներին,—դրանք իհարկէ նոյնն են, ինչ որ նրա Ա. և Բ. մասերում, որ աւելորդ չենք համարում այստեղ ևս համառոտակի ուրաւ գծել:

Այս դասագիրքը նպատակադրել է. նախ՝ որ աշխարհագրութեան դասընթացը լինի ժամանակակից գիտութեան համապատասխան. երկրորդ՝ որ նիւթի բացատրութիւնը լինի պարզ և տրամաբանական—աշակերտը իւրացնի այն պատճառական կապը, որ կայ աշխարհագրական զանազան երևոյթներին—մի երկրի դիրքի, մակերևոյթի կազմութեան և ուղղման, կլիմայի և բուսականութեան, բուսական և կենդանական աշխարհների, մի երկրի բնութեան և նրա ազգաբնակչութեան կեանքի, զբաղմունքների ու կուլտուրական առաջագիմութեան մէջ, և այլն:

Այս բոլոր սկզբունքները բղխում են մէկը միւսից և կիրառւում են նաև նիւթի դասաւորութեան մէջ: Ամբողջ Եւրոպային վերաբերող «ընդհանուր նկարագրութիւնից» յետոյ գալիս է առանձին երկրամասերի աշխարհագրութիւնը: Ամեն տեղ էլ պահպանւած է համեմատական աշխարհագրութեան սկզբունքը, պատճառական կապի անհրաժեշտութիւնը: Ըստ այդմ՝ ուսուցման նիւթը դասաւորւած է համաձայն բնագաւառների, մի երկրի և նրա մասերի բնական պայմանների: Եթէ դասատուն աշակերտներին սկզբից լաւ իւրացնել տայ աւանդելի նիւթի պլանն և, այդ դէպքում կդիւրանայ նրա գործը:

Յոմսնկատուրան կամ աշխարհագրական անունների անւանակարգութիւնը, իբրև այդպիսին, վտարւած է ներկայ դասագրքի միջից: Անցած պիտի համարել այն ժամանակները, երբ «Աշխարհագրութիւն» ասելով հասկանում էին մի կամ բոլոր երկիրների լեռների, գետերի, կղզիների և այլ աշխարհագրական վայրերի անկապ դասաւորութիւնը, որ աշակերտները ստիպւած էին թութակի նման անգիր սովորել: Գիտական-համեմատական աշխարհագրութիւնը նոր սկզբունքներ մշակեց, նոր հեռանկարներ պարզեց դպրոցական աշխարհագրութեան առջև: Ահա այդ սկզբունքին է, որ պէտք է գոհացում տալ: Համաձայ նորա՝ աշխարհագրութիւնը պիտի ձգտէ դառնալ կուլտուրական աշխարհագրութիւն. մի երկրի բնական և պատմական պայմաններից պիտի հետևենք նրա քաղաքակրթական վիճակը. և այս սկզբունքն է, որ պիտի իւրացնէ աշակերտող սերունդը\*):

\*) Աշխարհագրութեան և մասնաւորապէս հայրենագիտութեան դասաւանդմամբ հետաքրքրւողներին առաջարկում ենք կարդալ մեր «Հայրենագիտութեան ուսուցումը»:



Անշուշտ՝ աշխարհագրական անուններ բոլորովին չյիշատակել կամ չափազանց սահմանափակել,—այդ կլինէր միւս ծայրայեղութիւնը. աշխարհագրութիւնը առանց անունների—դա արսուրդ է: Սակայն հարցի էութիւնն այն է, որ աշխարհագրական անունները չյիշատակեն հենց իբրեւ անուններ, անկապ կերպով,—այլ՝ տրամաբանական կապակցութեան մէջ, դասաւանդման ամբողջ նիւթի բովանդակութեան հետ շաղկապւած: Ահա հենց այդ սկզբունքով էլ տեղի է ունեցած ներկայ դասագրքի մէջ աշխարհագրական անունների յիշատակումը:

Դասագրքի ծաւալը աշխատել ենք համաձայնեցնել մեր դպրոցներում ընդունւած շաբաթական դասերի թւին: Աշխատել ենք տալ այն ամենը, ինչ անհրաժեշտ է աշխարհագրութեան ուսուցման համար դպրոցում: Համեմատաբար ոչ-կարևորագոյն հատւածները տպագրել ենք տեւել մանր տառերով. ժամանակը սուղ եղած դէպքում դասատուն ըստ իր հայեցողութեան կարող է կրճատել այն: Ինչպէս ամեն մի առարկայ, այնպէս և աշխարհագրութիւն ուսուցանելիս պէտք է դասատուն աշխատէ աշակերտների ինքնագործունէութիւնը առաջ քաշել, նրանց ներգործական աշխատանքի սովորեցնել: Քարտէսի գործածութիւնը աշխարհագրութեան ուսուցման համար առաջնակարգ պայմանն է: Նիւթը չծանրաբեռնելու համար մենք աւելորդ համարեցինք ամեն մի երկրի սահմանները յիշատակել. դասի սկզբում աշակերտները իրենք պէտք է իւրացնեն այդ՝ ուսուցչի և քարտէսի օգնութեամբ:

Դասագրքի այս մասում ևս զետեղել ենք բաւական թւով նկարներ ու զանազան դիագրամներ: Դրանց անհրաժեշտութիւնն ևս հասկանալի է:

Մենք յոյս ունենք, որ դասագրքի ներկայ հատորն ևս կունենայ այն ընդունելութիւնը, որ ունեցան Ա. և Բ. մասերը: Ամեն մի նկատողութիւն դասատուների և բարեացակամ քննադատութեան կողմից, որ կարւի դասագրքի այս մասի, նաև երկրորդի և մանաւանդ Ա. մասի վերաբերմամբ, — կընդունենք սիրով և կօգտւենք նրանից շնորհակալութեամբ:


Ա. Ա. Բ.

Թիֆլիս, օգոստոս 1910

# Ե Ի Ր Ո Պ Ա

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԻՐՈՊԱՅԻ ԴԻՐԲԸ, ՄԵԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՓԵՐԻ ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆԸ. — Երկրագունդը հասարակածով բաժանւում է երկու կիսագնդերի — հիւսիսային և հարաւային: Ամեն մի միջօրէականով նա բաժանւում է արեւելեան և արեւմտեան կիսագնդերի: Երկրագունդը կարելի է բաժանել նաև մայր-ցամաքային և ովկիանոսային կիսագնդերի (տես նկ. 2): Մայր-ցամաքային կիսագնդում է կենտրոնացած համարեա ամբողջ ցամաքը, իսկ



Նկ. 2. Մայր-ցամաքային և ովկիանոսային կիսագնդեր:

ովկիանոսային կիսագունդը համարեա ամբողջովին ջրով է լցւած: Եւրոպան գտնւում մայր-ցամաքային կիսագնդի մէջ տեղում: Աշխարհագրական այս յարմար դիրքը նպաստաւոր է եւրոպացիների համար. սրանք հեշտութեամբ են հաղորդակ-



ցութիւն պահպանում միւս աշխարհամասերի բնակիչներին հետ, բացի Աւստրալիայից. սա շատ հեռու է գտնւում Եւրոպայից,— երկրագնդի հակառակ կողմում\*):

Եւրոպայի հիւսիսային ծայրն է՝ Նորդկլին հրանդանը. սա գտնւում է հիւսիսային լայնութեան  $71^0$  տակ: Հարաւային ծայրերն են՝ Տարիֆ հրանդանը—հարաւային լայնութեան  $36^0$  և Մատապան հրանդանը— $36\frac{1}{2}^0$  տակ:

Եւրոպայի արեւմտեան ծայրն է՝ Դա-Ռոկա հրանդանը—Գրինիչի (Լոնդոնի մօտ) միջօրէականից  $9\frac{1}{2}^0$  արեւմուտք: Արեւելեան կողմում Եւրոպան հասնում է, Ուրալեան լեռնաշղթայի հիւսիսային մասում, արեւելեան երկայնութեան  $65\frac{1}{2}^0$ -ին: Այն միջոցին, երբ Եւրոպայի ամենաարեւելեան մասում կէսօր է, ամենաարեւմտեան մասում դեռևս առաւօտեան ժամի 7-ն է (ինչո՞ւ):

Իր մեծութեամբ Եւրոպան բռնում է ամբողջ ցամաքի մի փոքրիկ ( $\frac{1}{13}$ ) մասը միայն: Նա համարեա 5 անգամ փոքր է Ասիայից, բաւական փոքր է թէ՛ Հիւսիսային և թէ՛ Հարաւային Ամերիկայից: Եւրոպան միայն Աւստրալիայից մի քիչ մեծ է: Եւրոպայի մակերևոյթը բռնում է մօտաւորապէս  $8\frac{1}{2}$  միլիոն քառակուսի վերստ տարածութիւն (որի կէսից աւելին հենց Եւրոպական Ռուսաստանն է կազմում):

Արեւելեան կողմում Եւրոպան կպած է Ասիային. այնպէս որ կարելի է ասել, թէ Եւրոպան Ասիայի մեծ թերակղզիներից մէկն է: Անկարելի է ճշտութեամբ ցոյց տալ, թէ որտեղ է վերջանում այդ աշխարհամասերից մէկը և որտեղ սկսւում—միւսը: Ասիայի և Եւրոպայի սահմաններն են համարում սովորաբար—Ուրալեան լեռները, Ուրալ գետը և Կովկասեան լեռները (Ուրալեան լեռները ընկնում են Եւրոպայի մէջ, իսկ Կովկասեան լեռները—Ասիայի մէջ):

Հիսիսային կողմից Եւրոպայի ափերը ողողում են՝ Հիւս. Սառուցեալ Ովկիանոսը և Սպիտակ ծովը: Սառուցեալ ով-

\*) Այն միջոցին, երբ Եւրոպայում ցերեկ է, Աւստրալիայում գիշեր է: Երբ Եւրոպայում ամառ է, Աւստրալիայում ձմեռ է և ընդհակառակը:



կիանոսում գտնուում են Եւրոպային պատկանող Նոր Երկիր և Շախցերգէն կղզիները:

Արեւմուտքից Եւրոպայի ափերը ողողում է Ատլանտեան ովկիանոսը: Ատլանտեան ովկիանոսի մասերն են կազմում Եւրոպայի ափերի մօտ—Բիսկայեան ծոցը, Գերմանական (կամ Հիւսիսային) և Բալտիկ ծովերը: Բալտիկ ծովը շատ խորն է մտնում մայր ցամաքի մէջ և կազմում է Ռիգայի, Ֆիննական և Բոտնիկ ծոցերը: Բալտիկ ծովից դէպի արեւմուտք իրար դիմաց տարածւում են Սկանդինավիա և Իւտլանդիա թերակղզիները: Եւրոպային են պատկանում Ատլանտեան ովկիանոսում գտնուող հետեւեալ կղզիները—Իսլանդիա, Իրլանդիա և Մեծ-Բրիտանիա: Վերջինս մայր ցամաքից բաժանուում է Պա-դը-Կալէ նեղուցով (32 վերստ լայնութեամբ):

Հարաւային կողմից Եւրոպայի ափերը ողողում է Միջերկրական ծովը, որ Ատլանտեան ովկիանոսի մի մասն է կազմում և սրա հետ միացած է Զիբրալտարի նեղուցով (14 վ.): Միջերկրական ծովը ողողում է Եւրոպային պատկանող հետեւեալ թերակղզիների ափերը—Պիրենէեան, Ապեննինեան և Բալկանեան: Միջերկրական ծովում են գտնուում՝ Կորսիկա, Սարդինիա, Սիցիլիա և Կրետէ կղզիները: Միջերկրական ծովի մասերն են կազմում հետեւեալ չորս ծոցերը, որոնք ծով էլ են կոչւում—Տիւրենեան, Ադրիատիկ, Յոնիական և Էգէեան: Էգէեան ծովը Դարդանելի նեղուցով միացած է Մարմարա ծովի հետ. իսկ այս ծովն էլ Բոսֆորի կամ Կոստանդնուպոլսի նեղուցով (2 վերստ լայնութեամբ) միացած է Սև ծովի հետ: Սև ծովը և նրա մեծ ծոցը, որ կոչւում է Ազովի ծով, ողողում են Ղրիմ թերակղզու ափերը:

Այսպէս ուրեմն՝ մի շարք ծովեր, ծոցեր և նեղուցներ երեք կողմից ողողում և այնչափ կտրտում են Եւրոպայի ափերը, որ առաջ են բերում շատ կղզիներ և թերակղզիներ: Այդ կղզիները և թերակղզիները բռնում են Եւրոպայի ամբողջ տարածութեան  $\frac{1}{3}$  մասը: Ոչ մի աշխարհամասի ափերը այնչափ կտրտած չեն, որչափ Եւրոպայի ափերը. իսկ այս հանգամանքը Եւրոպայի համար մեծ նշանակութիւն ունի. ծովային գո-



լորշինները մայր ցամաքի ներսն են բերում խոնաւութիւն. բացի դրանից՝ ծովերը ծառայում են հաղորդակցութեան համար իբրեւ շատ լաւ և ամենաէժան միջոցներ: Եւրոպայի արեւելեան կէսը, այսինքն Եւրոպական Ռուսաստանը, աւելի քիչ է կըտրուած ծովերով, քան արեւելեան կէսը:

**ԵՒՐՈՊԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ:**—Առևտրական շահերն են եղել այն գլխաւոր պատճառներից մէկը, որ դրդել են մարդկանց ձեռնարկել հեռաւոր և վտանգաւոր ճանապարհորդութիւնների ու այդպիսով նաև նորանոր երկիրներ յայտնագործել: Այսպէս՝ Քրիստոսից դեռ 1,000 տարի առաջ փինիկեցիները, որոնք ապրում էին Միջերկրական ծովի արեւելեան ափին, նաւերով անցնում էին Զիբրալտարի Նեղուցը և հասնում մինչև Մեծ-Բրիտանիայի ափերը, որտեղ նրանք ձեռք էին բերում անագ և սաթ: Յոյները գաղութներ հիմնեցին Միջերկրական և Սև ծովի հիւս. ափերին. նրանք թափանցեցին նաև այժմեան Իսպանիայի և Ֆրանսիայի խորքերը:

Հռոմայեցիներին, որոնց տիրապետութիւնը տարածւել էր Ապենինեան թերակղզու մօտերը գտնուող երկիրների վրայ, ծանօթ էին՝ Դերմանիան, մինչև Վիսլա գետը և Բալկանեան թերակղզին, մինչև Դանուբ գետը: Նրանք նաւանցին այժմեան Ֆրանսիան և Մեծ-Բրիտանիայի հարաւային մասը:

Սկսած 5-րդ դարուց Ք. յ. քրիստոնէութիւնը տարածւելու հետ միասին հետզհետէ յայտնի դարձաւ Եւրոպայի նաև հիւսիսային մասը — Սկանդինաւեան թերակղզին և Բալտիկ ծովի շուրջը գտնուող երկիրները: Այս վայրերի մասին շատ տեղեկութիւններ էին բերում այն քարոզիչ վարդապետները, որոնք գնում էին այնտեղի հեթանոս ժողովուրդներին քրիստոնեայ դարձնելու համար: 9-րդ դարում տեղի ունեցաւ առաջին նաւագնացութիւնը — Ատլանտեան ովկիանոսից գէպի Սպիտակ ծովը՝ Եւրոպայի հիւսիսային ծայրում գտնուող Նորգլապ հրաւանդանի մօտով: Եւրոպայի արեւելեան մասը յայտնի դարձաւ համեմատաբար ուշ ժամանակներում. առաջին տեղեկութիւնները այդ կողմերի մասին իմացւում են 10-րդ դարում:

**ՄԱԿԵՐԵԻՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ:**—Միւս աշխարհամասերի հետ համեմատած՝ Եւրոպան ցածր մակերևոյթ ունի: Նրա միջին բարձրութիւնը հազիւ  $\frac{1}{3}$  վերստի է հասնում: Ասիայի միջին բարձրութիւնը երեք անգամ աւելի է քան Եւրոպայինը: Եւրոպայի մակերևոյթի  $\frac{2}{3}$ -ը հարթութիւններ են և միայն  $\frac{1}{3}$ -ը՝ բարձրութիւններ. այն ինչ Ասիայի  $\frac{1}{3}$  մասը միայն հար-



թութիւններ են,  $\frac{2}{3}$ -ը՝ բարձրութիւններ: Եւրոպայի ամենաբարձր լեռները՝ Ալպերը թէպէտ յաւիտենական ձիւնով են ծածկւած, բայց և այնպէս աւելի ցածր են, քան օրինակ՝ Մասիսը և Էլբրուսը. մինչև իսկ երկու անգամ ցածր են Հիմալայեան լեռներից:

Ասիայի քարճրութիւնները մեծ մասով տարածւում են կենտրոնում, իսկ Եւրոպայի բարձրութիւնները՝ մեծ մասով հարաւ-արեւմուտքում: Այս պատճառով էլ Եւրոպան, մակերևոյթի կազմութեանը նայելով, կարելի է բաժանել երկու մասի. 1) հարաւ-արեւմտեան, որ բարձր է և 2) հիւսիս-արեւելեան, որ հարթ է:



Նկ. 3. Էկոնաւաբերի տեսարան (Բերնեան Ալպեր). առամշաւոր կաւառներ (առաջինը, աջ կողմից, Իւնգֆրաուն է), անհարթ, ձեղւում լանջեր:

Եւրոպայի լեռները երկու ձևի են: Դրանցից շատերը ձգւում են շարքերով, լեռնաշղթաներ են, շատերն էլ զանգւածային կերպարանք ունեն, լեռնախմբներ են:

Լեռնաշղթաների թւին են պատկանում Եւրոպայի ամենաբարձր սարերը. դրանք են՝ Ալպերը, որոնց Մոնբլան գագա-

Թը 4<sup>1</sup>/<sub>2</sub> վերստ բարձրութիւն ունի, Պիրենէեան, Ապեննինեան, Դինարեան, Կարպատեան և Բալկանեան լեռները:

Իրենց ամբողջ տարածութեան վրայ այդ լեռնաշղթաները բաղկացած են զուգահեռական երկայն շարքերից, որոնք իրարից բաժանուած են երկայնաձիգ հովիտներով: Նրանց բարձունքները ատամնաւոր են, գազաթիւերը՝ սրածայր. լանջերը կտրտւած են խոր, լայնաձիգ հովիտներով: Լեռնաշղթաների այս բազմազան ձևերը առաջ են դալիս այն լեռնային տեսակների բազմազան-



Նկ. 4. Զանգւածային (մասիւ) լեռների տեսարան (Շաղկալի): Կլոր, քեֆ լանջեր:

նութիւնից, որոնցից բաղկացած են լեռնաշարքերը. նրանց մէջ պատահում են թէ՛ փխրուն տեսակներ, — ինչպէս օրինակ՝ կաւը և մերգիլը (կրախառն և կաւային հող), թէ՛ համեմատաբար աւելի ամուր տեսակներ, օրինակ՝ աւազաքար, կրաքար, և թէ՛ վերջապէս, ամենաամուր տեսակներ. օրինակ՝ գրանիտ և գրդձաքար (գնէյս): Հոսող ջրերը լեռնային փխրուն տեսակները հեշտութեամբ են ողողում և քշում-տանում, իսկ ամուր տեսակները մնում են վեր՝ իբրև բարձունքներ և լեռնազազաթիւեր:



Եւրոպայի զանգւածային (մասսիւ) լեռնախմբերից նշանաւոր են՝ Միջին-Գերմանական, Կենտրոնական-Ֆրանսիական, Շոտլանդական և Սկանդինաւեան լեռները։ Սրանք իրենց բարձրութեամբ յետ են մնում լեռնաշարքերից։ Իսկ իրենց ձևով ներկայացնում են ընդարձակ ժայռակոյտեր՝ թեք լանջերով և կլոր, երբեմն նոյն իսկ տափարակ գագաթներով։ Այս լեռները բաղկացած են լեռնային ամենամուր, բերեղացած տեսակներից։ Ղրանք են՝ գրանիտ, գրձաքար, փայլարային թերթաքար և այլն։ Լեռնային այս տեսակները ողողւում, ժամանակի ընթացքում մաշւում են դանդաղ, համաչափ կերպով։ Ղրանից էլ առաջ է գալիս զանգւածային լեռների լանջերի և գագաթների միաձեւութիւնը։

Եւրոպայի արևելեան կէսը բռնում է Ռուսական հարթութիւնը։ Սա տարածւում է Կարպատեան լեռներից մինչև Ուրալ և Հիւսիսային Սառուցեալ ովկիանոսի ափերից մինչև Կովկասեան և Ղրիմի լեռների ստորոտները։ Ռուսական հարթութիւնը չնչին բարձրութիւն ունի. նրա մեծ մասը դաշտավայր է, իսկ Կասպից ծովի մօտերը ովկիանոսից նոյնիսկ 12 սաժէն ցածր է։ Բարձրութիւններ գտնւում են՝ զլխաւորապէս նրա միջին մասում, ծովերից հեռու։ Դրանցից նշանաւորներն են—Միջին-Ռուսական, (որ հիւսիսային մասում կոչւում է Վալդայեան), Մերձ-Վոլգեան և Հիւսիսային Ուվալներ։

Արևմտեան Եւրոպայի հարթութիւններից ամենամեծը կազմում է շարունակութիւն Ռուսական հարթութեան. նա տարածւում է Բալտիկ և Գերմանական ծովերի ափերի երկայնութեամբ և աւելի հեռու՝ դէպի հարաւ-արևմուտք, մինչև Բիսկայեան ծոցը։ Այս հարթութեան արևելեան մասը կոչւում է Գերմանական, իսկ արևմտեանը՝ Ֆրանսիական դաշտավայր։ Գերմանական դաշտավայրը շարունակւում է Իւտլանդիա թերակղզու վրայ, իսկ Ֆրանսիականը՝ Մեծ-Բրիտանիա կղզու վրայ։ Մնացած դաշտավայրերից նշանաւոր են—Լոմբարդական, Միջին-Դանուբեան (կամ Ունգարական) և Ստորին-Դանուբեան դաշտավայրերը։ Սրանք շատ հնումը ծովածոցեր են եղել, որոնք ժամանակի ընթացքում լցւել



են գետերի բերած աւազով, տիղմով, կաւով և ցամաքել են։  
 Հրաբուխներ Եւրոպայում շատ կան, բայց նրանց մեծ  
 մասը հանգած է։ Գործող հրաբուխներ կան Միջերկրականի  
 մի քանի ծովափերին և կղզիների վրայ, նաև Իսլանդիա  
 կղզու վրայ։ Միջերկրականի ամենամեծ հրաբուխներն են՝ Էտ-  
 նա—Սիցիլիա կղզու վրայ և Վեզուվ—Ապենինիեան թերակղզու  
 վրայ։ Իսլանդիայում հաշոււմ են 25 գործող հրաբուխներ.  
 սրանցից շատերը, օրինակ Հեկլան շատ աւելի ուժգին կեր-  
 պով են ժայթքում, քան Էտնան և Վեզուվը։


Երկրաշարժներ Եւրոպայում տեղի են ունենում ամենու-  
 րեք. Ռուսական հարթութեան վրայ հազւադէպ անգամ է եր-  
 կրաշարժ լինում, այն էլ ոչ գորեղ կերպով։ Իսկ Արևմտեան  
 Եւրոպայում—աւելի յաճախ։ Ամենագորեղ երկրաշարժներ տե-  
 դի են ունենում Բալկանեան, Ապենինիեան և Պիրենէեան թե-  
 րակղզիների հարաւային մասերում և մեծամեծ աւերումներ  
 պատճառ են դառնում։

Հին ՍԱՌՅԱԴԱՇՏՏԵՐԻ ՀԵՏՔԵՐ։—Պիրենէեան և Ալպեան բարձր  
 լեռնաշղթաները, Սկանդինաւիայի և բեռոային մի քանի կղզիների  
 բարձրադիր լեռնախմբերը (մասսիւնները) ծածկւած են յաւիտենական  
 ձիւնով և սառցադաշտերով։ Սառցադաշտերը դանդաղօրէն շարժւում  
 են դէպի հովիտները։ Ալպերում նրանք վերջանում են անտառների  
 մէջ, իսկ Շպիցբերգէնում թափւում են ուղղակի ովկիանոս և կազմում  
 են սառցասարեր։ Իրենց ամբողջ հոսանքի ընթացքում սառցադաշտերը  
 հարթում են իրենց տաշտը, կլորացնում են պոկոտած քարերը և տորեւելով  
 ու մաշելով նրանց՝ դարձնում են աւազ և կաւ։ Այս բոլորը նրանք ա-  
 ուաջ են քշում իրենց հոսանքով. սառցադաշտերը թողնում են իրենց եզրե-  
 րին անկանոն ձևով ցրւած քարաժայռեր, որոնք կոչւում են մորեններ.

Ներկայումս Եւրոպայում սառցադաշտեր շատ չկան։ Սակայն կար  
 ժամանակ—շատ դարեր մեզնից առաջ,—որ Եւրոպայի կլիման աւելի  
 ցուրտ էր, քան այժմ, և երբ ամբողջ Եւրոպայի համարեա կէսը ծած-  
 կւած էր սառույցով։ Այդ անցած ժամանակը կոչւում է սառցադաշտա-  
 յին դարաշրջան։ Մի հսկայական սառցադաշտ, որ մի քանի վերստ  
 հասնութիւն ունէր, այն ժամանակները ծածկում էր Եւրոպայի ամ-  
 բողջ հիւսիսային մասը։ Սկանդինաւեան լեռնաշխարհից ցած գալով՝  
 նա շարժւում էր դէպի հարաւ, այժմեան Բալտիկ ծովի ուղղութեամբ,  
 ծածկելով Ռուսական հարթութեան կէսից աւելին և ամբողջ Գերմա-  
 նական դաշտավայրը։



Այդպիսի հսկայական սառցադաշտ գոյութիւն ունի այժմ Գրենլանդիայում և Շպիցբերգէնում: Եւրոպայում շատ վաղուց է, ինչ նա հալել է, իսկ նրա հետքերը մնացել են ամեն տեղ, ուր նա եղել է: Սկանդինաւեան լեռնաշխարհը շնորհիւ սառցադաշտի ցածացել է և ուղորկւել: Ֆինլանդիայում և Կոլեան թերակղզու վրայ եղած նախկին բաւական բարձր սարերը սառցադաշտից ձևափոխւել են և դարձել կլոր բլուրներ:



Նկ. 5. Հին սառցադաշտերի տարածումը Եւրոպայում (Սլաքները ցոյց են տալիս, թէ ինչ ուղղութեամբ են շարժւել սառցադաշտերը):

Բոլոր փխրուն լեռնային տեսակները և ահագին քանակութեամբ գրանիտ ու փղձաքարեր սառույցը քշել տարել է հեռու՝ դէպի հարաւ և հարաւ-արեւելք: Ռուսական հարթութեան հիւսիսային մասը և ամբողջ Գերմանական դաշտավայրը ծածկւած են սառցադաշտային (այսինքն սառցադաշտերի բերած) կաւով և աւազով: Մմենուրեք այնտեղ դաշտերում և անտառներում ցրւած են սառցադաշտային կլոր քարեր, սրոնք կոչւում են վալուններ. այդպիսի քարեր կան ցրւած նաև Բալտիկ ծովի ու նրա ծոցերի յատակում:

Շատ տեղ սառցադաշտային շեղջերից կազմւել են բլրաշարքեր.



օրինակ՝ վալդայեան բարձրութեան բլուրները: Ուրիշ տեղեր, ընդհանրապէս, սառույցը գետինը փորելով գոյացրել է գոգաւորութիւններ. դրանցից շատերը այժմ լցած են ջրով և ներկայացնում են լճեր: Սառցադաշտերն են փորել կամ գոնէ խորացրել օրինակ՝ Փինլանդիայի բազմաթիւ լճերի, Լադոգա, Օնեգա լճերի տաշտերը:

ԿԼԻՄԱՆ.—Ամբողջ Եւրոպան, չհաշւած նրա միայն հիւսիսային ծայրերը, գտնւում է բարեխառն գօտում, որ ամենից աւելի առողջարար է և յարմար՝ մարդկային բնակութեան համար (ինչո՞ւ):

(Յիշել, թէ որ գօտիներում են գտնւում միւս աշխարհամասերը—Ասիան, Աֆրիկան, Ամերիկան և Աւստրալիան):

Եւրոպայի կլիմայի համար մեծ նշանակութիւն ունի Գոլֆշտրոմը, որ երկրագնդի ամենագօրեղ տաք հոսանքն է: Գոլֆշտրոմը Ատլանտեան ովկիանոսի՝ այրեցեալ գօտում գլուխուղ մասից դէպի Եւրոպայի ափերն է բերում այն քանակութեամբ տաքացած ջուր, որ ծովը ձմեռ ժամանակ էլ Եւրոպայի հիւսիս-արեւմտեան ափերի մօտ նոյն իսկ 70° լայնութեան տակ չէ սառչում:


Գոլֆշտրոմի շնորհիւ Եւրոպայի կլիման աւելի տաք է, քան Ամերիկայի և Ասիայի՝ նոյն զուգահեռականների վրայ գտնուող վայրերի կլիման: Այսպէս, մինչ Գրենլանդիա կղզին (Ամերիկա) ծածկւած է սառցադաշտերով, Սկանդինաւեան թերակղզու (Եւրոպա) վրայ, նոյն լայնութեան տակ, աճում են փշատերև ծառերի խիտ անտառներ. այդտեղ կան գիւղեր և քաղաքներ: Լաբրադոր թերակղզին (Ամերիկա), որ նոյն լայնութեան տակ է գտնւում ինչ Մեծ-Բրիտանիա կղզին (Եւրոպա) և Բալտիկ ծովի հարաւային ափերը, ցուրտ հոսանքի շնորհիւ ներկայացնում է մի սառը անապատ: Լաբրադորում տարածւում են սուճադրաներ. այդ ամբողջ թերակղզու վրայ անկարելի է զբաղել երկրագործութեամբ, մինչդեռ Եւրոպայում այդ նոյն լայնութեան տակ (սկսած 50-ից մինչև 90-րդ զուգահեռականը) ամենուրեք լաւ աճում են հացաբոյսեր և պտղատու ծառեր:

Ասիայում 50-րդ զուգահեռականը անցնում է Սախալին կղզու վրայով. այնտեղ, ինչպէս և Լաբրադորում, անկարելի է երկրագործութեամբ պարապել. տարւայ եղանակի միջին աստիճանը մօտաւորա-



պէս 0-ի է հաւասար. այն ինչ Եւրոպայում այդ լայնութեան տակ (օրինակ Հիւս. Ֆրանսիա, Միջին Գերմանիա) ամենուրեք ցանում են ցորեն, իսկ մի քանի տեղ մշակում են նոյնիսկ խաղողի որթ. տարւայ միջին եղանակն է այստեղ մօտաւորապէս  $10^{\circ}$  տաք:

Սակայն այս բոլորի պատճառը միայն Գոլֆշտրոմը չէ: Նրան օգնում են Եւրոպայում գերիշխող արեւմտեան քամիները:



Նկ. 6. Մթնոլորտային ձեղումների բախումը Եւրոպայում\*)

(Ինչո՞ւ Սկանդինավիայի, Մեծ Բրիտանիայի և Պրենէեան թերակղզու արեւմտեան ծովափերին աւելի շատ մթնոլորտային տեղումներ են թափւում, քան արեւելեան ծովափերին. ինչո՞ւ Եւրոպայի լեռների վրայ աւելի շատ, քան հարթավայրերում):

Արեւմտեան Եւրոպայի լեռները այդ քամիների համար մեծ խոչընդոտներ չեն հանդիսանում, որովհետեւ այդ լեռները ընկնում են Ատլանտեան ովկիանոսի եւրոպական ափերի վերաբերմամբ ոչ թէ զուգահեռական ուղղութեամբ, այլ արեւելից—արեւմուտք. ուստի և արեւմտեան քամիները Գոլֆշտրոմից ստացած տաք օդը և մթնոլորտային տեղումները անարգել կերպով տանում, տարածում են մայր ցամաքի ներսը և մեղմացնում նրա կլիման:

Արեւմտեան և Հիւսիս-Արեւմտեան Եւրոպայում յիշած քա-

\*) Նկարի մէջ, ներքե աջ կողմում, նշանակւած 0—25 և միւս թւերը ցոյց են տալիս, թէ այս կամ այն վայրում ամբողջ տարւայ մէջ թափւած մթնոլորտային բոլոր տեղումները միասին քանի՞ սանտիմետր բարձրութեան են հասնում, յատուկ այդ նպատակի համար պատրաստած որոշ ձևի դոյլի մէջ հաւաքելով մթնոլորտային տեղումները և չափելով:



մինները փչում են թէ՛ ամառը և թէ՛ ձմեռը. իսկ Արևելեան Եւրոպայում՝ միայն ամառը. ձմեռը այդտեղ նրանց փոխարինում են Ասիայից փչող ցուրտ և չոր քամիները: Այս պատճառով էլ ահա՝ Արևմտեան և Արևելեան Եւրոպայի կլիմայի մէջ զգալի տարբերութիւն կայ: Տարւայ եղանակի միջին աստիճանը Արևմտեան Եւրոպայում աւելի բարձր է, քան նոյն լայնութեան տակ՝ Արևելեան Եւրոպայում. արևմտեան Եւրոպայում աւելի շատ մթնոլորտային տեղումներ են թափւում, քան արևելեան Եւրոպայում (ինչո՞ւ):

Արևմտեան Եւրոպայում, յատկապէս Ատլանտեան ովկիանոսի ծովափնեայ երկիրներում, կլիման ծովային է, — համաչափ, մեղմ: Այնտեղ ձմեռը շատ ցուրտ չէ լինում, ոչ էլ ամառը շատ շոգ: Արևելեան Եւրոպայում (Ռուսաստան) կլիման խիստ ցամաքային է. ձմեռը լինում է շատ ցուրտ, ամառը՝ շատ շոգ. մթնոլորտային տեղումներ էլ քիչ են թափւում:

Եւրոպայի հարաւում, Միջերկրական ծովի ափերին տարածւող երկիրները կլիմայի կողմից կազմում են առանձին շրջան: Կլիման այդտեղ մերձարևադարձային է: Շնորհիւ այդ երկիրների հարաւային դիրքի՝ ձմեռն այնտեղ աւելի է տաք, իսկ ամառը աւելի շոգ, քան Եւրոպայի մնացած մասերում. այդ երկիրների արևելեան և արևմտեան մասերում կլիմայի տարբերութիւնը մեծ չէ: Ամառը քամիները փչում են մայր ցամաքից դէպի Միջերկրական ծովը, ուստի և տարւայ այդ եղանակին համարեա բոլորովին անձրե չէ գալիս. ամառը անցնում է չոր և շոգ: Անձրեներ թափւում են ուշ աշնանը և ձմեռը, երբ քամիները փչում են Միջերկրականից դէպի մայր ցամաք: Ձմեռը անցնում է մեղմ և անձրեային, այնպէս որ երկիրը ձիւնով չէ ծածկւում:

Չնայելով այս բոլոր տարբերութիւններին՝ Եւրոպայի կլիման չունի այնպիսի հակադրութիւններ, ինչպէս Ասիայի և Ամերիկայի կլիման: Եւրոպայում չկան ջրագուրկ վայրեր, անապատներ. բայց այնտեղ չկան նաև այնպիսի վայրեր, ուր չափից աւելի մթնոլորտային տեղումներ թափւէին: Չհաշւած Սառուցեալ ովկիանոսի ափերը՝ Եւրոպայում չկան չափազանց



ցուրտ, ոչ էլ Հափաղանց շոգ կլիմայ ունեցող վայրեր: Տար-  
ւայ միջին եղանակը ամբողջ Եւրոպայում, Հնաշւած հիւսիսային  
և հարավային ծայրերը,  $0^0$ -ից ցածր չէ և ոչ էլ  $+15^0$ -ից  
բարձր: Եւրոպայի բոլոր մասերում էլ լինում են տարւայ չորս  
եղանակները, որոնք իրար յաջորդելով թարմացնում են մար-  
դուն, գլարթացնում և եռանդ են ներշնչում նրան՝ նոր աշ-  
խատանքի համար:

ԳԵՏՏԵՐԸ և ԼՃՏԵՐԸ:—Արեւմտեան քամիների միջոցով Ատ-  
լանտեան ովկիանոսից բերւող գոլորշիները իբրև մթնոլորտա-  
յին տեղումներ թափւում են ամբողջ Եւրոպայի վրայ և թա-  
ցութիւն տալիս նրա մակերևոյթին: Թափւած ջրի մի մասը  
կրկին գոլորշիանում է, իսկ աւելացածից գոյանում են գետեր  
և հոսում դէպի ծովերը:


Որովհետև Եւրոպան ինքը մեծ չէ, ուստի և նրա գետերը  
փոքր են՝ համեմատած Ասիայի և Ամերիկայի գետերի հետ:  
Բայց Եւրոպայի գետերի հոսանքը շատ յարմար է. նրանք  
սկսւում են մայր ցամաքի միջին մասում և հոսում են դէպի  
ամեն կողմ. նրանց վերին հոսանքները իրար շատ մօտ են  
գտնւում, այնպէս որ ջրանցքների միջոցով հեշտութեամբ կա-  
րող են կապւել իրար հետ:

Արեւելեան Եւրոպայում Միջին Ռուսական բարձրութիւնն  
է այն գլխաւոր վայրը, որտեղից գետեր են սկիզբ առնում և  
դէպի զանազան կողմեր հոսում: Այգաեղ, ծովի մակերևոյթից  
ընդամենը 100 սաժէն բարձրութեան վրայ գտնւող ճահիճնե-  
րից է իր սկիզբը առնում Եւրոպայի ամենամեծ գետը—Վոլ-  
գան (3,200 վերստ երկայնութեամբ): Վոլգան ընդունում է իր  
մէջ Օկա, Կամա և շատ ուրիշ վտակներ: Նոյն Միջին-Ռուսա-  
կան բարձրութիւնից են սկիզբ առնում նաև Դոն, Դնեպր,  
Արեւմտեան Դաւիթ գետերը, Նեայի վտակները, և այլն:

Այս բոլոր գետերը հոսում են դանդաղ, որովհետև սկիզբ  
են առնում ինչպէս ասացինք, փոքրիկ բարձրութիւններից և  
հոսում են հարթութիւններով: Շատ քիչ տեղերում, օրինակ  
Դնեպրը իր միջին հոսանքում, նրանք հանդիպում են սահանք-  
ների: Որովհետև արեւելեան Եւրոպայում (Եւրոպ. Ռուսաստան)



կլիման ցամաքային է, ձմեռը խիստ է լինում, ուստի և գետերը տարւայ այդ եղանակին երկար ժամանակով սառչում են. Հիւսիսային Դւինան 6 ամիս շարունակ սառոյցով է պատած լինում, Վոլգան իր միջին հոսանքում՝ 5 ամիս, Դոնը՝ 4 ամիս, Դնեպրը՝ 3 ամիս:



Նկ. 7. Եւրոպ. գետերի համեմ. մեծ.

(1 կիլոմետրը—մօտ 1 վերստի):

և սառցադաշտերի տակից են սկսւում Հոնցոս, Ռոնա, Պո գետերը և Դանուբի վտակները—Ինն, Դրաւա և Սաւա: Ինքը Դանուբը, որ իր երկայնութեամբ Եւրոպայի 2-րդ գետն է (2,800 վ.) սկիզբ է առնում Շւարցվալդից, բայց ջրերի մեծ մասը ստանում է իր ալպեան վտակներից:

Արեւմտեան Եւրոպայի գետերը իրենց հոսանքի բնոյթով տարբերւում են Արեւելեան Եւրոպայի գետերից: Նրանք, սկիզբ առնելով բարձր լեռներից, իրենց վերին մասում հոսում են արագ, խորը հովիտների միջով, գոյացնում են սահանքներ և ջրվեժներ: Միջին և ստորին մասերում նրանք հոսում են հանդարտ, բայց էլի աւելի արագ, քան ուսսական գետերը, որովհետեւ նրանց տաշտը աւելի թեք է: Ձմեռը Արեւմ. Եւրոպայի

Գարնանը ձեան հալչելուց արեւելեան Եւրոպայի գետերը այնպէս ջրառատ են դառնում, որ յիշեցնում են Հարաւային Ամերիկայի գետերը: Իսկ ամառը, երբ ցամաքում են ճահիճները և իսպառկաւորւում աղբիւրները,—այդ նոյն գետերը այնչափ փոքրանում են, որ շատ տեղերում նրանց ծանծաղուտներով կարելի է մինչև իսկ մի ավից միւսը ոտով անցնել:

Արեւմտեան Եւրոպայի գետերը սկիզբ են առնում լեռներից, շատերը — Ալպերից: Այստեղ, յաւիտենական ձեան



գետերը սառչում են կարծ ժամանակով միայն, իսկ նրանցից համեմատաբար աւելի արեւմտեանները (Հոենոս, Սենա, Լուարա, Գարոննա) նոյն իսկ ամեն տարի չեն սառչում: Գարնանը նրանք չափից աւելի չեն վարարում, ոչ էլ ամառը չափից աւելի փոքրանում. դրա պատճառը այն է, որ արեւմտեան Եւրոպայում աւելի շատ մթնոլորտային տեղումներ են թափւում, քան Արեւելեան Եւրոպայում. բացի դրանից՝ Արեւմտեան Եւրոպայի շատ գետերի մէջ ջրեր են թափւում սարերում հալչող ձիւնից և սառցադաշտերից:

Նաւարկութեան համար Արեւմտեան Եւրոպայի գետերը աւելի յարմար են, քան ռուսական գետերը, որովհետեւ ձմեռը համարեա չեն սառչում, ամառն էլ չեն փոքրանում: Բացի դրանից՝ նրանք թափւում են բաց ծովեր, որոնցից ազատ կերպով կարելի է ովկիանոս մտնել: Նաւարկութեան համար յարմար են մանաւանդ այն գետերը, որոնք թափւում են Գերմանական ծովը և Լամանշ ու Պա-դը-Կալէ նեղուցները: Նրանց գետաբերանները լայնացել են՝ շնորհիւ ծովի մակընթացութեան և տեղատուութեան: Այդ գետաբերաններն էլ հանդիսանում են ծովային նաւերի համար իբրեւ առաջնակարգ նաւահանգիստներ:

Լճեր Եւրոպայում շատ կան, որոնց թւում նաև՝ բաւական մեծերը. Լադոգա լիճ (16,000 քառ. վերստ), Օնեգա լիճ (8,000 քառ. վ.)—Ռուսաստանում. Սայամա (Ֆինլանդիա), Վեներ (Սկանդինաւիա): Այս լճերը իրենց մեծութեամբ չեն կարող հաւասարել Ամերիկայի և Աֆրիկայի լճերին: Ընդհանրապէս լճեր շատ կան Եւրոպայի այն մասերում, որոնք հնումը ռառոյցով են ծածկւած եղել—Սկանդինաւիան, Ֆինլանդիան, Ռուսական հարթութեան հիւսիսային մասը, Գերմանական դաշտավայրը, Ալպեան լեռները (վերջինում նշանաւոր են՝ Ժընևի և Բողէնի լճերը):

Եւրոպայի համարեա բոլոր լճերը հոսող են, նրանց ջուրն էլ անուշ է: Զհոսող աղի լճեր կան միայն Եւրոպական Ռուսաստանի հարաւ-արեւելեան կողմում, որտեղ մթնոլորտային տեղումներ քիչ են թափւում, և շատ ջուր է գոլորշիանում: Այդտեղ հենց, ովկիանոսի մակերեսային 12 սաժէն ցածր, գը-



տնւում է Կասպից լիճը, որ ամենամեծն է երկրագնդի վրայ եղած բոլոր աղի լճերից: Այդ և նրա մօտ գտնուող ուրիշ լճեր մնացորդներ են ցամաքած մի ծովի, որ հնումը տարածւած է եղել դէպի հիւսիս-արեւելք՝ մինչև Սառուցեալ ովկիանոս և արեւմուտքում միացած եղել Սև ծովի հետ: Իր մեծութեան և դառն-աղի ջուր ունենալու համար Կասպից լիճը կոչւում է նաև ծով:

(Ինչո՞ւ Վոլգան, որ Կասպից լիճն է բերում ահագին քանակութեամբ ջուր, չէ բարձրացնում այդ լճի մակերևոյթը):

**ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ:**— Եւրոպայում աճում են ամեն տեսակ բոյսեր, բացի այրեցեալ գօտու բոյսերից:

Եւրոպայում, ինչպէս և Ասիայում ու Հիւս. Ամերիկայում, տունդրաները բռնում են միայն այնպիսի տեղեր, ուր տարւայ միջին եղանակը 0<sup>0</sup>-ից ցածր է, ձմեռն էլ տևում է 7—8 ամիս, իսկ ամառը՝ 2 ամսից ոչ աւելի: Այսպէս է Եւրոպայի ամենահիւսիսային մասը միայն, — Սառուցեալ ովկիանոսի ափերը: Տունդրաներում աճում են գլխաւորապէս մամուռ և ճահճային բոյսեր, այնտեղ երկրագործութեամբ պարապել անկարելի է:

Եւրոպայի բարեխառն կլիման նպաստաւոր է անտառներ աճեցնելու համար: Եւրոպայի կէսից աւելին ծածկւած է անտառներով:

Հնումը ամբողջ արեւմտեան, միջին և արեւելեան Եւրոպան ծածկւած է եղել անանցանելի, խիտ անտառներով, ժամանակի ընթացքում, քաղաքակրթութեան զարգացման և ազգաբնակչութեան շատանալու հետ զուգընթացաբար, մարդիկ կտրտել են այդ անտառները: Շատ տարածութիւններ այժմ, որոնք առաջ անտառապատ են եղել, ծածկւած են արտերով և արօտատեղիներով, յատկապէս Արեւմտեան Եւրոպայում: Այստեղ երկրագործութիւնը աւելի վաղ զարգացաւ, քան Արեւելեան Եւրոպայում: Արեւմ. Եւրոպայում ներկայումս անտառները բռնում են ամբողջ տարածութեան հազիւ <sup>1</sup>/<sub>5</sub> մասը, այն էլ գլխաւորապէս Լեռներում: Աւելի սակաւաբնակ Արեւելեան Եւրոպայի (Ռուսաստան) և Սկանդինաւիա թերակղզու ամբողջ տարածութեան <sup>2</sup>/<sub>3</sub>-ը անտառապատ է:

Եւրոպայի անտառապատ մասի հիւսիսային կողմում, Ուրալեան լեռներից մինչև Սկանդինաւեան լեռները, տարած-



ւում են փշատերեւ ծառերի ընդարձակ և խիտ անտառներ: Այդ-  
տեղ գերակշռում են եղևնի և մայրի ծառերը: Եղևնու խիտ  
և մթին անտառները աճում են գլխավորապէս խոնաւ, կաւ-  
յին տեղերում: Իսկ մայրի անտառները, որոնք աւելի նոսր են  
լինում և բացգոյն, աճում են համեմատաբար չոր, աւազոտ  
տեղերում: Սակայն ընդհանրապէս առած՝ փշատերեւ ծառերի  
անտառներում աճում են թէ՛ եղևնի և թէ՛ մայրի, նրանց հետ  
նաև՝ կեչի (թղթենի) ծառ, որ սաղարթաւոր է: Այս բոլոր ծառե-  
րը շատ տաքութիւն չեն պահանջում, խիտ ցրտերին էլ դի-  
մանում են:



Նկ. 8. Բուսականութեան տարածումը Եւրոպայում:

Եղևնին և մայրին ձմեռը չեն թափում իրենց փշերը և կոնները.  
վերջիններիս մէջ պահւում են մէկ ամառայ ընթացքում դեռ չհասած  
սերմերը: Կեչին ունի նուրբ տերեւներ, որոնք աշնանը թափւում են. բայց  
այդ ծառը շատ քիչ ժամանակ է պահանջում, ընդամենը 3 ամիս, որ  
իր կոկոններից կրկին տերեւներ արձակի:



Փշատերև անտառների շրջանից հարաւ, որտեղ տաք եղանակները աւելի երկարատև են լինում, աճում են խառն անտառներ: Եղենու և մայրի ծառերի կողքին այնտեղ աճում են ոչ միայն կեչի, այլ նաև սաղարթաւոր ուրիշ բազմազան ծառեր— կաղնի, կաղամախի, հացի, թղկի, լաստենի և այլն: Քանի աւելի հարաւ և արեւմուտք երթանք, այնչափ էլ աւելի կշատանան սաղարթաւոր ծառերը և կպակասեն փշատերևները: Արեւմտեան Եւրոպայի հարթ տեղերում գերակշռում են սաղարթաւոր ծառերի երկու տեսակը— կաղնին և աճարին. վերջինս պահանջում է երկու անգամ աւելի տաք եղանակ, քան կեչին. նա խիստ ցրտերի էլ չի կարող դիմանալ:

Արեւմտեան Եւրոպայի լեռների բուսականութիւնը բազմազան է. ստորոտներում աճում են սաղարթաւոր, իսկ վերեւում՝ փշատերև ծառեր:

Եւրոպայի հարաւ-արեւելեան մասում, որտեղ աւելի քիչ մթնոլորտային տեղումներ են թափւում, որտեղ ամառը շոգ է լինում, իսկ ձմեռը ցուրտ, — տարածւում են ընդարձակ տափաստաններ (ստեպ): Այդ տափաստանները բռնում են հարաւ-արեւելեան Ռուսաստանը, միջին և ստորին Պանուբի դաշտավայրերը: Այդտեղ ոչ-ընդարձակ անտառներ պատահում են միայն գետերի խոնաւաշատ հովիտներում:

Տափաստաններում աճում են զանազան տեսակ խոտեր, որոնք գարնանը, ձիւնը հալչելուց յետոյ, արագ կերպով բսնում են, ծաղկում և պտուղ տալիս: Սակայն ամառայ հենց սկզբում տափաստանի խոտերը դեղնում են և չորանում: Համեմատած Ասիայի տափաստանների հետ՝ հարաւ-արեւմտեան տափաստանները աւելի խոտաւետ են, այնտեղ խոտը աւելի բարձր է աճում. կայ նաև այն կարևոր հանգամանքը, որ (չհաշւած մերձկասպեան չոր տափաստանները)— բուսական տափաստանները յարմար են երկրագործութեան համար: Այդ տափաստանների մեծ մասը արդէն հերկած է, խոտերի տեղ այնտեղ ծածանւում են հացարոյսեր:

Միջերկրականի ծովափնեայ երկիրներում, որտեղ ամառը տաք է լինում ու չոր, իսկ ձմեռը համարեա սառնամանիք չի լինում, աճում են մշտադալար սաղարթաւոր ծառեր:<sup>1)</sup> Ձի-

<sup>1)</sup> Այդ ծառերը ունենում են կոշտ, հաստ կլեպով (կեղև) պատած



Թեևնին այդ շրջանի ամենաբնորոշ ծառն է: Մշտադալար ծառերից յիշենք նաև՝ մրտենի, դավինի, օլէանդր և այլն: Փշատերեւ ծառերից այդ շրջանում բնորոշ է—նոճին (կիպարիս): Բացի մշտադալար սաղարթաւոր ծառերից, այդտեղ աճում են նաև մի քանի ուրիշ, սաղարթաւոր ծառեր, որոնց տերեւները ձմեռը թափւում են. օրինակ՝ շագանակենի:

Կլիմայից և բուսականութիւնից է կախած մի երկրի գետնի յատկութիւնները: Տունդրայում գետնի մէջ շատ քիչ բուսահող կայ, որովհետև այնտեղ բուսականութիւնը աղքատ է, իսկ կլիման՝ խիստ ցուրտ: Անառապատ շրջանում թէպէտ բուսականութիւնը հարուստ է, բայց և այնպէս գետինը շատ բուսահող չէ պարունակում. պատճառը այն է, որ անտառում ջուր շատ կայ. իսկ սա քշում-տանում է բուսահողը դէպի գետեր և գետակներ:

Հարաւ-Ռուսական տափաստանները, նաև Ունգարիայի և Ստորին Դանուբեան դաշտավայրերը ծածկւած են երկրագնդի ամենաբերրի վերնաշերտով, որ կոչւում է սեւահող: Սրա գոյնը մուգ է, իսկ անձրեկից յետոյ՝ սև: Այդ գոյնը կախած է բուսահողից: Թէպէտ տափաստաններում բուսականութիւնը այնչափ հարուստ չէ, որչափ անտառներում, բայց դրա փոխարէն՝ բուսահողը չէ ողողւում տարւում, ինչպէս այդ լինում է անտառներում: Տափաստանների կլիման չորային է, ուստի և համարեա ամբողջ բուսահողը, որ գոյանում է խոտից, մնում է գետնի մէջ: Դարերի ընթացքում այնչափ շատ բուսահող է կիտւել այդտեղ, որ սևահողը երբեմն ունենում է մի քանի արշին հաստութիւն:

Վերջապէս՝ Եւրոպայի հարաւային երեք թերակղզիների վերին շերտը բաղկացած է գլխաւորապէս կարմրահողից, որ գոյացել է այնտեղ տարածւած լեռնային տեսակներից—կրաքարերից: Բուսահող այնտեղ շատ չկայ. ձմեռւայ յորդ անձրեւները քշում տանում են բուսահողը: Բայց կարմրահողն էլ, եթէ պարարտացնեն, լաւ բերք է տալիս<sup>1)</sup>:

Մշակովի բոյսերի համար Եւրոպայի կլիման և հողը շատ յարմար են, յատկապէս հացաբոյսերի համար: Սրանցից գարին հասնելու համար ամենաքիչ ժամանակ է պահանջում (50—

տերեւներ. այդ հաստ կեանքները չեն թողնում, որ տերեւների մէջ եղած թացութիւնը գոլորշիանայ: Նրանք դիմանում են չորային օդին, ձմեռն էլ դիմանում են թեթև սառնամանիքների, ուստի և տերեւները չեն թափւում:

<sup>1)</sup> Կարմրահողի գոյնը (կարմիր) առաջ է գալիս այն երկաթային նիւթերից, որ պարունակւում են թէ կրաքարերի մէջ և թէ գետնում, որ առաջ է եկել նրանցից:



60 օր): Գարինն աճում է նոյն իսկ համարեա մինչև 70<sup>0</sup> լաջն. տակ: Աւելի հարաւ՝ դրա վրայ աւելանում են վարսակը և հաճարը: Սրանք ևս հասնում են շատ արագ: Այնուհետև գալիս է ցորենը: Թէպէտ սա աճել կարող է խառն անտառների ամբողջ տարածութեան վրայ, բայց լաւ հունձ տալիս է այն գետինը միայն, որ հարուստ է բուսահողով, և որտեղ ամառը տաք է լինում: Այդ պատճառով էլ մեծ քանակութեամբ ցորեն է մշակւում Ռուսաստանում՝ գլխաւորապէս սեահողի շրջանում, իսկ Արևմտ. Եւրոպայում՝ 55-րդ զուգահեռականից հարաւ: Դանուբեան դաշտավայրերում ցորենի հետ միասին մեծ նշանակութիւն ունի եգիպտացորենի մշակութիւնը, որ աւելի տաք կլիմայ է պահանջում, քան նոյնիսկ ցորենը: Լոմբարդիայի դաշտավայրում (Ապենինեան թերակղզու հիւս. մասում) և Միջերկրականի ծովափնեայ ճահճային տեղերում աճում է նաև բրինձ, որ այստեղ արւեստական ոռոգում է պահանջում:

Մշակովի ուրիշ բոյսերից Եւրոպան հարուստ է յատկապէս պտղատու ծառերով: Սրանցից կեռասենին, խնձորենին և տանձենին աճում են Եւրոպայում ամենուրեք, բացի տունդրաների և փշտերեւ անտառների շրջանից: Արևմտեան և Հարաւ-Արևմտեան Եւրոպայում այս ծառերը յաճախ պատահում են վայրի դրութեան մէջ:

Աւելի շատ տաքութիւն և լոյս է պահանջում խաղողի որթը: Համեմատաբար պակաս դիմացկուն են՝ դեղձի, նշենի, և թզենի ծառերը: Սրանք աճում են գլխաւորապէս Միջերկրականի ափերին՝ մշտադալար ձիթենու հետ: Վերջապէս նարնջենին (ապելսին) և կիտրոնի (լիմոն) ծառերը. սրանք Եւրոպայի ամենաքնքոյշ ծառերն են, բերւած հարաւ-արևելեան Ասիայից. աճում են Միջերկրական ծովի ափերին ամեն տեղ, բայց լաւ բերք տալիս են 40-րդ զուգահեռականից հարաւ միայն: Միջերկրականի ափերին, Ճենովայի ծոցից դէպի արևմուտք և Պիրենէեան թերակղզու հարաւ-արևելեան մասում մշակւում է փիւնիկեան արմաւենի:

Բացի հացաբոյսերից և պտղատու ծառերից՝ Եւրոպայում



մշակում են նաև շատ ուրիշ բոյսեր: Սրանցից նշանաւոր են տակդինները և ցանովի խոտերը: Կարտոֆիլը Եւրոպա է բերւել Ամերիկայից և աճում է ամենուրեք (նոյնիսկ տունդրանների շրջանում): Սովորական ճակնդեղը («տակ») աճում է նմանապէս ամեն տեղ, իսկ շաքարի ճակնդեղը՝ միայն այն տեղում, որ պարունակում է իր մէջ շատ բուսահող, այն էլ այն երկիրներում, ուր ամառը շոգ է լինում: Ցանովի խոտ մշակում և առատ հունձ է տալիս ամեն տեղ, յատկապէս արևմտեան Եւրոպայում. այդտեղ խոտացանքսի վրայ մեծուշադրութիւն են դարձնում (այն դաշտերը, ուր խոտ է ցանած եղել, դրանից յետոյ հացաբոյսերի աւելի լաւ բերք են տալիս):

**ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ:** — Եւրոպայի կենդանիները պատկանում են երկու՝ Եւրոպական-Ասիական և Բևեռային շրջաններին: Եւրոպական-Ասիական շրջանը բռնում է համարեա ամբողջ Եւրոպան, իսկ բևեռային շրջանը՝ միայն մայր ցամաքի հիւսիսային մասը և Սառուցեալ ովկիանոսում գլտնուող կղզիները (Իսլանդիա, Շալիցբերգէն, Նոր երկիր):

Վայրենի կենդանիների կեանքի համար երկու գլխաւոր պայման կայ — առատ սնունդ և հնարաւորութիւն՝ պաշտպանւելու թշնամիներից, որոնցից նրանց համար ամենավտանգաւորն է մարդը:

Եւրոպայի հիւսիսային շրջանի կլիման թէպէտ շատ խիստ է, բայց և այնպէս այնտեղի կենդանական աշխարհը հարուստ է:

Տունդրաներում, յատկապէս Նոր Երկիր և Շալիցբերգէն կղզիների վրայ թափառում են հիւսիսային վայրի եղջերուներ: Գիշատիչներից յաճախ պատահում են բևեռային աղւէսներ և սպիտակ արջեր:

Այդ շրջանում շատ կան նաև սպիտակ կաքաւներ և բևեռային մկներ:

Սառուցեալ ովկիանոսի ափերին բուն են դրել միլիոնաւոր ճայեր: Ովկիանոսի մէջ շատ կան ձկներ, որոնք ծառայում են իբրև սնունդի միջոց թռչունների և կետերի, փոկերի (ծովաշուն) և ծովացուլների համար:



Փշատերեւ ծառերի անտառներում ապրում են եղջերուի զանազան տեսակները, մոյգ-կարմրաւուն արջ, գայլ, աղւէս, սկիւռ, նապաստակ: Թռչուններից բնորոշ են այս շրջանի համար մայրահաւի տեսակները:

Այս բոլոր կենդանիները փշատերեւ անտառներում գտնում են իրենց համար բաւականաչափ սնունդ: Նրանք հեշտութեամբ կարողանում են պաշտպանել իրենց ամենավտանգաւոր թշնամուց՝ մարդուց, որովհետեւ այդ անտառները դեռ ևս սակաւաբնակ են: Այնտեղ այնչափ շատ գազան և թռչուն կայ, որ որսորդութիւնը մինչև այժմ էլ կարևոր զբաղմունք է համարւում այնտեղ:



Նկ. 9. Գառայծ:

նիւրը կտրուած են, եղած գայլերը և արջերը միանգամայն բնաջինջ են արւած: Բարձր լեռներում այստեղ-այնտեղ թափառում են բազմաթիւ քարայծեր և սարի այծեր:

Ռուսաստանի և Արևմտեան Եւրոպայի խառն անտառների շրջանում ապրում են նոյն կենդանիները, ինչ որ փշատերեւ անտառների շրջանում, միայն թէ աւելի պակաս թւով, որովհետեւ այդ անտառները շատ են կտրուած: Արևմտեան Եւրոպայի անտառներում վայրենի կենդանիներ քիչ կան մնացած. մեծ քանակութեամբ միայն սկիւռներ և նապաստակներ կան: Գայլ, արջ մնացել են միայն ամենախուլ անտառներում, գլխաւորապէս Ալպերում, Կարպատեան լեռներում և Բալկաններում: Մեծ-Բրիտանիա և Իրլանդիա կղզիներում, որտեղ համարեա բոլոր անտառ-



Այս բոլոր կենդանիներից սակաւ թւով կան, այն էլ նրա համար, որովհետեւ արգելւած է նրանց որսալ որոշ ժամանակ: Այդ կենդանիները որսալն էլ յատուկ զբաղմունքի աւարկայ չէ, այլ հարուստ մարդկանց համար սոսկ զւաճութիւն, որոնք այդ բանի համար անտառների տէրերին մեծ վարձատրութիւն են տալիս:

Տափաստաններում խոշոր կենդանիներ չկան: Նրանց համար բնորոշ են մանր կրծողները (դաշտային գանազան տեսակ մկներ), որոնք հացաբոյսերով են կերակրւում: Նրանք մեծամեծ փնտաներ են հասցնում, ուստի և մարդիկ աշխատում են ոչնչացնել այդ կենդանիներին: Սակայն այս բանը այնչափ էլ հեշտ չէ, որովհետեւ նրանք ապրում են խորը որջերում: Վերջին ժամանակներս նրանք տարածւել են նոյն իսկ Արևմտեան Եւրոպայում՝ մինչև Հոենոս: Թռչուններից տափաստաններում կան արօսներ,—այն էլ փոքր թւով:


Միջերկրազանի ծովափնեայ երկիրներում մարդիկ սկսել են բնաջինջ անել վայրենի կենդանիներին աւելի վաղ, քան այլ տեղ եւրոպայում, որովհետեւ Քրիստոսի ծննդից դեռ սուաջ այս երկիրները բաւական խիտ ազգաբնակութիւն ունէին: Ներկայումս այնտեղ հազաւադիւտ բան է որևէ վայրենի կենդանի: Գարնանը այնտեղ երևում են չւողթռչունների երամներ, որոնք դիմում են Եւրոպայից դէպի Աֆրիկա, իսկ աշնանը—ընդհակառակը: Գարնանը այդ երամները Միջերկրական ծովի վրայով թռչելիս երբ յոգնում են, նստում են ծովափին ուր որ պատահում է և այդպիսով յաճախ որսորդների բաժին են դառնում:

Բնաջինջ անելով վայրենի կենդանիներին, եւրոպացիները պահում են ընտանի կենդանիներ: Հիւսիսում, տունդրաների շրջանում, որ ծածկւած է մամռով, կարելի է պահել միայն հիւսիսային եղջերու և լծկան շներ: Եւրոպայի մնացած մասերում ընտանի կենդանիներից գլխաւորներն են—եղջիւրաւոր խոշոր կենդանիները (եզ, կով, են), ձին և ոչխարը: Հացահատիկների և խոտի առատութիւնը հնարաւորութիւն է տալիս եւրոպացիներին այդ կենդանիներից պահել անազին քանակութեամբ: Միջերկրականի ափերին, որտեղ ամառը չափազանց չորային լինելու պատճառով փարթամ արօտատեղի-



ներ չկան, ձիու փոխարէն պահում են էշ, իսկ կովի փոխարէն—այծ:

**ԱԶԳԱՅՆԱԿՈՒԹԻՒՆԸ.**—Ազգաբնակչութեան թուով Եւրոպան երկրորդ տեղն է բռնում բոլոր աշխարհամասերի մէջ. ունի 425 միլիոնից աւելի բնակիչ, այսինքն՝ ամբողջ մարդկութեան մօտաւորապէս քառորդ մասը: Թէպէտ Եւրոպայի բնակիչների թիւը երկու անգամ պակաս է Ասիայի բնակիչների թւից, բայց երկու անգամից էլ աւելի խիտ ազգաբնակչութիւն ունի, քան Ասիան:



Նկ. 10. Եւրոպայի ազգաբնակչութեան խտութեան բաշխումը:

Մէկ քառակուսի վերստի վրայ Եւրոպայում միջին հաշուով ապրում են 50 հոգի, իսկ Ասիայում՝ 20 հոգի: Ասիայում ահագին տարածութիւններ են բռնում տունդրաները, չոր տափաստանները և անապատները: Եւրոպայում տունդրաները և չոր տափաստանները քիչ տեղ են բռնում, իսկ անապատ բոլորովին չկայ:

Եւրոպայի տունդրաներում մշտապէս ապրել կարող են միմիայն թափառաշրջիկ-եղջերուապահներ: Այս պատճառով էլ այնտեղ չկան հաստատուն բնակչութիւններ և ճանապարհներ: Եւրոպայի փշատերեւ անտառների շրջանի կլիման բաւական



խիստ է. երկրագործութեամբ այնտեղ թէպէտ պարապել կարելի է, բայց հողը արգաւանդ չէ, քիչ բերք է տալիս: Ուստի այդ շրջանի ազգաբնակութիւնն էլ խիտ չէ: Գիւղեր շատ քիչ կան, այն էլ մեծ մասով գետերի ափին. այս գետերը ծառայում են իբրեւ հաղորդակցութեան գլխաւոր միջոցներ: Մարդիկ զբաղւում են այնտեղ որսորդութեամբ և փայտհատութեամբ:

Այսպիսով ուրեմն, Հիւսիսային Եւրոպան, որտեղ տարածւում են տունդրաներ և փշատերեւ ծառերի անտառներ, նոսր ազգաբնակութիւն ունի:

Եւրոպայի միջին մասը, որտեղ տարածւում են խառն անտառներ և սևահողի տափաստաններ, խիտ ազգաբնակութիւն ունի: Անտառները այս մասում շատ են կտրտւած. նրանց տեղ այժմ տարածւում են մշակւած դաշտեր. տափաստանները համարեա բոլորը հերկած են: Ամեն տեղ ճանապարհներ և բնակութիւններ են գցւած: Մեծ տարբերութիւն կայ այդ կողմից Արևմտեան և Արևելեան Եւրոպայի մէջ:

Արեւելքում, այսինքն Եւրոպական Ռուսաստանում, բնակութիւնները կենտրոնացած են գլխաւորապէս գիւղերում և աւաններում: Այդտեղ է ապրում Ռուսաստանի ազգաբնակութեան մեծագոյն ( $7/8$ ) մասը, որովհետեւ նրա գլխաւոր զբաղմունքն է գիւղատնտեսութիւնը: Թէպէտ Ռուսաստանում քիչ քաղաքներ չկան, բայց նրանք ընկած են իրարից հեռու:

Արեւմտեան Եւրոպայում էլ պակաս թւով գիւղեր և աւաններ չկան, քան Ռուսաստանում, որովհետեւ այնտեղ ևս շատ բնակիչներ զբաղւում են գիւղատնտեսութեամբ: Սակայն բացի դրանից՝ այնտեղ կան նաև շատ քաղաքներ, որոնք իրարից հեռու չեն գտնւում և միացած են երկաթուղիների ցանցով: Քաղաքների ազգաբնակութիւնը խիտ է, մարդիկ ապրում են բազմաշարէ տներում: Շատ քաղաքների ծայրերում գտնւում են գործարաններ, իսկ մէջը՝ բազմաթիւ խանութներ: Առեւտուրը և գործարանային արդիւնագործութիւնը այնտեղ կազմում են քաղաքացի բնակիչների գլխաւոր զբաղմունքները: Արեւմտ. Եւրոպայում այնքան շատ քաղաքներ կան, և սրանք այնչափ



շատ բնակիչներ ունեն, որ մարդկանց թիւը քաղաքներում աւելի է, քան գիւղերում: Այսպէս ուրեմն՝ Արեւմտեան Եւրոպան աւելի խիտ ազգաբնակիչութիւն ունի, քան Արեւելեան Եւրոպան:

Եւրոպայի հարաւում, մերձարեւադարձային կլիմայի տակ, ազգաբնակիչութիւնը կենտրոնացած է գլխաւորապէս ծովափերին և ծովափնեայ դաշտավայրերում, որտեղ կլիման նպաստաւոր է պտղատու քնքոյշ ծառերի համար, և որտեղ կարելի է այգիները արեւստական կերպով ոռոգել: Այդ տեղերում հացի և մրգի բերքը առատ է, զրա համար էլ ազգաբնակչութիւնը խիտ է. ապրում են գլխաւորապէս գիւղերում՝ և աւաններում: Շատ գիւղացիներ պարապում են միմիայն այգեգործութեամբ:

**ԵՒՐՈՊԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ**,—Եւրոպայի ժողովուրդների (թւով 50-ից աւելի) ամենամեծ մասը պատկանում է սլաւոնական ցեղին: Ամբողջ ազգաբնակչութեան  $\frac{1}{20}$  մասը միայն գեղին ցեղին է պատկանում:

Սլաւոնական ցեղին պատկանող բոլոր ժողովուրդները պատկանում են երեք տարբեր ճիւղերի—սլաւոնական, գերմանական և ռոմանական: Թւով նրանք մօտաւորապէս հաւասար են միմեանց:

Սլաւոնական ժողովուրդները, համաձայն իրենց բնակութեան տեղի, բաժանւում են—արեւելեան, արեւմտեան և հարաւային սլաւոնների: Արեւելեան սլաւոնները—ռուսներն են. արեւմտեան սլաւոններն են՝ լեհացիները և չեխերը. հարաւային սլաւոնները՝ սերբերը, բուլղարները և չերնօգորցիները:

Գերման ժողովուրդներ են—գերմանացիները, շվեդները, նորվեգացիները, դանիացիները, հոլլանդացիները և անգլիացիները: Ռոմանական ժողովուրդներ են—ֆրանսիացիները, իտալացիները, իսպանացիները, պորտուգալացիները և ռումինացիները:

Սլաւոն ժողովուրդների լեզուները իրար նման են: Օրինակ, ռուսը կարող է որոշ բառեր հասկանալ լեհերէն, չեխերէն,—առանց սովորած լինելու այդ լեզուները. և ընդհակառակը: Այդ լեզուների նմանութիւնը ցոյց է տալիս, որ սլաւոնական բոլոր ժողովուրդները ծագում են մի հին ժողովրդից (սլաւոն), որ խօսում էր զեռ ճիւղերի չբաժանւած





Նկ. 11. Հիւսիսային եւրոպացի (գերման ց.): Հարուստային եւրոպացի (ռոման ց.)

հին-սլաւոնական լեզուով: Այսպէս նաեւ ռոմանական ժողովուրդները, ինչպէս սլաւոնները, խօսում են նման լեզուներով, որոնք ծագել են մէկ լեզուից—լատիներէնից: Գերման ժողովուրդների լեզուներն էլ իրար նման են, միայն անգլիերէնի մէջ շատ բառեր կան փոխ առած ռոմանական լեզուներից,


Սլաւոն, գերման և ռոման ժողովուրդները, թէպէտ իրար լեզու հասկանալ չեն կարող, բայց և այնպէս նրանց լեզուները ազգակից են իրար, բոլորն էլ շատ հին ժամանակներում ծագել են մէկ լեզուից—հին հնդկերէնից. դրա համար էլ նրանք կոչւում են հնդկա-եւրոպական լեզուներ (Հայերէնն էլ դրանց թւին է պատկանում): Շատ բառերի արմատներ նոյնն են այդ տարբեր լեզուների մէջ<sup>1)</sup>:

Սպիտակ ցեղին են պատկանում նաեւ, յիշած ժողովուրդներից դուրս, յոյները, լիւսացիները և լատիշները: Եւրոպայում բաւական շատ հրէաներ ևս կան, որոնք ցրւած են համարեա ամբողջ Եւրոպայի զանազան կողմերում: Նրանց մեծ մասը սակայն ապրում է Եւրոպ. Ռուսաստանի արեւմտեան մասում:

<sup>1)</sup> Օրինակ, ռուսերէն—мать (матери), գերմաներէն—Mutter, ֆրանսերէն—mère իտալերէն—madre հայերէն—մայր, (հին ձեւ—մատր) բառերը նոյն արմատն ունեն: Ռուսերէն—братъ, գերմաներէն—Bruder, ֆրանս. frère, իտալերէն—fratre; ռուսերէն—три, գերմաներէն—drei, իտալերէն—tre, ֆրանսերէն—trois. Այս բոլոր և ուրիշ շատ բառերի արմատները նոյնն են հնդ-եւրոպական բոլոր լեզուների մէջ:



Վերոյիշեալ բոլոր ժողովուրդները թէպէտ սպիտակ ցեղին են պատկանում, բայց նրանց արտաքին տեսքի մէջ էլի տարբերութիւն կայ: Այսպէս օրինակ, ումանական ժողովուրդները (Հարաւ. Եւրոպա) աւելի ցածրահասակ մարդիկ են, քան գերմանները և սլաւոնները (Հիւս. և Միջին Եւրոպա): Նրանց կաշւի գոյնը աւելի մուգ է, մազերը և աչքերը՝ սև: Իսկ գերմանները և սլաւոնները շիկահեր են, մոխրագոյն աչքերով կամ կապտաչեայ և բաց-գոյն կաշւով: Հիւսիսային և հարաւային եւրոպացու բնաւորութեան մէջ էլ տարբերութիւն կայ: Առաջինները աւելի հանդարտ են, եռանդուն և դիմացկուն. վերջինները՝ յուզող են, դիւրաշարժ և անհաստատ:



Նկ. 12. Կրօնների եւ դաւանութիւնների տարածումը Եւրոպայում:

Դեղին ցեղին պատկանող ժողովուրդներ կան Եւրոպայում, բայց սակաւաթիւ: Նրանցից նշանաւորներն են—Ֆինները, ուրոնք ապրում Ֆիննական ծովի շուրջը, թաթարները (Կազանի) Եւրոպ. Ռուսաստանում. իսկ արեւմտեան Եւրոպայում—մաշարներ (ունգարացիներ) և թիւրքեր (տաճիկներ):

Սպիտակ ցեղին պատկանող ժողովուրդների ամենամեծ մասը, բացառութեամբ հրէաների, հետեւում է քրիստոնէական կրօնին, սակայն տարբեր դաւանութիւններով: Սլաւոնները մեծ մասով ուղղափառ (պրաւօսլաւ) են, ումանական



ժողովուրդները՝ կաթողիկ, գերման ժողովուրդները՝ ըողողական: Դեղին ցեղին պատկանող ժողովուրդների մեծ մասը քրիստոնեայ է. թիւրքերը և թաթարները մահմեդական կրօնին են հետևում:

Եւրոպական պետութիւնների թիւն է 22<sup>1)</sup>: Սրանց մէջ միայն Ռուսաստանին է պատկանում ամբողջ Եւրոպայի կէսից աւելին: Բնակիչների թւով էլ Եւրոպական Ռուսաստանը բարձրը է Եւրոպայի մնացած պետութիւններից՝ առանձին-առանձին վերցրած:

Եւրոպական պետութիւններից վեցը համարւում են մեծ պետութիւններ: Դրանք են՝ Ռուսաստանը, Գերմանիան, Աւստրո-Ունգարիան, Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան: Մնացած պետութիւնները համարւում են երկրորդական, որովհետեւ իրենց բնակիչների թւով և ոյժով շատ յետ են մնում մեծ պետութիւններից:

Կառավարութեան ձևին նայելով՝ Եւրոպայի համարեա բոլոր պետութիւնները սահմանադրական միապետութիւններ են, որտեղ բարձրագոյն իշխանութիւնը բաժանւած է միապետի և ժողովրդական ներկայացուցիչների մէջ: Միայն Ֆրանսիան և Շվեյցարիան հասարակապետութիւններ են:

---

<sup>1)</sup> Եթէ չհաշւենք 4 շատ փոքր պետութիւններ՝ ընդամենը մի քանի վերստ երկայնութեամբ և լայնութեամբ ու 5--15 հազար բնակիչներով:

**Եւրոպական պետութիւնները, նրանց տարածութիւնը և  
ազգաբնակչութեան թիւը.**

| Պետութիւն                         | Տարածութ. (քառ. վեր.) | ազգաբնակչութիւնը |
|-----------------------------------|-----------------------|------------------|
| 1. Եւրոպ. Ռուսաստան <sup>1)</sup> | 4.732.000             | 123.000.000      |
| 2. Աւստրո-Ունգարիա                | 583.000               | 50.000.000       |
| 3. Գերմանիա                       | 475.000               | 63.000.000       |
| 4. Ֆրանսիա.                       | 471.000               | 39.000.000       |
| 5. Իսպանիա.                       | 437.000               | 19.000.000       |
| 6. Շեդիա .                        | 394.000               | 5.300.000        |
| 7. Նորւեգիա                       | 282.000               | 2.500.000        |
| 8. Անգլիա .                       | 277.600               | 45.000.000       |
| 9. Իտալիա .                       | 252.000               | 34.000.000       |
| 10. Եւրոպ. Թիւրքիա                | 149.000               | 6.000.000        |
| 11. Ռումինիա                      | 115.000               | 7.000.000        |
| 12. Բուլգարիա                     | 83.000                | 4.000.000        |
| 13. Պորտուգալիա .                 | 80.000                | 5.000.000        |
| 14. Յունաստան                     | 57.000                | 2.700.000        |
| 15. Սերբիա .                      | 42.000                | 2.700.000        |
| 16. Շէյքարիա .                    | 36.000                | 3.500.000        |
| 17. Դանիա .                       | 35.000                | 2.700.000        |
| 18. Հոլլանդիա                     | 29.000                | 5.700.000        |
| 19. Բելգիա .                      | 26.000                | 7.300.000        |
| 20. Չեքոսլովակիա .                | 8.000                 | 230.000          |
| 21. Կրետէ .                       | 8.000                 | 300.000          |
| 22. Լուքսեմբուրգ .                | 2.500                 | 250.000          |

---

<sup>1)</sup> Կովկասի տարածութիւնն է 415.000 քառ. վերստ, իսկ բնա-  
կիչները թիւը՝ մօտ 10 միլիոն:



## ԲԱՆԿԱՆԵԱՆ ԹԵՐԵԿՂՋԻ

### ԸՆԳՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Բալկանեան թերակղզու հիւսիսային սահման են ընդունում սովորաբար այն կոր գիծը, որ ձգւում է Ֆիուլէ ծոցից՝ (Ադրիատիկ ծովում) Սաւա գետի վրայով դէպի Կարպատեան լեռների հարաւային ստորոտները, իսկ այնտեղից՝ դէպի Դանուբի գետաբերանը:

Հիւսիսային կողմում Բալկանեան թերակղզին լայն է: Հարաւ գնալով՝ նա աւելի ու աւելի նեղ է դառնում, ասիերը չափազանց կտրտւում են: Հարաւային կողմում Բալկանեան թերակղզին շրջապատւած է բազմաթիւ կղզիներով, որոնք է՝ դէյեան ծովում կազմում են մի արշիպելագ՝ Յունական (Յոնիական) անունով: Ամբողջ երկրագնդի վրայ դժւար է գտնել մի ուրիշ վայր, ուր ցամաքը այդչափ շատ թերակղզիների և կղզիների, իսկ ծովը՝ այդչափ շատ ծոցերի և նեղուցների բաժանւած լինէր:

Բալկանեան թերակղզու մակերևոյթը լեռնոտ է: Միայն հիւսիս-արևելեան մասում տարածւում է Ստորին Դանուբեան ընդարձակ դաշտավայրը, իսկ ֆնացած տարածութիւնը համարեաւ ծածկւած է լեռներով. դրանք են՝ Բալկանեան, Սերբ-Մակեդոնական և Դինարեան լեռները:

Ստորին Դանուբեան դաշտավայրը տարածւում Կարպատեան և Բալկանեան լեռների մէջ: Հիւսիս-արևելեան կողմում այդ հարթութիւնը միանում է հարաւ-ուստական հարթութեան հետ: Այդ երկու հարթութիւնները իրենց բնութեամբ շատ նման կողմեր ունեն. երկուսն էլ ծածկւած են նոյն սեւահողի շերտով, նման տափաստաններով:

Ջրառատ Դանուբ գետը ճեղքում-անցնում է Բալկանների և Կարպատների մէջ ընկած «Երկաթի դարպաս» կոչւող կիրճը. այդտեղից նա մտնում է Ստորին-Դանուբեան դաշտավայրը, որտեղ շատ հանդարտ է հոսում: Դանուբի աջ ափը այդտեղ բարձր է, իսկ ձախը՝ ցածր. երբ գարնանը գետը վարարում է, ձախ ափին ընկնող տարածութիւնը տասնեակ վերստերով ջրի տակ է մնում: Դանուբ գետը իր ընթացքի վրայ դէպի Սև ծովը՝ հանդիպում է Դորդուջա կոչւող լեռ-



Նախմբին, որ փոքր տարածութիւն է բռնում և բաղկացած է գրանիտից: Այդ լեռների սահմանը մտնելիս գետը թեքւում է դէպի հիւսիս, ապա բազուկների բաժանելով կազմում է ընդարձակ, ճահճային դելտայ և յետոյ թափւում Սև ծովը:

Բալկանեան լեռները, որոնցից և ամբողջ թերակղզին ստացել է իր անունը, մեծ տարածութիւն չեն բռնում թերակղզու վրայ: Այդ լեռները հիւսիսում մօտենում են Կարպատեան լեռներին. սրանցից բաժանւում են «Երկաթէ դարպաս» կոչւած կիրճով: Այդ տեղից Բալկանները աղեղի ձևով տարածւում են մինչև Սև ծովը՝ 600 վերտ երկայնութեամբ: Այդ լեռների լայնութիւնն է՝ 25—40 վերստ. ամենաբարձրը գագաթները  $2\frac{1}{4}$  վերստից աւելի չեն: Բալկանները ձգւած են շարքերով, բաղկացած են երկայնաձիգ, 2 վերստից բարձր, լեռնաշղթաներից: Այդ լեռնաշղթաների վրայով, բաւական բարձր անցնում են լեռնուղիներ: Դրանցից ամենանշանաւորն է՝ Շիպկայի լեռնուղին, 1 վերստ բարձրութեան վրայ: Ձմեռը, երբ Բալկանները ձիւնով են ծածկւած լինում, հեշտ չէ երթեկել այդ լեռնուղիներով: Բալկանների լանջերի վրայ կանաչին են տալիս մարգագետիններ և աճում խիտ անտառներ: Այդ անտառներում մինչև օրս էլ ապրում են սարի այծեր, վայրի խոզեր (վարազ) և նոյն իսկ արջեր:



Նկ. 13. Տեսարան Դիմարեան լեռների վրայ:

(Նկարի առջևի մասում և հեռւում՝ կրաքարային անպտուղ լեռներ. ներքև, լեռնագոգում, երևում են չերնօգորցիների դաշտեր (քարեայ ցանկապատերով):

Սերբ-Մակեդոնական լեռները տարբերւում են Բալկաններից նրանով, որ լեռնաշարքերից չեն բաղկացած, այլ լեռնախմբերից. նրանք



անկանոն ձևով ցրւած ժայռակոյտերի նմանութիւն ունեն, բաժանւած են իրարից կաթսայանման խոր ցածրութիւններով: Այդ լեռները անտառապատ են (կաղնի, աճաբի և փշատերե ծառեր):

Հարաւային կողմում, Էգէեան ծովի ափերի մօտ բարձրանում են Ուիմպու (մօտ 3 վ.) և Աֆոն (մօտ 2 վ.) սարերը: Սրանց լանջերին աճում են մշտադալար ծառեր—մրտենի, դափնի, օլէանդը. ստորոտներում՝ ձիթենի: Այդտեղ արդէն կլիման մերձարեւադարձային է—ամառը չորային, իսկ ձմեռը՝ մեղմ, անձրեային: Ձիւն դալիս է միայն սարերի գագաթներին: Թերակղզու ներսում, նոյնիսկ կաթսայանման ցածրութիւններում, ձմեռ ժամանակ սառնամանիքներ և ձիւնաբեր մրրիկներ (բուք) են լինում:

Դինարեան լեռները ձգւում են Բալկանեան թերակղզու արեւմտեան մասի ամբողջ երկայնութեամբ՝ 1,500 վերստ տարածութեան վրայ: Հիւսիսում Դինարեան լեռները միանում են Ալպերին. այդ (հիւսիսային) մասում նրանք կոչւում են Դինարեան Ալպեր. իսկ հարաւում կոչւում են Պինդոս և շարունակւում են մինչև թերակղզու ծայրը: Այս մասում նշանաւոր է Պառնաս գագաթը (մօտ 2 $\frac{1}{2}$  վ.): Դինարեան լեռները բարձրութեամբ յետ չեն մնում Բալկաններից, իսկ լայնութեամբ և երկայնութեամբ երկու անգամ աւելի են նրանցից. այնպէս որ Դինարեան լեռները բռնում են ամբողջ թերակղզու համարեա կէսը: Իրենց ամբողջ տարածութեան վրայ այդ լեռները բաղկացած են բազմաթիւ գոլգահեռական շարքերից: Ադրիատիկ և Յոնիական ծովերի ափերին այդ լեռնաշարքերը շատ են մօտենում իրար և այնպէս ուղղաձիգ կերպով իջնում են ծով, որ համարեա կտրում են Բալկանեան թերակղզու հաղորդակցութիւնը՝ յիշած ծովերի հետ:

Դինարեան լեռները տխուր տեսք ունեն: Հազադէպ բան է այնտեղ հանդիպել անտառների, աւելի ևս հազադէպ՝ տեսնել կանաչ մարգագետիններ: Ամեն տեղ բարձրանում են լերկ, մոխրագոյն ապառաժներ, տեղ-տեղ միայն նօսր թփերով ծածկւած: Այս բոլորը նրանից է, որ Դինարեան սարերում լեռնային տեսակներից գերակշռում է կրաքարը, որից հեշտութեամբ է ջուրը ներս անցնում: Ուստի և Դինարեան լեռների մակերևոյթը ջրազուրկ է: Այնտեղով անցնող ճանապարհորդը չէ տեսնում ոչ փոքր ի շատէ մեծ գետեր, ոչ գետակներ, ոչ էլ աղբիւրներ:

Գարնանը միայն, երբ սարերում ձիւնը արագ հալւում է և ժամանակ չի լինում, որ ամբողջ ջուրը գետինը ծծի, գոյանում են գետակներ: Դինարեան լեռներում երբեմն պատահում են ընդարձակ լեռնագոգեր՝ ամեն կողմից լերկ կողերով շրջապատւած. (նրանք այնտեղ «դաշտ» են կոչւում). գարնանը լցւում են ջրով և լճեր գոյաց-



նում: Ամառուայ սկզբին այդ լճերի ջուրը հետզհետե գետին է ծծւում, և լճերն էլ չորանում են:

Այսպէս է օրինակ «Պոպի դաշտը» (Հերցոգովինայում): Գարնանը այդ «դաշտը» ներկայացնում է մի խոր լիճ, 40 վերստ երկայնութեամբ և 5—10 վերստ լայնութեամբ: Ամառը, երբ ջուրը ցամաքում է, լճի յատակը ծածկւած է լինում տիղմով. այդ ժամանակ էլ «դաշտը» վարում են և հացահատիկներ ցանում:

Այսպէս ուրեմն՝ Դինարեան լեռները ընդհանրապէս լերկ են, ամայի: Բայց որոշ տեղերում, ուր այդ լեռները բաղկացած են ոչ թէ կրաքարերից, այլ կաւային թերթաքարերից<sup>1)</sup>, այնտեղ նրանք ծածկւած են փշատերև և սաղարթաւոր ծառերի խառն, խիտ անտառներով: Ծովափերին, լեռների ստորոտներում, ամենուրեք աճում են մշտադաւար թփեր և ծառեր:

Էգէեան ծովի կղզիները—Էւբէան, Կիկլադները և Կրետէն—բոլորն էլ լեռնոտ են, բայց ծովափերին ունեն մերձարևադարձային կլիմայ և մշտադաւար բուսականութիւն: Իրենց ծագման նայելով՝ այդ կղզիները ներկայացնում են մուսցորդներ մի ցամաքի, որ շատ հնումը միացնելիս է եղել Բալկանեան թերակղզին Փոքր Ասիայի հետ:

Ստորերկրեայ ոյժերը, որ պատճառ դարձան Բալկանեան թերակղզին Փոքր Ասիայից բաժանւելուն, շարունակում են գործել նաև ներկայումս: Այս բանը երևում է թերակղզու վրայ յաճախակի կրկնող և աւերիչ երկրաշարժներից, մանաւանդ հարաւում: Կիկլադեան խմբին պատկանող կղզիներից մի քանիսը հրաբխային ծագում ունեն: Սանտորին կղզին հրաբխային է:

Բալկանեան թերակղզու ազգաբնակիւթիւնը բաղկացած է բազմազան ժողովուրդներից. զրանք են՝ բուլգարներ, սերբեր, չերնօգորցիներ, ռումիներ, յոյներ, ալբանացիներ, թիւրքեր (տաճիկներ), կան նաև հայեր: Բուլգարները, սերբերը և չերնօգորցիները սլաւոններ են, ռումիները խօսում են ռումանական լեզուով, որի բառերի կէսը սակայն սլաւոնական է: Տաճիկները կամ թիւրքերը գեղին ցեղին պատկանող ժողովուրդ են, բայց դարերի ընթացքում նրանք այնչափ են խառնւել սպիտակ ցեղին պատկանող ժողովուրդների հետ, որ այժմ նրանց, արտաքին տեսքով, դժւար է բալկանեան միւս ժողովուրդներից ջոկել:

Դաւանութեան նայելով՝ ռումիները, բուլգարները և յոյները ուղղափառ (օրթօդոքս, պրաւօսլաւ) են. սերբերի մի

<sup>1)</sup> Կաւը շատ ջուր է կլանում, նրա միջով ջուրը ներքև չէ անցնում:



մասը ուղղափառ է, միւս մասը՝ կաթոլիկ. թիւրքերը և ալբանացիների մեծ մասը՝ մահմեդական: Մահմեդականներ կան նաև սլաւոնական ժողովուրդների մէջ, որոնց թիւրքերը առաջ ուժով են մահմեդական դարձրել:

Տաճիկները 14-րդ դարում եկան Փոքր Ասիայից և հետզհետէ նւաճեցին Բալկանեան ամբողջ թերակղզին, բացառութեամբ փոքրիկ Չերնօզորիայի: Նրանց տիրապետութիւնը տեւեց մի քանի դար. անցած 19-րդ դարում միայն, Ռուսաստանի ու եւրոպական մի քանի ուրիշ պետութիւնների օգնութեամբ, հետզհետէ ազգային անկախութիւն ձեռք բերին—Յունաստանը, Սերբիան, Ռումինիան և վերջապէս Բոլղարիան:

### ԵՐՐՈՊԵԱՆ ԹԻՐԷԻՆ

Եւրոպական թիւրքիան կազմում է ամբողջ թիւրքիայի տարածութեան  $\frac{1}{12}$  մասը միայն, իսկ բնակիչները՝  $\frac{1}{4}$  մասը: (Յիշել, թէ թիւրքիան Ասիայում լինչ երկիրների է տիրապետում):

Եւրոպական թիւրքիան բաղկացած է երեք գլխաւոր մասերից. զրանք են՝ Ալբանիա, Մակեդոնիա և Թրակիա: Ալբանիան մի վայրի, անպտղաբեր երկիր է. այնտեղով են անցնում կրաքարից բաղկացած Դինարեան լեռները: Մակեդոնիան և Թրակիան բնութեամբ հարուստ երկիրներ են: Այդտեղ գտնւող լեռնախմբերը հարուստ են անտառներով և արօտատեղիներով. կաթսայանման ցածրութիւնները յարմար են երկրագործութեան համար. իսկ ծովափերը, շնորհիւ իրենց մեղմ կլիմայի, յարմար են այգեգործութեան համար:

Եւրոպական թիւրքիան խառն ազգաբնակչութիւն ունի (6 միլ.). նրա  $\frac{1}{4}$  մասը միայն ( $1\frac{1}{2}$  միլ.) թիւրքեր են. մնացած մասը բաղկացած է՝ սլաւոններից (բոլղարներ և սերբեր), ալբանացիներից, յոյներից. կան նաև հայեր:

Այս բոլոր ժողովուրդները զբաղւում են գլխաւորապէս գիւղական տնտեսութեամբ, հերկում են բերրի ցածրութիւնները և ցանում են եգիպտացորեն, ցորեն, ծխախոտ: Լեռնային արօտատեղիներում արածեցնում են ոչխար և այծ. էգէեան ծովի ափերին մշակում են՝ ձիթենի, խաղողի որթ և պտղատու ծառեր:



Թիւրքիայի զանազան ժողովուրդները դարեր շարունակ անընդհատ կուրի և անհաշտութեան մէջ են եղել իրար հետ: Դարերի ընթացքում մահմեդականները—թիւրքերը և ալբանացիները—արհամարհանքով են վերաբերել քրիստոնեաներին, նրանց համարել են իրաւազուրկ, ամեն կերպ ճնշել և կողոպտել են նրանց. միայն վերջերս, սահմանադրութիւնից յետոյ, վերացւած է համարուում այս դրութիւնը:

Ժողովրդական կրթութիւնը Թիւրքիայում գտնուում է ամենախղճալի դրութեան մէջ. դպրոցներ շատ քիչ կան, ժողովրդի մեծ մասը խարխափում է տգիտութեան մէջ (յետամնաց են մանաւանդ, վայրենութեան չափ, ալբանացիները):

Այս ամենի պատճառով տնտեսութեան բոլոր ճիւղերը Եւրոպական Թիւրքիայում չեն զարգացել, այլ կանգ են առել: Եղած արդիւնաբերական ձեռնարկութիւններն էլ օտար երկրացիների ձեռքում են գտնուում: Պետութեան եկամուտներից շատերը, օրինակ ծխախոտի հարկը, օտար պետութիւններին են տրուում, իհաշիւ նրանցից վերցրած պարտքի: Թիւրքիայի պետական պարտքը ահագին չափերի է հասնում:

Կառավարութեան ձեւին նայելով՝ Թիւրքիան կայսրութիւն է, որի գլուխ է կանգնած փազիշահը կամ սուլթանը. Սա համարուում է միաժամանակ երկրագնդիս բոլոր սիւննի-մահմեդականների կրօնապետ:

Սուլթանները մինչև 1908 թւականը ինքնակալ միապետներ էին. բայց այդ թւականի յուլիս ամսին յեղաշջում տեղի ունեցաւ Թիւրքիայում, հաստատուեց սահմանադրութիւն. այժմ սուլթանը սահմանադրական միապետ է:

Թիւրքիայի մայրաքաղաքն է՝ Կոստանդնուպոլիսը, որ գտնուում է Բոսֆորի ափին—Ասիայի ու Եւրոպայի սահմանում: Կ. Պոլսի դիրքը շատ յարմար է. այս պատճառով էլ նա դեռ հին ժամանակներում աչքի ընկնող դեր էր խաղում առևտրի մէջ: Ներկայումս էլ Կ. Պոլիսը առևտրական նշանաւոր կենտրոն է և նաւահանգիստ ոչ միայն Թիւրքիայի, այլ նաև ամբողջ հարաւ-արևելեան Եւրոպայի համար: Նրա բնակիչների թիւը մէկ միլիոնից աւելի է, որից մօտաւորապէս  $\frac{1}{3}$ -ը թիւր-



քեր են, իսկ մնացածները՝ յոյներ, հայեր (մօտ 150,000) և ծառերկրացիներ:

Կոստանդնուպոլիսը թիւրքահայերի մտաւոր կենտրոնն է: Այնտեղ հայերը ունեն բազմաթիւ տարրական և երկու միջնակարգ դպրոցներ: Այդտեղ լոյս են տեսնում բաւական թւով հայերէն օրաթերթեր, հանդէսներ և զրքեր: Այդ քաղաքում կան նաև հայկական հիւանդանոց, բարեգործական և ազգային ուրիշ հաստատութիւններ: Թիւրքահայերը իրենց ազգային գործերը կառավարում են ինքնավար կերպով, համաձայն առանձին սահմանադրութեան: Ազգային գործերը կառավարելու համար ընտրւում է «ազգային վարչութիւնը», որի գլուխ է համարւում թիւրքահայերի պատրիարքը. նա նստում է Պոլսում, որտեղ է գտնւում նաև ազգային վարչութիւնը:



Նկ. 14. Կոստանդնուպոլիս: Յեկեւում երեւում է Բոսֆոր (որտեղ նաւեր են կանգնած), իսկ ձախ կողմում Ոսկեղջիւր (որի վրայ կամուրջ կայ):

Կ. Պոլիսը գտնւում է աշխարհիս ամենալաւ նաւահանգստներից մէկի՝ Ոսկեղջիւրի ափերին: Բոսֆորն է գոյացրել այդ ծովախորշ-նաւահանգիստը (Եւրոպ. ցամաքի վրայ): Ոսկեղջիւրը բաժանւում է քաղաքը երկու մասի—հարաւային և հիւսիսային: Ամեն մէկն էլ բաժան-

ւում է շատ թաղերի: Հարաւային մասը գլխաւորապէս թիւրքաբնակ է. նշանաւոր քաղաքամասն է Ստամբուլը: Այստեղ են գտնուում մեծ մզկիթներ, որոնցից ամենանշանաւորն է «Այա-Սոֆիա» (Սուրբ Սոֆիա) մզկիթը, որ առաջ քրիստոնէական (յունական) եկեղեցի է եղել: Մի շարժական կամուրջ միացնում է Ստամբուլը քաղաքի հիւսիսային մասի հետ, որի բնակիչները մեծ մասամբ քրիստոնեաներ են: Այդտեղ է գտնուում Գալատա քաղաքամասը, ուր կետրոնացած է առևտուրը և և գլխաւորապէս յոյների, հայերի ու եւրոպացիների ձեռքում է գտնուում: Քաղաքի հիւսիսային մասում է գտնուում նաև Պերա անունով քաղաքամասը, որի բնակիչներ գլխաւորապէս եւրոպացիներ և այլ քրիստոնեաներ են:



Նկ. 15. Այա-Սոֆիա մզկիթը և Պոլսում:

Հոյակապ է Կ. Պոլսի ընդհանուր տեսարանը ծովից՝ իր բազմաթիւ մզկիթներով և բարձր մինարէթներով, ընդարձակ նաւահանգստով, ուր կանգնում և շարժւում են բազմաթիւ նաւեր: Սակայն քաղաքի ներսը շատ կեղտոտ է, մանաւանդ Ստամբուլը. փողոցները նեղ են, ծուռ-մուռ, աղբոտ. բազմաթիւ շներ էլ թափառում են փողոցներում:

Եւրոպական թիւրքիայում բնակիչներին թուով (130 հազ.) երկրորդ քաղաքն է Սալոնիկ, տմենալաւ նաւահանգիստը Էգէ-եան ծովի ափին: Սալոնիկը երկաթուղու գծով միացած է Կ. Պոլսի և Սերբիայի մայրաքաղաք Բելգրադի հետ: Մնացած քաղաքներից նշանաւոր են—Ադրիանապոլիս՝ Թրակիայում,



Մոնաստիր՝ Մակեդոնիայում, Եանինա՝ Ալբանիայում: Սրանք մեծ քաղաքներ չեն, — իւրաքանչիւրը հազիւ մի քանի տասնեակ հազար բնակիչ ունի:

## Բ Ո Ւ Գ Ը Ր Ի Ը

Բուլգարիան բռնում է Ստորին-Դանուբեան դաշտավայրի հարաւային ծայրերը, Բալկանեան լեռները (բացի նրանց արեւմտեան ծայրերից) և Բալկաններից դէպի հարաւ տարածւող ցածրութիւնը, որ կոչւում է Արևելեան Ռումելիա:

Բուլգարիայի հարթութիւնները թէպէտ ընդարձակ չեն, բայց արգաւանդ են: Լեռները անտառներով են ծածկւած և հարուստ են զանազան տեսակ մետաղահանքերով, մանաւանդ պղնձի հանքերով:

Ազգաբնակչութեան ահագին մեծամասնութիւնը ( $\frac{3}{4}$ -ից աւելին) ընդարններ են: Կան նաև բաւական թւով տաճիկներ (500 հազ.) իսկ փոքր թւով՝ ուլմախներ, յոյներ, գընչուներ, հրէաներ և հայեր:



Նկ. 16. Վարդափաղ Տունժայի գետնալուսում:

Ժողովրդի մեծ մասը պարապում է երկրագործութեամբ: Հիւսիսային Բուլգարիայում ցանում են՝ ցորեն և եգիպտացորեն: Արևելեան Ռումելիայում բացի դրանցից ցանում են նաև բրինձ և բամբակ: Հիւսիսում մշակում են սալորի ծառ, իսկ հարաւում, Տունժա և Մարիցա գետերի հովիտներում, շատ է



տարածւած վարդի մշակութիւնը, վարդից պատրաստում են թանգարժէք «վարդի իւղ»:

Բացի գիւղական տնտեսութիւնից՝ Բոլգարիայում հնուց սկսած զարգացած է տնայնագործութիւնը (տնային մանր արդիւնագործութիւնը, արհեստները): Տներում պատրաստում են՝ կտաւ, մահուդ, մորթ գորգ, որոնք յայտնի են ամեն տեղ Բալկանեան թերակղզում:

Բոլգարները բարեկեցիկ կեանք ունեն. գիւղացիների մեծ մասը սեփական հող ունի և նրա մշակութիւնից բաւական չափով եկամուտ է ստանում:

Ժողովրդական կրթութեան կողմից Բոլգարիան մեծ առաջադիմութիւն է ցոյց տւել, համեմատած բալկանեան միւս պետութիւնների հետ, թէպէտ ամենից ուշ է ազատւել տաճկական լծի տակից (1878 թ.): Բոլգարները շատ թւով դպրոցներ ունեն: Տարրական կրթութիւնը ձրի է և պարտադիր՝ ամենքի համար. բայց որովհետև դպրոցները շատ վաղուց չէ որ հիմնւել են, ուստի և անգրագէտ մարդիկ բոլգարների մէջ դեռ ևս շատ կան:

Բոլգարիան սահմանադրական թագաւորութիւն է. թագաւորի իշխանութիւնը սահմանափակւած է ժողովրդական ներկայացուցչութեամբ, պարլամենտով, որ բոլգարները «Ազգային ժողով» են կոչում:

Բոլգարիայի մայրաքաղաքն է՝ Սոֆիա. սա գտնւում է երկրի արեւմտեան մասում, Բալկաններից հարաւ՝ մի լեռնագոգի մէջ: Սոֆիան երկաթուղով միացած է Կոստանդնուպոլսի ու Եւրոպական ուրիշ կենտրոնների հետ: Սոֆիայում կայ համալսարան: Մնացած քաղաքներից նշանաւոր են. Ֆիլիպպոպոլ՝ Մարիցա գետի վրայ: Սա Արևելեան Ռումելիայի գլխաւոր քաղաքն է և առևտրական կենտրոնը: Ռուշչուկ—նաւահանգիստ է Դանուբի վրայ. Վառնա և Բուրգաս—նաւահանգիստներ են Սև ծովի վրայ:

## Ս Ե Ր Բ Ի Ա

Սերբիան լեռնոտ երկիր է: Միայն հիւսիսային մասում, Դանուբի և նրա վտակ Սաւայի ափերին, տարածւում են բլրաշատ հարթութիւններ:



Հիսախային հարթութիւնը Սերբիայի շտեմարանն է։ Այդ ամբողջ հարթութիւնը մշակւած է։ Այդտեղ ամենուրեք տարածւում են ցորենի և եգիպտացորենի արտեր, խաղողի և այլ պտղատու ծառերի այգիներ։ Այդ այգիներում մշակում են մանաւանդ սալորենի, որ շատ առատ բերք է տալիս Սերբիայում։

Որքան աւելի դէպի հարաւ ենք դնում, այնքան աւելի էլ Սերբիական հարթութիւնը բլրաշատ է դառնում, իսկ աւելի ևս հարաւ արդէն տարածւում են լեռներ։ Այդ մասում արտերի և այգիների փոխարէն տարածւում են կաղնու խիտ անտառներ և լեռնային կանաչ արօտատեղիներ։ Այդ արօտատեղիներում արածում են ոչխարի և այծի հօտեր ու խոզի երամակներ։ Անասնապահութիւնը սերբերի գլխաւոր զբաղմունքն է. պահում են շատ խոզ։

Սերբիայի լեռները հարուստ են մետաղներով. չնայած դրան, հանքագործութիւնը և արդիւնագործութիւնը զարգացած չեն այդ երկրում։

Սերբերն ևս բոլգարներին նման քարեկեցիկ կեանք են անցկացնում։ Նրանք մեծ քանակութեամբ հացահատիկ և անասուն (մանաւանդ խոզ) են արտահանում, գլխաւորապէս դէպի Աւստրո-Ունգարիա։

Ժողովրդական կրթութեան կողմից սակայն, սերբերը յետ են մնացել բոլգարներից, անգրագէտների թիւը նրանց մէջ շատ է։


Կառավարութեան ձեին նայելով՝ Սերբիան սահմանադրական միապետութիւն է. թագաւորի իշխանութիւնը սահմանափակւած է պարլամենտով («սկուպշինա»)։

Սերբերը 15-րդ դարի կէսից ընկան թիւրքական լծի տակ. նրանք անընդհատ կռիւներ մղեցին իրենց ազատութեան համար, որ և ձեռք բերին 1815 թւականին։

Ազգաբնակչութեան մեծ մասը ապրում է այգեշատ գիւղերում։ Քաղաքներ շատ քիչ կան Սերբիայում։ Սերբիայի ամենամեծ (70 հազար բնակիչ) և ամենանշանաւոր քաղաքն է՝ պետութեան մայրաքաղաք Բելգրադը։ Բելգրադի դիրքը գեղեցիկ է. գտնւում է Դանուբ գետի բարձրագիւր ափին, —

այնտեղ ուր Սաւա վտակը թափւում է Դանուբ գետը: Բեկ-գրադով է անցնում Վեննա քաղաքից դէպի Սոֆիա և Կոստանդնուպոլիս տանող երկաթուղային գիծը:

Բեկգրադում կայ համալսարան:



Նկ. 17. Բեկգրադ:

Սերբիայի միւս նշանաւոր քաղաքն է՝ Նիշ, որ գտնւում Մորաւա գետի և յիշած երկաթուղային գծի վրայ: Այդտեղից երկաթուղու մի ճիւղ է գցած մինչև Սալոնիկ քաղաքը (Եւրոպ. Թիւրքիայում):

## Չ Ե Ր Ն Յ Փ Ո Ր Ի Ա

Չերնօգորիան բռնում է Դինարեան Ալպերի հարաւային մասը: Այդ լեռները Չերնօգորիայում հասնում են մինչև  $2\frac{1}{2}$  վերստ բարձրութեան: Չերնօգորիան Բալկանեան թերակղզու ամենաանմատչելի, վայրի և ոչ-բերրի մասերից մէկն է: Ամբողջ երկիրը լեռնոտ է. համարեա բոլոր լեռներն էլ կրաքարերից են բաղկացած և զուրկ են բուսականութիւնից: Չերնօգորիայի միայն արևելեան կողմում գտնւում են կաւային թերթաքարերից բաղկացած լեռներ, որոնք ծածկւած են կաղնու և աճարի անտառներով:



Չերնօգորիայի բնակիչները՝ չերնօգորցիները՝ բարձրահասակ, ամրակազմ ժողովուրդ են, խօսում են սերբերէն: Նրանք շատ խեղճ կեանք են անց կացնում, որովհետեւ երկիրը աղքատ է: Զբաղւում են անասնապահութեամբ:

Երկրագործութեամբ պարապել կարելի է միայն լեռնագոգերում և գետակների հովիտներում: Արեւելեան մասում, որտեղ հողը մի փոքր բերրի է, չերնօգորցիները պահում են եղներ և ձիեր, որոնց օգնութեամբ մշակում են հողը: Այնտեղ, բացի գրանից, մշակում են պտղատու ծառերի այգիներ: Արհեստներով չերնօգորցիները համարեա բոլորովին չեն պարապում:

Կառավարութեան ձեռն նաշելով՝ Չերնօգորիան մինչև 1910 թւականի օգոստոս ամիսը իշխանութիւն էր. իսկ այդ ժամանակահատից սկսած Չերնօգորիայի պետը թագաւոր տիտղոսն է կրում:

Չերնօգորցիները ազատասէր և պատերազմասէր ժողովուրդ են: Դարերի ընթացքում այս փոքրիկ ժողովուրդը (230 հազ.) ալբանացիների, իտալացիների և մանաւանդ թիւրքերի յարձակումներից քաջաբար պաշտպանել է իր հայրենիքը, որ բնութիւնից կարծէք մի անառիկ բերդ լինի: Չերնօգորցիները ապրում են ցրւած, իրարից հեռու գտնուող գիւղերում. քաղաքներ չկան այնտեղ: Նոյն իսկ պետութեան կենտրոնը և մայրաքաղաքը Յետինիէ—ընդամենը 3 հազար բնակիչ ունի:

Չերնօգորիային է պատկանում նաև Աղբրատիկ ծովի ափի մի նեղ շերտը՝ Անտիվարի նաւահանգստով:



Նկ. 18. Չերնօգորցիներ:



## Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա Ն

Յունաստանը բռնում է Բալկանեան թերակղզու հարաւային մասը, Մորէա թերակղզին ու Էւբէա, Կիկլադեան և Յոնիական կղզիները:

Յունաստանի քնովթինը բաւական աղքատ է: Հիւսիսային ծայրից մինչև հարաւային ծայրը տարածւում է Դինարեան լեռների շարունակութիւնը կազմող Պինդոս լեռնաշղթան, որ կրաքարերից է բաղկացած և բերրի չէ:

Արգաւանդ վայրեր Յունաստանում քիչ կան. զրանք գտնւում են կաթսայանման լեռնագոգերում, օրինակ Թեսալիայում. արգաւանդ են նաև ծովափերը, որտեղ լեռները չեն հասնում մինչև ծով:

Ծովափերը Յունաստանի ամենալաւ մասերն են:

Այդ վայրերի կլիման մեղմ և յարմար է պտղատու նուրը ծառեր աճեցնելու համար, այդտեղ մօտ է նաև ծովը. իսկ վերջինս ծառայում է իբրև հաղորդակցութեան գլխաւոր միջոց Յունաստանի համար:

Այս է պատճառը, որ յոյները ապրում են գլխաւորապէս ծովափերին: Նրանց գլխաւոր զբաղմունքն է այգեգործութիւնը:

Ամենից աւելի մշակում են նրանք ձիթենի և խաղողի որթ, ապա նաև թղենի, նոնենի, նարնջենի և այլն: Զիթենու այգիները նրանք վարում են և ծառերի տակ ցանում են հացահատիկներ, կամ բանջարանոցներ են դրում:

Շրկրագործութեան համար քիչ տեղ կայ Յունաստանում:

Այդ զբաղմունքը ծաղկած է միայն Թեսալիայում. այդտեղ յոյները ցանում են՝ ցորեն, ծխախոտ և եգիպտացորեն: Սակայն յոյներին չեն բաւականացնում իրենց երկրից ստացւող հացահատիկները, ուստի և նրանք հացահատիկի մի մասը գնում են օտարներից:

Յոյների համար ահագին նշանակութիւն ունի ծովը: Այդտեղ նրանք որսում են ձուկ և ձեռք են բերում սպունդ: Սակայն ծովի գլխաւոր նշանակութիւնը կղզիներում և ծովափերում ապրող յոյների համար այն է, որ նրանք ծովով հաղորդակցութիւն են պահպանում իրար հետ: Հին ժամանակներում արդէն յոյները յայտնի ծովագնացներ էին:

Ներկայումս էլ յոյները շատ շոգենաւեր և, մանաւանդ,



մեծ թւով առագաստանաւեր ունեն, որոնցով նրանք երթեկում են ամբողջ Միջերկրական ծովի վրայ և առետրով զբաղւում: Առետրի մէջ յոյները բնածին ընդունակութիւններ ունեն:

Յոյները առանձնապէս մեծ ծառայութիւն են մատուցել ժողովրդական կրթութեան ասպարիզում: Յունաստանում են սկիզբ առել համարեա եւրոպական բոլոր գիտութիւնները (որոնց թւում և աշխարհագրութիւնը): Յունաստանն է եղել նաև գեղարւեստների որրանը: Ներկայումս էլ ժողովրդական կրթութիւնը Յունաստանում աւելի է տարածւած, քան բալկանեան միւս ժողովուրդների մէջ:

Գիտութիւնները և գեղարւեստները պատմութեան հին շրջանում իրենց զարգացման գագաթնակէտին հասան յոյն ժողովրդի մէջ: Յունական կրթութիւնը յետոյ Հռոմի վրայով անցաւ Արեւմտեան Եւրոպայի ազգերին, իսկ Բիւզանդիոնի (Կ. Պոլիս) վրայով՝ արևելեան ազգերին, որոնց թւում նաև մեզ, հայերիս: Հայոց գրերի գիւտը, մեր գրականութեան և գպրոցների ծաղկումը 5-րդ դարում (Թարգմանչաց օրով) գլխաւորապէս յունական կրթութեան արդիւնք էին:

Հին Յունաստանում բարձրագոյն ծաղկման հասաւ մանաւանդ քանդակագործութիւնը, որի համար իբրև լաւ նիւթ ծառայում էր Յունաստանի զանազան վայրերից ձեռք բերող ընտիր մարմարը: Հին յոյների կառուցած մարմարեայ տաճարները և արձանները մինչև օրս էլ համարւում են սքանչելի գործեր և ընդօրինակելու արժանի:


Յետագայում, երբ տեղի ունեցան բազմաթիւ աւերիչ պատերազմներ, երբ յոյները տաճիկների իշխանութեան տակ ընկան, յունական կրթութիւնն էլ ընկաւ. բազմաթիւ տաճարներ և արձաններ կործանւեցին և ոչնչացան. սրանց մի մասն էլ կողոպտւեց և այժմ պահւում է եւրոպական թանգարաններում (գլխաւորապէս Լոնդոնում):

Մօտ 80 տարի մեզնից առաջ (1829 թ.) յոյները թօթափեցին թիւրքական լուծը և ձեռք բերին անկախութիւն:

Յունաստանը սահմանադրական թագաւորութիւն է: Թագաւորի իշխանութիւնը սահմանափակւած է պարլամենտով: Երկրի մայրաքաղաքն է՝ Աթէնք (140 հազար բն.): Աթէնքը շատ հին քաղաք է: Այգտեղ, մի բարձր բլրի վրայ, պահպանւել են քաղաքի Ակրօպոլ կոչւող հինաւուրց ամրոցի աւերակները՝ հեթանոսական ժամանակից մնացած մարմարեայ տաճարների բեկորներով:



Աթէնքի նաւահանգիստն է՝ Պիրէյ, — Էգէեան ծոցի վրայ: Պիրէյը կարեւոր նշանակութիւն ունի իբրեւ կայան՝ Միջերկրանից գէպի Սև Ծով գնացող նաւերի համար: Միւս նշանաւոր նաւահանգիստներն են՝ Պատրաս (Պատրասի ծոցի վրայ) և Կորֆու (Կորֆու կղզու վրայ): Այս երկու նաւահանգիստներն էլ գտնոււմ են արգաւանդ ծովափերի վրայ, խաղողի այգիների և ձիթենու պուրակների մէջ: Այդ նաւահանգիստներով են արտահանոււմ ձիթենու իւղ և չամիչ: Այդ նաւահանգիստներից մինչև Պիրէյ ճանապարհը կարճացնելու նպատակով յոյները Կորնթոսի ճանապարհի վրայ փորել են ջրանցք:



Նկ. 19. Աթէնքի ակրօպօլը:

ԿՐԵՏԷ ԿՂԶԻՆ իր բնութեամբ նման է Յունաստանի հարաւային մասին՝ Մօրէա թերակղզուն: Կրետէի վրայ շարունակոււմ են Յունաստանի յոյն անպտուղ լեռները: Արգաւանդ են կղզու միայն ծովափնեայ մասերը, մանաւանդ հիւսիսային կողմում: Ազգաբնակչութեան ամենամեծ մասը յոյներ են: Կառավարութեան ձևին նայելով՝ Կրետէն մի ինքնավար երկիր է, որ գտնոււմ է թիւրքաց սուլթանի գերիշխանութեան տակ: Կղզու յոյն բնակիչները ձգտոււմ են վերջնականապէս և բոլորովին ազատել թիւրքական գերիշխանութիւնից և իրենց հայրենիքը միացնել Յունաստանին:



Ռուսիներն<sup>1)</sup> բռնում է Կարպատեան լեռների հարաւարեւելեան լանջերը և Ստորին-Դանուբեան հարթութիւնը: Ռուսիներն բաղկացած է երեք մասերից. 1. Վալախիա, որ տարածւում է Ստորին-Դանուբեան հարթութեան վրայ, 2. Մոլդաւիա, որ բռնում է Կարպատների և Դանուբի միջև ընկնող տարածութիւնը (Ռուսական հարթութեան ծայրը), և 3. Դոբրուջի, որ բռնում է Դանուբի և Սև ծովի միջև ընկնող տարածութիւնը:

Ռուսիայի մեծ մասը հարթ է, որ սևահողով է ծածկւած և շատ արգաւանդ է Կարպատների լանջերին աճում են անտառներ: Այդ լեռների փէշերը հարուստ են աղով և նաւթով, Դանուբ գետը՝ ձկներով:

Ազգաբնակչութեան ամենամեծ մասը ( $\frac{9}{10}$ ) ռումիներ են: Ռումիները զբաղւում են գլխաւորապէս գիւղական տնտեսութեամբ. ցանում են ցորեն և եգիպտացորեն, պահում են եզներ՝ հող մշակելու համար, նաև ոչխար և խոզ: Շատերը պարապում են այգեգործութեամբ: Մշակում են խաղողի որթ և սալորենի:

Կարպատեան լեռների փէշերը հարուստ են անտառներով, որոնցից փայտ են կտրում և վաճառում. նոյն լեռներում կան



Նկ. 20. Ռումին:

<sup>1)</sup> Ռուսիներն ևս շատերը Բալկանեան պետութիւնների շարքումն են դասում:

նաև աղահանքեր ու նաւթահանքեր: Դանուբ գետից բռնում են ձուկ և լաւ ձկնկիրթ են պատրաստում:

Սակայն, բացի երկրագործութիւնից և այգեգործութիւնից՝ մնացած գրադմուկները չեն զարգացած Ռումինիայում: Ռումինները մեծ մասով գիւղացիներ են, ապրում են աղքատ: Հողի մեծ մասը պատկանում է խոշոր կալաժատէրերին, իսկ գիւղացիները շատ քիչ հող ունեն, ուստի և հողը կապալով են վերցնում կալաժատէրերից: Բացի դրանից՝ գիւղացիները վատ են մշակում հողը, երբ երաշտ է լինում՝ գիւղացիները միանգամայն զուրկ են մնում: Նրանք ուտում են գլխաւորապէս բուսեղէն կերակուրներ, որոնցից ամենատարածւածն է «մամալիգա» կոչւած կերակուրը (եգիպտացորենից պատրաստւած ջրալի կերակուր): Յորենը արտահանում են ուրիշ երկիրներ ծախելու:

Ժողովրդական կրթութիւնը Ռումինիայում շատ ցածր է. ժողովրդի  $\frac{3}{4}$  մասից աւելին անգրագէտ է:

Ռումինիան սահմանադրական թագաւորութիւն է: Պետութեան մայրաքաղաքն է՝ Բուքարեստ (300 հազար բնակիչ)—Վալախիայի կենտրոնում. ունի համալսարան: Նշանաւոր առևտրական քաղաքներն են՝ Բրաիլով և Գալաց—Դանուբի վրայ: Մինչև այս նաւահանգիստները գալիս հասնում են ծովային նաւեր, որոնք Արևմտեան Եւրոպայից Ռումինիա են ներմուծում՝ ձոթեղէն, մեքենաներ և գործարանային ուրիշ ապրանքներ. իսկ այգտեղից արտահանում են՝ ցորեն: Բաւական նշանաւոր է նաև Ռուսաստանի սահմանակից Շապսի քաղաքը, Մոլդաւիայի առևտրական կենտրոնը:

## ՆԻՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻՍ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ:—Եւրոպական պետութիւններից ոչ մէկը իր ընտելեան քաղմագանութեամբ չէ կարող համեմատուել Աւստրո-Ունգարիայի հետ: Այդ երկրում գտնւում են թէ՛ երկայնածիփ լեռնաշարքեր, (Աւստրիական Ալպեր,



Դինարեան լեռներ, Կարպատներ), թէ ընդարձակ դաշտավայր (Միջին-Դանուբեան), թէ Ռուսական հարթութեան բարձրադիր ծայրը, և թէ ընդարձակ լեռնաշխարհ (Բոհեմիա):

Աւստրիական կամ Արևելեան Ալպերը բաղկացած են լեռնաշղթաների բազմաթիւ շարքերից, որոնք ձգւում են արևմուտքից արևելք և բաժանւում են իրարից խոր ու երկայնածիղ հովիտներով այդ հովիտներով հոսում են Ինն, Դրաւա, Մուր և ուրիշ գետեր:

Երկայնածիղ հովիտներով Աւստրիական Ալպերը բաժանւում են երեք շարքի—Հիւսիսային, Կենտրոնական և Հարաւային Ալպեր: Հիւսիսային, և Հարաւային Ալպերը բաղկացած են կրաքարերից, իսկ Կենտրոնական Ալպերը՝ բիւրեղացած լեռնային տեսակներից:

Ամենից աւելի բարձր են Կենտրոնական Ալպերը: Սրանց գագաթները, օրինակ՝ Օրտլեր, Մեծ Գլոկներ, համարեա 4 վերստ բարձրութիւն ունեն:

Այդ գագաթները ծածկւած են յաւերժական ձեան զանգւածով. հովիտներով ցած են սահում սառցադաշտեր, որոնցից ջրառատ գետակներ են սկիզբ առնում: Բարձր սարալանջերին տարածւում են հիւթեղ, կանաչ խոտով ծածկւած մարգագետիններ. իսկ նրանցից ցածր աճում են փշատերև ծառերի մթին անտառներ:

Հիւս. եւ Հարաւ. Ալպերը (որոնք կրաքարերից են բաղկացած) թէպէտ իրենց բարձրութեամբ յետ են մնում Կենտրոնական Ալպերից (որոնք բիւրեղացած լեռնային տեսակներից են բաղկացած), բայց աւելի բազմազան ձևի գագաթներ ունեն. դրանց լանջերը աւելի սեպ, ուղղածիղ են, հովիտները՝ աւելի խոր. սակայն այդտեղի բուսականութիւնը աւելի աղքատ է (ինչո՞ւ):

Դինարեան լեռները շարունակութիւն են կազմում Հարաւային կրաքարային Ալպերի: Սկզբի մասում նրանք բարձրաւանդակի տեսք ունեն. այդ բարձրաւանդակը կոչւում է Կարստ: Սա կրաքարային կազմութիւն ունի. մակերևոյթը ծածկւած է լերկ ապառաժներով, կամ խղճուկ մացառներով: Գետնի տակ կան կրաքարային բազմաթիւ այրեր, որոնցով հոսում են ստորերկրեայ գետեր: Այդտեղ է գտնւում երկրազնդի ամենաերկայն քարայրերից մէկը—Ադելսբերգի քարայրը:



Դինարեան լեռներից դէպի արևելք տարածւում են Բոսնիական հանքային լեռները: Սրանք նման են հարեան Սերբիայի լեռներին և ծածկւած են կաղնու անտառներով:

Կարպատները Ալպերի շարունակութիւնն են կազմում: Նրանք աղեղնաձև ձգւած են դէպի հիւսիս-արևելք՝ 1200 վերստ երկայնութեան վրայ. սկսւում են Վեննայի կաթնայանման գոգաւորութիւնից և տարածւում են մինչև «Երկաթի Դարպասը», որտեղ Դանուբ գետը այդ լեռները բաժանում է Բալկաններից: Այդ ամբողջ տարածութեան վրայ Կարպատները բաղկացած են մի շարք լեռնաշղթաներից:

Բալկանների նման՝ Կարպատները անտառապատ լեռներ են: Ամենուրեք նրանց ստորոտներում և հովիտներում կան աճարի և կաղնու խիտ անտառներ, իսկ բարձունքների վրայ տարածւում են մարգագետիններ, որոնք սակայն Ալպեան արօտների պէս թարմ և հիւթաշատ չեն: Պատճառն այն է, որ Կարպատների վրայ աւելի քիչ մթնոլորտային տեղումներ են թափւում, քան Ալպերի վրայ:

Ռուսական հարթութեան այն մասը, որ տարածւում է Կարպատների մօտ, ներկայացնում է մի քարձրաւանդակ. սա ծածկւած է սևահողով և կտրտւած է գետահովիտներով:

Միջին-Դանուբեան կամ Ունգարական դաշտավայրը գտնւում է՝ մի կողմից Ալպերի և Դինարեան լեռների, իսկ միւս կողմից Կարպատեան լեռների մէջ: Այդ դաշտավայրը արգաւանդ է, ծածկւած սևահողով: Նրա ծայրում, լեռների մօտ, աճում են անտառներ. իսկ կենտրոնում, որտեղ կլիման չոր է, գտնւում է Ունգարական տափաստանը: Ունգարական տափաստանով հոսում են՝ Դանուբ գետը և նրա վտակները—Տիսսա, Դրաւա, Սաւա:

Բոհեմիայի լեռնաշխարհը քառանկիւնի ձև ունի, բարձրագիւր ծայրերով. դրանք են—Բոհեմական անտառ<sup>1)</sup>, Սաքսոնական հանքային լեռներ և Սուդետներ: Բոհեմական լեռնաշխարհի վրայ չկան ոչ լեռնաշղթաներ, ոչ փոքրիշատէ բարձր գագաթներ. դա ընդարձակ, ալիքանման քարձրաւանդակ

<sup>1)</sup> «Անտառ», այսպիսի դէպքերում նշանակում է սար. այդպէս են կոչւում այն սարերը, որոնք ամբողջապէս անտառապատ են:



է. կտրուած է — Էլբա, Մուդաւա և Էգեր գետերի խոր հովիտներով:

Բոհեմական լեռնաշխարհի ծայրերը միայն շղթայածե են, կլոր գագաթներով և թեք լանջերով. այդտեղ տարածուած են փշատերև ծառերի անտառներ, նաև մարգագետիններ:

Աւստրո-Ունգարիայի բազմազան մասերը անջատուած չեն իրարից: Դանուբի և նրա վտակների շնորհիւ դժւար չէ հաղորդակցութիւն պահպանել նրանց մէջ: Ունգարական դաշտավայրից գետահովիտներով հեշտ է երթալ թէ դէպի Ալպերը և թէ դէպի Դինարեան լեռները, թէ դէպի Բոհեմական լեռնաշխարհը և թէ դէպի Կարպատները: Դժւար չէ նաև՝ Կարպատների վերայով իջնել Ռուսական հարթութեան ծայրը: Միայն Ադրիատիկի ծովափը կարծէք կտրուած լինի մնացած մասերից՝ ծովափնեայ դժւարանցանելի լեռներով:

Աւստրո-Ունգարիայի ընտանի հարստութիւնները մեծ են: Նրա հարթութիւնները բերրի են, լեռները (բացառութեամբ կրաքարերից բաղկացածների) ծածկուած են մարգագետիններով և անտառներով. երկրի խորքում մեծ քանակութեամբ հանքեր կան:

Աւստրո-Ունգարիայի ընտանի թիւն է մօտ 50 միլիոն. գլխաւոր ժողովուրդներն են՝ սլաւոնական ազգեր, գերմանացիներ և մաջարներ (ունգարացիներ): Սլաւոնական ազգերը կազմում են ամբողջ ազգաբնակչութեան մօտ  $\frac{1}{2}$ -ը, գերմանացիները՝  $\frac{1}{4}$  մասը, մաջարները՝  $\frac{1}{5}$  մասը:

Սլաւոնական ազգերը բաժանուած են երկու խմբի. մի մասը ապրում է հիւսիսում (չեխեր, սլովակներ, լեհեր և ռուսիններ), իսկ միւս մասը՝ հարաւում (սլովէններ, սերբեր և կրօտաներ կամ խրաթներ):

Աւստրո-Ունգարիայում ապրում են նաև բաւական շատ իտալացիներ (Իտալիայի սահմանի մօտերը և Ադրիատիկի ծովափին), ռումիներ (Ռումինիայի սահմանի մօտ), հրէաներ (Ռուսաստանի սահմանի մօտ, ռուսիների և լեհերի մէջ), գնչուներ (ցիգան). սրանք թափառում են գլխաւորապէս Ունգարական դաշտավայրում: Գալիցիայում (Աւստրիական Լեհաստա-







ճառով էլ այնտեղի բնակիչները՝ գերմանացիները և սլովենները՝ զբաղւում են գլխաւորապէս անասնաբուծութեամբ և անտառազործութեամբ:

Այնտեղ ապրող ամեն մի գիւղացի ունի սեփական կովեր, ոչխարներ և այծեր: Գարնանը ալպեան հովիւները դէպի լեռնային բարձրադիր մարգագետիններն են քշում հօտը եւ արածացնում այնտեղ մինչև աշուն. նրանք ամբողջ ամառայ ընթացքում ապրում են լեռնային հիւղերում (խրճիթներում) և պատրաստում են իւղ ու պանիր: Այդ միջոցին հովիտներում տանը մնացած գիւղացիները խոտ են հընձում և ձմեռայ համար պատրաստութիւն տեսնում: Ցանում են հացահատիկներ, թէև փոքր չափով, որովհետև հովիտները մեծ մասով նեղ են, և նրանց կողերը շատ ուղղաձիգ են. ուստի նրանք, անյարմար են մշակութեան համար:

Ապա՝ ալպեան գիւղացիները փայտ են կտրում անտառներում, սղոցում են կտրած գերանները՝ լեռնային գետակների ոյժով գործող սղոցարաններում, կամ գերանները լաստեր կապած գետերի վրայով բերում են անտառազուրկ վայրեր,—գլխաւորապէս դէպի արևելք, Ունգարական դաշտավայրը, կամ դէպի հարաւ,—Իտալիա:

Դինսարեան լեռները ծածկւած են խղճուկ արօտատեղիներով, համարեա զուրկ են անտառներից: Այս լեռների շրջանում ապրող ժողովուրդները—սերբերը և խրւաթները—ունեն նոյն կենցաղավարութիւնը, ինչ որ նրանց ցեղակից չեքնօգորցիները. նրանց գլխաւոր զբաղմունքն է՝ ոչխար և այծ պահելը. դրանով էլ նրանք գլխաւորապէս իրենց խղճուկ ապրուստն են հայթայթում:

Սանձւած, այրւած դէմքերով, հագած իրենց իսկ պատրաստած բրդէ ոչնուրբ, բայց ճաշակաւոր զգեստները, նրանք ժամանակի մեծ մասը անց են կացնում լեռներում, իրենց անասունների հետ միասին:

Երկրագործութեամբ պարապում են միայն «արտեր» կոչւող լեռնագոգերում. այդտեղ նրանք ցանում են ցորեն և եգիպտացորեն:

Աղրիատիկի ծովափին սերբերը և խրւաթները, նաև իտալացիները, մշակում են խաղողի որթ և ձիթենի, արտադրում են գինի և ձիթենու իւղ: Բոսնիական հանքային լեռներում և Սաւայի, Դրինայի ու Բոսնայի արգաւանդ հովիտների մէջ ընկած դաշտերում ցանում են եգիպտացորեն և ցորեն. այգիներում մշակում են սալորենի, որ այդտեղ այնչափ



առատութեամբ է բերք տալիս, որչափ հարեան Սերբիայում: Բազմացնում են խոշոր եղջիւրաւոր կենդանիներ և խոզեր. սրանց կերակրում են լեռները ծածկող կաղնու անտառների մեծաքանակ խոզակաղնով:

Կարպատները հարուստ են անտառներով. այդ պատճառով էլ այնտեղ ապրող սլաւոնները և ռումինները զբաղւում են անտառագործութեամբ:

Աշնանը և ձմեռը նրանք փայտ են կտրում և ամառը գետերով փոխադրում գէպի մերձակայ անտառազուրկ հարթութիւնները: Այն լեռնալանջերը, որտեղ անտառները կտրտած վերջացրած են, նրանք վարում են և ցանում վարսակ ու հաճար: Այդտեղ զբաղւում են անասնաբուծութեամբ. բայց այս զբաղմունքը Կարպատներում չէ կարող ունենալ այն նշանակութիւնը, ինչ Ալպերում (ինչո՞ւ):

Ունգարական դաշտավայրը շատ արգաւանդ է. այդ պատճառով էլ այդտեղ ապրող մաջարները զբաղւում են գլխաւորապէս երկրագործութեամբ:

Դեռ ոչ շատ առաջ Ունգարական տափաստանը ամայի էր, բոլորովին անմշակ. այնտեղ մաջարները արածացնում էին իրենց բազմաթիւ ձիերի ջուկերը, եղների նախիրները և ոչխարների հօտերը. իրենք մաջարներն էլ անց էին կացնում կիսա-թափառաշրջիկ կեանք: Իսկ ներկայումս այդ տափաստանը համարեա ամբողջապէս վարած է. այդտեղ ապրում է խիտ ազգաբնակչութիւն. Ունգարական տափաստանում այժմ տարածւում են ցորենի և եգիպտացորենի արտեր, ծխախոտի տնկարաններ և խաղողի այգիներ: Այդտեղ ամենուրեք զգած են խրճուղիներ և երկաթուղիներ. ամեն տեղ կան իրարից հեռու գտնւող շէնքեր, կան նաև մեծ գիւղեր: Չվարած դաշտեր քիչ կան Ունգարական դաշտավայրում—գլխաւորապէս գիւղերի շրջակայքում. այդտեղ արածում են կալածատէր—մաջարներին պատկանող անասունները:

Ռուսական հարթութեան ծայրում ապրող լեհերը և ռուսիններըն ևս զբաղւում են, ինչպէս մաջարները, գլխաւորապէս երկրագործութեամբ: Յանում են ցորեն և հաճար, բազմացնում են ձիեր և եզներ:

Բոհեմական լեռնաշխարհի ալիքանման հարթութիւնները ծածկւած են աւազոտ հողով: Բայց չնայած դրան՝ այդտեղ ապրող գերմանացիները և չեխերը զբաղւում են երկրագործու-



թեամբ,—նոյն իսկ աւելի յաջող կերպով, քան մաշառները, ռուսիները և լեհերը: Պատճառն այն է, որ գերմանացիները և չեխերը աւելի խնամքով են մշակում հողը, աւելի են պարտացնում, աւելի խորն են վարում և մանրացնում տափանով: Այս պատճառով էլ նրանք հողից աւելի առատ հունձ են ստանում: Համեմատաբար բարձր վայրերում նրանք ցանում են՝ կորեկ, հաճար, վարսակ և գարի. իսկ աւելի ցածր վայրերում ցանում են՝ ցորեն, շաքարի ճակնդեղ, գայլուկ (խմէլ):

Դիւղական տնտեսութեամբ պարապում է Աւստրո-Ունգարիայի բոլոր բնակիչների  $\frac{2}{3}$  մասը:

Հացահատիկ ցանած արտերում հետեեալ տարիները նրանք ցանում են խոտարոյսեր և տակոխներ (կարտոֆիլ և՛ բազուկ, «տակ»): Սրանցով են կերակրում նրանք իրենց անասուններին, որոնց ամենեւին արօտի չեն հանում, որովհետեւ բոլոր դաշտերն էլ ցանած են լինում: Արօտատեղիներ և դուրսը արածող անասուններ պատահում են Բոհեմական լեռնաշխարհի միայն ամենաբարձր, երկրագործութեան համար անյարմար տեղերում և Բոհեմական անտառի ու Սուդետների լանջերում:

Մեծ նշանակութիւն ունի ազգաբնակչութեան համար նաև հանքագործութիւնը, որ զարգացած է գլխաւորապէս Արևելեան Ալպերում, Բոհեմական լեռնաշխարհում և Կարպատներում:

Արևելեան Ալպերում գերմանացիները արդիւնաբերում են մեծ քանակութեամբ բորակ, քարածուխ և երկաթ. մի քանի տեղերում երկաթի հանքերը գտնւում են հէնց լեռների մակերևոյթի վրայ, կազմում են սարալանջեր: Հարաւային Կրաքարային Ալպերում արդիւնաբերւում են սնդիկ և կապար. իսկ Հիւսիսային Կրաքարային Ալպերում, որոնք հարուստ են աղի աղբիւրներով, աղաջուրը գոլորշիացնում են և աղ ստանում:

Բոհեմական լեռնաշխարհում արդիւնաբերւում է բորակ,— աւելի, քան Ալպերում. նաև քարածուխ և երկաթ: Հարաւային Կարպատները հարուստ են երկաթով և ոսկով: Կարպատների հիւսիս-արևելեան փէշերը,— յատկապէս Դնեստրի ակունքների մօտ—հարուստ են նաւթով: Հիւսիսային փէշերում գտնւում են Վելիչկայի շատ հարուստ աղահանքերը:



Մշակողական արդիւնագործութիւնը զարգացած է Աւստրո-Ունգարիայի գլխաւորապէս այն մասերում, որտեղ ապրում են գերմանացիներ եւ չեխեր:

Ալպեան գետերի, յատկապէս Մուրի և Էննսի հովիտներում, քարածուխի և երկաթի հանքերի մօտերքում գերմանացիները հիմնել են շատ գործարաններ. այդտեղ պատրաստում են՝ երկաթուղիների համար ուղիներ, վագոններ և շոգեմեքենաներ. այդտեղ պատրաստւում են նաև մանր գործիքներ—կացին, մանգաղ, գերանդի, (որ հռչակւած է ոչ միայն Աւստրո-Ունգարիայում, այլ նաև Ռուսաստանում): Ալպեան հովիտներում շատ կան նաև մանելու և ոստայնանկութեան (ջուլհակութեան) գործարաններ: Գործարանային արդիւնագործութիւնը աւելի ևս զարգացած է Բոհեմական լեռնաշխարհում: Այդտեղ էլ գերմանացիները և չեխերը մեծ չափերով արտադրում են մետաղէ ապրանքներ և զանազան գործւածքներ: Բացի դրանից՝ մաքուր կաւից նրանք թրծում են ճենապակու ընտիր ամաններ: Սուդետներում ձեռք բերւող մաքուր կւարցից պատրաստում են ապակի և բիւրեղ. բոհեմական բիւրեղը աշխարհահռչակ է: Շաքարի ձախնդեղից պատրաստում են այնչափ շաքար, որ բաւականացնում է Աւստրո-Ունգարիայի բոլոր բնակիչներին: Գարուց և գայլուկից պատրաստում են զարեջուր, որ յայտնի է ամբողջ Եւրոպայում:

Գերմանացիները և չեխերը Աւստրո-Ունգարիայի ամենագործունեայ, ձեռներէց, դրա հետ միասին նաև ամենահարուստ ժողովուրդներն են: Այս առաջնութեան նրանք հասել են շնորհիւ նաև այն բանի, որ նրանց մէջ շատ է զարգացած ժողովրդական կրթութիւնը: Անգրագէտ մարդիկ նրանց մէջ շատ քիչ կան:

Ժողովրդական դպրոցների թիւը մեծ է: Ուսումը նրանց մէջ պարտադիր է ամենքի համար. բոլոր երեխաները առնւազն 6 տարի յաճախում են դպրոց: Բացի դրանից շատերն էլ սովորում են միջնակարգ և բարձրագոյն դպրոցներում: Աւստրո-Ունգարիայի ամենալաւ գիտնականները և գրողները գուրս են գալիս գերմանացիների, չեխերի, մասամբ նաև լեհերի միջից: Իսկ Աւստրո-Ունգարիայի միւս ժողովուրդների մէջ կրթութիւնը առաջ չէ գնացել: Խրաւթների, սերժերի



և ռուսիներ ի մէջ անգրագէտների թիւը աւելի է, քան գրագէտների թիւը: Սրա հետ միասին՝ նրանց կեանքը բարեկեցիկ չէ, նրանք խեղճ են ապրում: Չստանալով հողից ապրուստի համար բաւարար միջոցներ՝ նրանք եկամուտի ուրիշ աղբիւրներ էլ չունեն: Այս պատճառով ամեն գարնան խմբերով ռուսիներ և լեհացի աղքատ գիւղացիներ Գերմանիա են գնում՝ գիւղական աշխատանքներ կատարելու համար. շատ սերբեր և իրւաթներ ընդմիշտ թողնում են իրենց հայրենիքը և Ամերիկա են գաղթում:

Աւստրո-Ունգարիայի ուժեղ ազգութիւնները ճնշում են թույլերին: Զանազան ազգութիւնների մէջ եղած թշնամութիւնը թուլացնում է Աւստրո-Ունգարիայի ոյժը:

**ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՒ ՔԱՂԱՔՆԵՐԸ:**—Աւստրո-Ունգարիան բաղկացած է իրար հետ միացած երկու պետութիւններից—Աւստրիական կայսրութիւնից և Ունգարական թագաւորութիւնից:

Աւստրիայի երկրամասերն են.—բուն Աւստրիա (Վերին և Ստորին), Բոհեմիա, Մորաւիա, Գալիցիա, Տիրոլ, Շտիրիա, Ծովափնեայ երկրամաս և Դալմաթիա: Աւստրիական երկրամասերը երեք կողմից մանգաղի ձևով շրջապատում են Ունգարական երկրամասերը. սրանք են—բուն Ունգարիա՝ Տրանսիլւանիայի հետ միասին, Խրւաթիա և Սլաւոնիա: Բացի դրանից՝ Աւստրիայի և Ունգարիայի ընդհանուր տիրապետութեան տակ են գտնւում Բոսնիան և Հերցոգովինան, որոնք Թիւրքիային էին պատկանում և վերջին ռուս-տաճկական պատերազմի ժամանակ (1878 թ.) գրաւեցին Աւստրո-Ունգարիայի կողմից:

Աւստրո-Ունգարիայի կառավարութեան գլուխ է կանգնած աւստրիական կայսրը, որը միեւնոյն ժամանակ Ունգարիայի թագաւորն է համարւում: Աւստրիական կայսրութիւնը և Ունգարական թագաւորութիւնը կախում չունեն իրարից: Այս պետութիւններից ամեն մէկը ունի իր պարլամենտը<sup>1)</sup> և իր միապետների խորհուրդը: Իսկ նրանց զօրքը ընդհանուր է. միասին են վարում նաև իրենց գործերը օտար պետութիւնների հետ:

<sup>1)</sup> Աւստրիական պարլամենտը կոչւում է «ռայխստաթ»:



Աւստրիական կայսրութեան մայրաքաղաքը և ամբողջ Աւստրո-Ունգարիայի ամենամեծ քաղաքն է՝ Վեննա (մօտ 2 միլիոն բնակիչ)։ Վեննան գտնւում է Դանուբի վրայ, Ալպերի հիւսիս-արևելեան լեռնաշարքի կամ Վեննայի անտառի ստորոտում, Վեննայի մօտ գալիս միանում են Աւստրո-Ունգարիայի զանազան մասերը—Ալպերը, Կարպատները, Բոհեմական լեռնաշխարհը և Ունգարական հարթութիւնը։ Վեննայում հանդիպում են իրար ամբողջ Եւրոպայի համար կարևոր նշանակութիւն ունեցող հետեւեալ երկաթուղային գծերը.—1) Պետերբուրգից և Մոսկւայից դէպի Հռոմ, 2) Պարիզից, Լոնդոնից և Բերլինից դէպի Կոստանդնուպոլիս։ Վեննան ծառայում է իբրև լուսատրութեան կենտրոն ամբողջ Աւստրո-Ունգարիայի համար. նա կենտրոն է նաև արդիւնագործութեան և առեւտրի։ Վեննական մեքենաներ և գործիքներ, վեննական կահ-կարասիներ և արդուզարդի ու մոդայի զանազան առարկաներ այդ քաղաքից արտահանւում են ուրիշ երկիրներ։



Նկ. 22. Ֆիլաուր փողոց Վեննայում։

Վեննայում է գտնւում Մխիթարեան անուանով հայ-կաթողիկ միաբանութեան մի ճիւղը։ Այդտեղ Մխիթարեանները ունեն վանք, գրադարան, տպարան, դպրոց։ Վեննայի Մխիթա-



քեան միաբանութեան դերը մեծ է հայոց լեզուի և գրականութեան ուսումնասիրութեան մէջ: Այժմ էլ այդ նպատակին է ծառայում Վեննայի Միֆթարեանների ձեռքով հրատարակուող «Հանդէս Ամսօրեայ» ամսագիրը:

Պրագա, — գտնւում է էլբայի վտակ Մուդալայի երկու ափերին: Պրագան Բոհեմիայի գլխաւոր քաղաքը և արգիւնաբերական կենտրոնն է. դա Չեխիայի նախկին մայրաքաղաքն է. ունի աւելի քան 40,000 բնակիչ, երկու համալսարան — չեխական և գերմանական:

Պիլզեն — արգիւնաբերական քաղաք է. ունի գարեջրի մեծ գործարաններ:

Կարլսբադ — բուժավայր (կուրորտ) է Էգերի հովտում. հռչակւած է իր հանքային տաք ջրերով. ամեն ամառ Եւրոպայի բոլոր երկիրներից տասնեակ հազարաւոր հիւանդներ են գնում Կարլսբադ բժշկւելու համար:

Բրիւնն — Մորաւիայի գլխաւոր քաղաքը. այդտեղ կան մահուգի մեծ գործարաններ:

Կրակով — գտնւում է Վիսլայի ձախ ափին. Կրակովը լեհական թագաւորութեան նախկին մայրաքաղաքն է. ունի լեհական համալսարան:

Լվով կամ Լեմբերգ — Գալիցիայի գլխաւոր քաղաքը և առևտրական կենտրոնն է:

Կրակով և Լեմբերգ քաղաքներ Լեհաստանի միջնադարեան հայ գաղթականութեան կենտրոններն էին: Այդ գաղթականութիւնը բաղկացած է եղել տասնեակ հազարաւոր հայերից: Այդտեղի հայերը ժամանակի ընթացքում մոռացան իրենց լեզուն, ազգային սովորութիւնները, ընդունեցին կաթոլիկութիւն և ձուլւեցին լեհերի հետ. այժմ այդ քաղաքներում հայկական գաղթականութեան բեկորներն են միայն մնացել:

Իննսբրուկ — Տիրոլի գլխաւոր քաղաքը. այդտեղ են հաւաքւում այն ուղևորները, որոնք Աւստրիական Ալպերն են ուղւում բարձրանալ հիւսիսից: Իննսբրուկը գտնւում է Ինն գետի ափին, խոր հովտում և ձիւնապատ լեռների ստորոտում. այդտեղով է անցնում Հարաւային Գերմանիան Իտալիայի հետ միացնող երկաթուղային գիծը:



Դրաց—Շտիրիայի գլխաւոր քաղաքը և արդիւնաբերական կենտրոնը. յայտնի է երկաթի արդիւնաբերութեամբ, գտնւում է Մուր գետի ափին և Վեննայից դէպի Տրիեստ տանող երկաթուղային գծի վրայ:

Տրիեստ—Աւստրիայի ամենանշանաւոր նաւահանգիստն է: Աւելի հարաւ՝ Աւստրիային են պատկանում մի քանի լաւ նաւահանգիստներ. օրինակ Կատտարօ—Դալմաթիայում: Բայց զրանց նշանակութիւնը մեծ չէ, որովհետեւ հեռու են գտնւում Աւստրիայի գլխաւոր երկրամասերից և նրա մայրաքաղաքից — Վեննայից:

Ունգարական թագաւորութեան մայրաքաղաքն է՝ Բուդապէստ (մօտ 1 միլ. բնակիչներով): Դա բաղկացած է երկու քաղաքներից—Բուդա (Դանուբի աջ, բարձրադիր ափին) և Պէստ (ձախ, ցածրադիր ափին): Բուդա սպէւում է գտնւում Ունգարիայի պարլամենտը. այդտեղ կայ համալսարան: Բուդապէստը յայտնի է երկրագործական և արդիւնագործական ուրիշ տեսակ մեքենաներ պատրաստող գործարաններով:

Սեգեդին և Մարիա-թերեզիօպոլ քաղաքները յայտնի են հացահատիկի առևտրով:

Մաջառական միւս քաղաքները, որոնց թիւը փոքր չէ Ունգարական դաշտավայրի վրայ, մեծ զիւղերի նման են, թէպէտ նրանցից իւրաքանչիւրը մի քանի տասնեակ հազար բնակիչներ ունի. բայց սրանք զբաղւում են գլխաւորապէս գիւղական տնտեսութեամբ. այդ պատճառով էլ տները այդ քաղաքներում փոքր են, շրջապատւած մաւրազներով, գոմերով, ագարակներով և այգիներով:

Արմենիէրշտատ—որ նշանակւում է «Հայաքաղաք» գրտնւում է Տրանսիլւանիայում: Այս քաղաքը հիմնել են միջին դարում հայ գաղթականները, որոնք սակայն ժամանակի ընթացքում ձուլւել են տեղացիների հետ:

Զագրեբ—Սաւայի վրայ. Խրւաթիայի և Սլաւոնիայի գլխաւոր քաղաքն է. ունի խրւաթական համալսարան:

Ֆիումէ—Ունգարական նաւահանգիստ է՝ Ֆիումէ ծոցի վրայ: Դեռ ոչ շատ առաջ Ֆիումէն ձկնորսների գիւղ էր, իսկ այժմ, շնորհիւ այդ նաւահանգիստը Բուդապէստի հետ կապող երկաթուղու, շնորհիւ իր յարմարաւոր նաւակայանի, սա արդէն մրցում է Տրիեստի հետ:



Սարաւո—Բոսնիայի գլխաւոր քաղաքն է. գտնուում է լեռների մէջ, Բոսնա գետի ակունքների մօտ: Այդ քաղաքում եղած բազմաթիւ մզկիթները, մինարէթները և ազմկալի հրապարակները յիշեցնում են այն մերձաւոր անցեալը, երբ այդտեղ իշխում էին թիւրքերը: Այժմ էլ քաղաքի բնակիչների համարեա կէսը կազմում են մահմեդականները. սրանք ամենքը իրենց թիւրք են կոչում, մինչդեռ ծագումով և լեզուով սլաւոններ են:

## Հ Ի Է Յ Յ Ա Ր Ի Ա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ: —Շւէյցարիան լեռնոտ երկիր է: Նրա հարաւ-արեւելեան կողմում բարձրանում են Ալպերը, որոնք բռնում են Շւէյցարիայի ամբողջ տարածութեան կէսից աւելին: Հիւսիս-արեւմտեան կողմում տարածւում է Իւրա լեռնաշղթան: Ալպերի և Իւրայի մէջ տեղում գտնուում է Շւէյցարական բարձրաւանդակը:

Շւէյցարական Ալպերը կազմում են շարունակութիւն Աւստրիական Ալպերի, որոնց գերազանցում են իրենց բարձրութեամբ, գեղեցիկ դիրքով և վեհութեամբ: Իրենց կազմութեան նայելով՝ Շւէյցարական Ալպերը համարեա բոլորն էլ բիւրեղացած լեռնային տեսակներից են բաղկացած:

Ռոնա գետի և Առաջաւոր Հոենսսի հովիտներով Ալպերը բաժանւում են լեռնային երկու շրջանների—հիւսիսային և հարաւային:


Հարաւային շրջանում ամենից աւելի բարձր են Վալլիսեան կամ Պեննինեան Ալպերը, որոնք տարածւում են Ռոնա գետից հարաւ, Իտալիայի սահմանի մօտ: Նրանք ծածկւած են յաւերժական ձեան զանգւածով: Այդտեղից դէպի ցած շարժւում են սառցադաշտեր: Վալլիսեան Ալպերի ամենաբարձր գագաթն է՝ Մոնտէ-Ռոզա. միւս գագաթն է՝ Մատտերհորն: Սա Ալպեան բոլոր լեռնագագաթների մէջ ամենաանմատչելին է.—պատճառն այն է, որ այդ լեռան լանջերը չափազանց ուղղաձիգ են:

Հիւսիսային շրջանում են գտնուում Բերնեան Ալպերը: Թէպէտ սրանց գագաթները, օրինակ՝ Ինզգֆրաուէն աւելի ցածր են քան Մոնտէ-Ռոզան և Մատտերհորնը, բայց իրենց սառցադաշտերով և ձիւնադաշտերով յետ չեն մնում Վալլիսեան Ալպերից:



Մոնտէ-Ռոզա, Մատտերհորն և Իւնզֆրաու լեռնագագաթները բոլորն էլ 4 վերստից աւելի բարձրութիւն ունեն։ Դրանք Նւրոպայի ամենաբարձր լեռնագագաթներն են. իրենց բարձրութեամբ յետ են մնում միայն Մոնբլանից ( $4\frac{1}{2}$ վ.), որ Ալպեան ամենաբարձր լեռնագագաթն է և գտնւում է աւելի արեւմուտք, Փրանսիական հողում։

Շւէյցարական միւս լեռնաշղթաների թւում նշանաւոր է Սէն-Գոթարդը։ Սա շատ բարձր չէ (նրա գագաթները հազիւ 3 վերստի են հասնում), ոչ էլ երկար ձգւած, բայց նշանաւոր է իր դիրքով—գտնւում է Շւէյցարական Ալպերի կենտրոնում։ Սէն-Գոթարդի մօտ են սկիզբ առնում մի քանի գետեր, որոնք հոսում են զանազան ուղղութեամբ, գէպի երեք ծովեր։ Դրանք են—Հռենոս, նրա վտակ Աար, վերջինիս վտակ Ռօյս, որոնք հոսում են գէպի Գերմանական ծովը. Ռոնա գետը, որ հոսում է գէպի Միջերկրական ծովը. Տիչինօ գետը (Պօ գետի վտակներից է) հոսում է գէպի Ադրիատիկ ծովը։



Նկ. 23. Շիլիսեի դղեակը ժրմեւի լճում։

Այս գետերը ջրառատ են (ինչո՞ւ)։ Շւէյցարիայում նրանք արագ են հոսում, կազմում են աղմկայոյզ ջրվէժներ և սահանքներ։ Նաւարկութեան համար այդ գետերը յարմար չեն.



բայց նրանց հովիտները հեշտացնում են հաղորդակցութիւնը լեռների գանազան լանջերի մէջ: Ալպերից դուրս գալով՝ այդ գետերը հոսում են մեծ լճերի միջով. Հոենոսը—Ռոդենի լճի միջով, Ռոյսը—Ֆիրվալդ-Շտետեր, Ռոնան—Ժընևի լճի միջով, Տիչինսն—Լազո-Մաշիօրէ լճի միջով:

Այսպէս՝ Շւէյցարական Ալպերի ընտելիւնը քաղմազան է՝ Մակերևոյթի կազմութեան բազմազանութիւնից է կախած նաև կլիմայի քաղմազանութիւնը:

Զինապատ լեռնագագաթների կլիման շատ խիստ է, իսկ խորը հովիտներում և լճերի ափերին՝ այնչափ մեղմ է, որ այնտեղ հասնում են խաղող և շագանակ: Անձրև և ձիւն Ալպերում շատ է գալիս (ինչո՞ւ), թէպէտ ոչ ամեն տեղ. օրինակ՝ Ռոնայի վերին հոսանքի հովտում, որ ամեն կողմից լեռներով է շրջապատւած, մթնոլորտային տեղումներ քիչ են թափւում:

Մարդկային բնակութեան համար Շւէյցարական Ալպերը, ինչպէս ընդհանրապէս բոլոր բարձր լեռները, յարմար չեն: Զինապատ մասերում ամենեւին բնակութիւն չկայ:

Ժընևի լճից սկսած մինչև Ռոդենի լիճը տարածւում է Միջին Շւէյցարական բարձրաւանդակը:

Այդ բարձրաւանդակը Շւէյցարիայի ամենաշարմար մասն է և ամենից աւելի խիտ բնակութիւն այդտեղ կայ:

Շւէյցարական Իւլլան ընկնում է Շւէյցարական բարձրաւանդակի հիւսիս-արևմտեան կողմում. բաղկացած է կրաքարերից, ուստի և ծածկւած է խղճուկ բուսականութեամբ—ցածրիկ անտառներով և թփուտներով:

Շւէյցարիայի ազգաբնակչութիւնը ( $3\frac{1}{2}$  միլ.) խառն է: 100 հոգուց 70-ը գերմանացիներ են, 22-ը՝ ֆրանսիացիներ, 7-ը՝ իտալացիներ, 1-ը ռոման: Հարաւ-արևմտեան մասում ապրում են ֆրանսիացիները, Ալպերի հարաւային լանջերի վրայ՝ իտալացիները, իսկ մնացած տեղերում՝ գերմանացիները: Ազգաբնակչութեան կէսից աւելին ( $60\%$ ) ըողորակաւ է, կէսից պակասը ( $40\%$ ) — կաթոլիկ:

ՇԻԷՅՑԱՐԱՍՏԻՆԵՐԻ ԶԲԱՆՄՈՒՆՔՆԵՐԸ և ԿԵԱՆՔԸ:— Շւէյցարական Ալպերում ապրող բնակիչները գլխաւորապէս զբաղւում են անասնաբուծութեամբ. մեծ քանակութեամբ ար-



տադրում են ընտիր պանիր և իւղ. Շւէյցարական պանիրը հրուշակած է ամեն տեղ և մեծ քանակութեամբ արտահանւում է ուրիշ երկիրներ:



Նկ. 24. Սլաւոն արօտանկիներ. յեկեւում երեւում է Մասսերորն գագաթը:

Սլաւոն լեռների փէշերի վրայ բացի անասնաբուծութիւնից կարեւոր զբաղմունք է համարւում այգեգործութիւնը: Շւէյցարական մեծ լճերի ափերին փռւած են խաղողի այգիներ:

Շւէյցարական քարձրաւանդակի բնակիչները զբաղւում են երկրագործութեամբ. բայց վերջին ժամանակներս այդ զբաղմունքը սկսում է տեղի տալ անասնաբուծութեան: Հացահատիկների փոխարէն գիւղացիները աւելի սկսում են ցանել խոտաբոյսեր և բազմացնում են կաթնատու կենդանիներ:

Գիւղատնտեսութեան հետ միասին Շւէյցարիայում շատ է զարգացած նաև մշակողական արդիւնագործութիւնը: Հին ժամանակներից սկսած Շւէյցարիայում զարգացած են տնայնագործութեան զանազան ճիւղերը:

Շւէյցարիայում առանձնապէս զարգացել է՝ ժամացոյցի, նաև քամրակէ եւ մետաքսէ գործածքների արտադրութիւնը:

Շւէյցարական գիւղացիները փայտի քանդակներից շնորհալի կեր-



պով պատրաստում են գեղեցիկ զարդարանքներ. գեղջկուհիները պատրաստում են նուրբ և թանգագին ասեղնագործեր: Աւելի նշանակութիւն ունի ժամացոյցի արտադրութիւնը, որ շատ է զարգացած Շէյ-ցարիայի հարաւ-արեւմտեան մասում—Իւրայում և Ժընեի ու Նիւշատեի լճերի մօտերքում: Շէյցարական ժամացոյցները լաւ հոչակ ունեն և վաճառում են երկրագնդի բոլոր կողմերում:

Շէյցարական գեղջկուհիները հնուց արդէն ձեռքի դազգահների վրայ պատրաստում էին բամբակէ և մետաքսէ գործւածքներ, իրեն հում նիւթ գործադրելով ամերիկական բամբակ և իտալական մետաքսաթել: Բայց Շէյցարիայում առաջ շատ չկային գործւածքներ արդիւնաբերող գործարաններ, որովհետեւ այդտեղ քարածուխ չկայ: Վերջերս սակայն քարածուխի փոխարէն Շէյցարիայում սկսեցին օգտուել երկրի արագահոս գետերի և գետակների, նաեւ ջրվէժների ձրիարար մատակարարող ոյժից: Ներկայումս արդէն շատ կան բամբակէ և մետաքսէ գործւածքներ արդիւնաբերող գործարաններ, որոնք ջրով են բանեցւում, ուստի և գործարանային արդիւնագործութիւնը արագ կերպով զարգանում է Շէյցարիայում:

Շէյցարիայի բնակիչների համար ապրուստի կարեւոր միջոց են հայթայթում նաեւ Ճանապարհորդները: Շէյցարիայի գեղեցիկ և վեհապանծ լեռները, նրա մաքուր, առողջարար օդը ամեն տարի գարնանը և ամառը ահագին թւով ուղևորներ են գրաւում դէպի այդ երկիրը—Ֆերմանիայից, Անգլիայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից և նոյն իսկ Ամերիկայից: Իւրաքանչիւր տարի մի քանի հարիւր հազար օտարերկրացի ճանապարհորդներ են այցելում Շէյցարիա, որոնք այդ երկրի բնակիչներին աշխատանք են հայթայթում ու տարեկան այդտեղ թողնում մօտ 250 միլիոն ուրբլի:

Շէյցարական բոլոր քաղաքներում կան բազմաթիւ հիւրանոցներ, որոնք բոլորն էլ ամառը լցւած են լինում ճանապարհորդներով: Ոչ միայն քաղաքներում, այլ նաեւ բոլոր գիւղերում, նոյն իսկ հեռու ընկած վայրերում՝ սարալանջերին ու լեռնուղիների վրայ յաճախ պատահում են հիւրանոցներ: Ամեն տեղ էլ ճանապարհորդները գտնում են յարմարաւոր օթեւան: Բացի ճանապարհորդներից՝ Շէյցարիա են գալիս նաեւ բազմաթիւ հիւանդներ, մանաւանդ թոքախտաւորներ՝ օգտուելու լեռնային մաքուր և կենդանարար օդից: Այս նպատակով լեռնային բարձր, յարմարաւոր վայրերում հիմնւել են շատ բուժարաններ (օրինակ Դաւոսում):

Ճանապարհների հաղորդակցութիւնը Շէյցարիայում շատ




գարգացած է (մասամբ ճանապարհորդների բազմութեան շնորհիւ): Ամեն ուղղութեամբ ձգւած են երկաթուղային գծեր, չընայելով որ վերին աստիճանի դժւար է նրանց կառուցումը լեռներում:

Ամենից նշանաւոր է Սէն-Գոթարդեան երկաթուղային գիծը, որ կտրում է Շւէյցարական Ալպերը՝ հիւսիսից-հարաւ: Այդ գիծը գցւած է Ռոյսի գետահովտով, անցնում է Սէն-Գոթարդ լեռան մէջ 14 վերստ երկայնութեամբ փորած տունելով<sup>1)</sup> դէպի Տիչինոյի հովիտը և այդտեղից էլ՝ դէպի Լաֆո-Մաշիօրէ:

Թէ ինչպէս դժւար գործ է երկաթուղիներ կառուցանելը Ալպերում, այդ կարելի է եզրակացնել նրանից, որ Սէն-Գոթարդի գծի վըրայ գտնւում են 324 կամուրջ և 80 տունել:

Բացի սովորական երկաթուղիներից Շւէյցարիայում կառուցել են բազմաթիւ ատամնաւոր և ծոպանաւոր երկաթուղիներ (ֆունիկուլեօրներ):



Նկ. 25. Փունիկուլեօր Ալպերի վրայ:

Նկ. 25. Փունիկուլեօր Ալպերի վրայ: րանցով ճանապարհորդները կարողանում են ելնել բարձր լեռներ՝ այնտեղից դիտելու շուրջը և հիանալու Ալպեան տեսարաններով: Այդպիսի մի գիծ է կառուցւում ներկայումս նոյնիսկ դէպի Բերնեան Ալպերի գագաթը—Իւնգֆրաուն<sup>2)</sup>:

Ամբողջ Շւէյցարիան կտրուած է բազմաթիւ և յարմարաւոր խճուղիներով: Լճերի վըրայով կատարւում է շոգենաւերի կանոնաւոր երթևեկութիւն:

Շւէյցարացիների ապրուստը շատ լաւ է. նրանք բարեկեցիկ կեանք են անց կացնում: Ժողովրդական կրթութիւնը բարձր զարգացման է հասած շւէյցարացիների մէջ: Ամեն մի, նոյնիսկ յետ ընկած գիւղում տար-

<sup>1)</sup> Վերջերս աւարտած Սիմպլոնի տունելը (Վալլիսեան Ալպերում) 19 վերստ երկայնութիւն ունի:

<sup>2)</sup> Այս ճանապարհների վրայ գնացքները շարժւում են մեծ մասով էլեկտրականութեամբ, որ ձեռք է բերւում ջրվէժների օգնութեամբ:



բական դպրոց կայ, որ սովորաբար ամենալաւ շէնքում է տեղաւորւած լինում: Տարրական դպրոցի դասընթացը վեցամեայ է: Շւէյցարիան եւրոպայի ամենաքաղաքակիրթ երկիրներից մէկն է. ուսումը պարտադիր լինելու պատճառով անգրագէտ մարդ համարեա չկայ այնտեղ: Շւէյցարիայում կան նաև գիւղատնտեսական ու տեխնիքական բազմաթիւ միջնակարգ դըպրոցներ, գիմնազիաներ, բէալական դպրոցներ և այլն: Բարձրագոյն կրթութիւն տալու համար գոյութիւն ունեն վեց համալսարաններ և մի քանի ուրիշ բարձրագոյն դպրոցներ: Այդ համալսարանում և միւս բարձրագոյն դպրոցներում սովորում են զանազան երկիրներից եկած բազմաթիւ ուսանողներ ևս:

**ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՒ ՔԱՂԱՔՆԵՐԸ:**—Շւէյցարիան բաղկացած է 25 փոքրիկ հասարակապետութիւններից, որոնք կոչւում են կանտոններ: Այդ բոլոր կանտոնները զաշնակցելով (միանալով) իրար հետ՝ կազմել են Շւէյցարիայի զաշնակցական հասարակապետութիւնը:

Ամեն մի կանտոն իր ներքին գործերի մէջ ինքնավար է. օրինակ՝ ճանապարհներ զցելը, դպրոցներ պահելը և նման ձեռնարկութիւնները ներքին գործեր են: Այս բաների համար էլ ամեն մի կանտոն հրատարակում է իր համար օրէնքներ: Ամեն մի կանտոն ունի իր բնակիչների կողմից ընտրւած պաշտօնեաներ:

Ամենանշանաւոր կանտոններն են. Բերն—Շւէյցարիայի կենտրոնում. Վալլիս—Ռոնայի հովտում, Գրաուբըինդեն—արեւելեան կողմում: Ամենահին կանտոնները գտնւում են Ֆիրվալդշտետեր լճի շուրջը: Դըրանք են՝ Շւից (որից և ծագում է Շւէյցարիա անունը), Ուրի և Ունտերվալըն: Սրանք 14-րդ դարում ապստամբելով Աւստրիայի դէմ՝ ձեռք բերին անկախութիւն (յիշել Վիլհելմ Տելլի պատմութիւնը): Հետըզհետէ, մինչև 19-րդ դարի սկիզբը, այդ երեք կանտոններին միացան միւս 22 կանտոնները:

Ամբողջ պետութեան վերաբերող գործերի համար (մաքսատներ, պոստ, հեռագիր, երկաթուղի, դրամահատութիւն, զօրք) գոյութիւն ունի առանձին օրէնսդրական հաստատութիւն, որ կոչւում է Դաշնակցական Ժողով: Այս Ժողովի անդամներին ընտրում են բոլոր շւէյցարացիները: Վերոյիշեալ ընդհանուր



պետական գործերը կառավարելու և օտար պետութիւնների հետ յարաբերութիւններ վարելու համար Դաշնակցական ժողովը ընտրում է Դաշնակցական Խորհուրդ (մինիստրների խորհուրդ) և նախագահ (1 տարով) Շւէյցարիայի դաշնակցական հասարակապետութեան համար:



Նկ. 26. Ամբոզ և Բիւրի կանգոնի բաղաձայնների ժողով:

Շւէյցարիայի մայրաքաղաքն է Բերն, որ գտնւում է Աարդետի վրայ: Բերնում են գտնւում Դաշնակցական ժողովը և Դաշնակցական Խորհուրդը. այնտեղ է նստում նաև հասարակապետութեան նախագահը:

Շւէյցարիայի ամենամեծ քաղաքն է Յիւլիխ (մօտ 200 հազար բնակիչ): Յիւլիխն ունի համալսարան, տեխնիքական բարձրագոյն դպրոց, միջնակարգ և տարրական բազմաթիւ դպրոցներ: Դպրոցների համար յատկացւած են քաղաքի ամենալաւ շէնքերը: Յիւլիխը Շւէյցարիայի մետաքսագործական և մեքենաների արդիւնաբերութեան կենտրոնն է:

Բազել—Հոենոսի վրայ: Նշանաւոր է իր առևտրով Գեր-



մանիայի հետ: Այս քաղաքում է գտնուում Գերմանիայից Իտալիա և Ֆրանսիայից Աւստրո-Ունգարիա տանող երկաթուղային գծերի հանգույցը: Բաղելից է սկսւում նաւագնացութիւնը Հոնոսս գետով դէպի ցած:

Լուցերն—Ֆիրվալդշտետեր լճի ափին,—այնտեղ, ուր լճից դուրս է գալիս Ռոյս գետը: Լուցերնի դիրքը գեղեցիկ է, գրտնւում է լեռների մէջ. այդ պատճառով էլ նա դէպի ինքն է գրաւում բազմաթիւ ճանապարհորդներ:

Ինտերլակեն—Աւար գետի վրայ, Թուն և Բրիենց լճերի մէջ տեղում: Ինտերլակենում են հաւաքւում Բերնեան Ալպերը բարձրանալ ցանկացող ճանապարհորդները:

Ժընև—Ժընևի լճի ափին, այնտեղ,—ուր այդ լճից դուրս է գալիս Ռոնա գետը. նշանաւոր է իր առևտրով Ֆրանսիայի հետ: Ժընևը շէյցաբական ժամացոյցների արտադրութեան կենտրոնն է: Ունի համալսարան:

Լոզանն—Ժընևի լճի ափին, երեք բլուրների վրայ և նըրանց մէջ ընկնող հովիտներում: Ունի գեղեցիկ շրջակայք. կլիման շատ մեղմ է և առողջարար: Լոզանում կայ համալսարան:

## Ի Տ Ա Լ Ի Ա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ:—Իտալիայի մասերն են կազմում—Լոմբարդիա դաշտավայրը՝ Ալպեան լեռների մերձակայ լանջերի հետ միասին, Ապեննինեան թերակղզին և երկու մեծ կղզիներ՝ Սիցիլիա և Սարդինիա:

Լոմբարդիա դաշտավայրը բռնում է Ալպերի և Ապենինեան լեռների մէջ տարածւող ցածրութիւնը: Այդ դաշտավայրի երկայնութեամբ հոսում է Պօ գետը: Սա իր ձախ կողմից ընդունում է մի քանի մեծ վտակներ—Դորա-Ռիպարիա Դորա-Բալտէա, Տիչինօ (Տեսսին), Ադդա, Մինչիօ: Այս բոլոր գետերը իրենց սկիզբը առնում են Ալպեան սառցադաշտերի և յաւերժական ձեան տակից: Այդ գետերից մի քանիսը



հոսում են մեծ լճերի միջով. Տիչինո գետը—Լագո-Մաջիօրէ լճով, Ադդա գետը—Կոմօ լճի միջով:

Պօ'ն իր գետաբերանի մօտ կազմում է մեծ ղելտայ: Բացի Պօ'ից՝ Ագրիատիկ ծովն են թափւում Էչ և շատ ուրիշ փոքր գետեր, որոնք հոսում են Ալպերից և Ապեննինեան լեռներից:

Լոմբարդական դաշտավայրը միայն արևելեան կողմից բաց է ծովի առաջ, իսկ երեք կողմից շրջապատւած է լեռներով, ուստի և Ատլանտեան օվկիանոսից ու Միջերկրական ծովից փչող քամիները ազատ մուտք չունեն Լոմբարդիա: Այս պատճառով էլ Լոմբարդական դաշտավայրի կլիման ցամաքային է— ձմեռը այնտեղ մինչև 10<sup>0</sup> սառնամանիքներ են լինում, գետերը երբեմն սառչում են, ձիւնը շաբաթներով գետնին նստած է մնում, ամառն էլ շատ շոգ է լինում և երկարատև. այնպէս որ այնտեղ հասնում են ոչ միայն ցորենը և եգիպտացորենը, այլ մինչև անգամ բրինձը:

Ապեննինեան թերակղզին մեծ մասով լեռնոտ է: Ապեննինեան լեռները, որոնցից և թերակղզին ստացել է իր անունը, երկայնաձիգ աղեղի ձևով տարածւում են ամբողջ թերակղզու երկայնութեամբ՝ հիւսիսից սկսած մինչև թերակղզու հարաւային մասի՝ Կալաբրիայի ծայրը: Ապեննինեան լեռները ամենից աւելի բարձր են միջին [մասում, որտեղ և նրանք կոչւում են Աբրուցցներ: Աբրուցցների գագաթներից մէկը՝ Գրան-Սասո 3 վերստ բարձրութիւն ունի և ծածկւած է յաւիտենական ձիւնով:

Ապեննինեան լեռները մեծ մասով բաղկացած են մոխրագոյն կամ կարմրաւուն կրաքարերից: Այդ լեռնաշղթաները ամայի են, նման Դինարեան լեռներին—նոյն քարաժայռերը, նոյն քարայրերը և ստորերկրեայ գետերը:

Ապեննինեան լեռների արևմտեան փեշերի վրայ գտնւում են մեծ թւով հանգած հրաբուխներ: Նէապոլի ծոցի հենց ափին գտնւում է Վեզուվ անունով գործող հրաբուխը, մէկ վերստ բարձրութեամբ:

Թերակղզու միջով հոսում են նրա ամենամեծ գետերը—Արնօ և Տիբեր: Սրանցից նաւարկելի է միայն Տիբերը, այն էլ հազիւ փոքր տարածութեան վրայ:





Նկ. 27. Պոմպեյի քաղաքի աւերակները:

Որովհետև Ապեննինեան թերակղզին թէ՛ արևելեան և թէ՛ արևմտեան կողմից ողողւում է տաք ծովերով, ուստի և սրա կլիման (բացառութեամբ բարձր լեռնագագաթների) մերձարեաւդարձային է—շոգ, չոր ամառ և անձրևային, մեղմ ձմեռ: Այս պատճառով այնտեղ աճում են մշտադալար ծառեր և թփեր: Գարնանը դրանք բոլորը լաւ ծաղկում են և բուրում, բայց ամառը ծածկւում են փոշով և ստանում մոխրագոյն, տխուր տեսք:

Սիցիլիա և Սարդինիա կղզիները լեռնոտ են և իրենց բնութեամբ նման են Ապեննինեան թերակղզուն:

Սիցիլիայի արևելեան ծովափին գտնւում է հսկայական Էտնա հրաբխային սարը, որ համարեա 3 անգամ աւելի բարձր է, քան Վեզուվը և տարւայ մեծ մասը ծածկւած է ձիւնով:

Իրենց ծագման նայելով՝ Սիցիլիան և Սարդինիան ցամաքային կղզիներ են:



1908 թվականի դեկտեմբերին տեղի ունեցաւ մի սոսկալի երկրաշարժ, որից կործանւեցին Սիցիլիայի վրայ գտնուող Մեսսինա մեծ քաղաքը և Կալաբրիայի մի քանի փոքրիկ քաղաքներ: Այդ երկրաշարժին զոհ գնացին 100 հազարից աւելի մարդիկ:

Իտալիայի բնական հարստութիւնը նրա բուսական աշխարհի մէջ է: Իտալիան քարածուխով և մետաղներով աղքատ է: Էլբա կղզու վրայ միայն գտնուում են երկաթանոցներ, Սիցիլիայում — ծծմբանոցներ:

Իտալիայի բնակիչների թիւը 34 միլիոն է —  $1\frac{1}{2}$  անգամ աւելի, քան Բալկանեան բոլոր պետութիւններում՝ միասին վերցրած: Համարեա ամբողջ ազգաբնակչութիւնը բաղկացած է իտալացիներից, որոնք խօսում են իտալերէն լեզւի զանազան բարբառներ և կազմում են մի ազգութիւն:

**ԻՏԱԼԱՅԻՆՆԵՐԻ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ԿԵԱՆՔԸ.** — Իտալացիները ապրուստի գլխաւոր միջոցները կազմում են երկրագործութիւնը և ալգեգործութիւնը, որ ծաղկում է առանձնապէս Լոմբարդիայում, Ապեննինների փեշերի վրայ և Սիցիլիայում:

Լոմբարդական արգաւանդ դաշտերի միջով հոսում են ջրբառատ գետեր: Սրանցից իտալացիները օգտւում են մեծ չափերով և արեւստական կերպով ոռոգում են իրենց դաշտերը: Այդ գետերից նրանք անց են կացրել ջրանցքներ, որոնցով ամեն ուղղութեամբ կարուած է Լոմբարդական դաշտավայրը: Այս դաշտավայրի ամենից աւելի ցածրադիր, ճահճային տեղերում իտալացիները մշակում են բրինձ կամ ցանովի խոտեր, որոնք այնտեղ այնչափ արտադրութեամբ են աճում, որ տարւայ ընթացքում ութ անգամ հնձում են: Լոմբարդացիները խոտով կերակրում են իրենց կովերին, որոնցից ստանում են շատ իւղ և պանիր: Այնտեղ, ուր հողը պակաս չափով խոնաւ է, ցանում են ցորեն և եգիպտացորեն: Յաճախ հացահատիկ ցանում են այնպիսի տեղերում, ուր արդէն տնկած են լինում խաղողի որթ և թթնահիներ: Լոմբարդիան այնքան տաք է և արեւաշատ, որ այնտեղ հացահատիկները նոյնիսկ ծառերի տակ աճել կարող են:

Մետաքսագործութիւնը շատ է զարգացած Լոմբարդիայում:



այնչափ շատ մետաքս է արտադրուում այնտեղ, որ արտահանուում է օտար երկիրներ \*):

Ապեննինների փէշերի վրայ այնչափ առատ ջուր չկայ, որչափ Լոմբարդիայում: Արւեստական ոռոգում գոյութիւն ունի այնտեղ միայն սակաւաթիւ վայրերում—գետերի ափերին. օրինակ՝ Արնօ գետի ափին: Մնացած տարածութիւնը ոռոգւում է անձրևով, որ գլխաւորապէս ձմեռ ժամանակ է գալիս: Ուստի և այստեղ արտերում ցորեն ցանում են միայն աշնանը: Ամառւայ չորային լինելը սակայն չէ խանգարում, որ այդտեղ պտղատու ծառեր ևս աճեն. դրանք իրենց երկայն արմատներով խոնաւութիւն ծծում են հողի ստորին, խորը շերտերից: Օրինակ՝ ձիթենին աճում է Ապեննինների փէշերի վրայ ամենուրեք, նոյնիսկ ամենաչոր և ապառաժոտ տեղերում: Ամեն տեղ աճում է նաև խաղողի որթ:

Խաղողի և այլ պտղատու ծառերի այգիներով ծածկւած են Ապեննինների փէշերը համարեա ամբողջապէս. բայց այդ այգիները առանձնապէս փարթամ են այն լեռների և բլուրների լանջերին, որտեղ գետնի տակից աղբիւրներ են բղխում: Այսպիսի վայրերում լաւ են աճում՝ թզենի, դեղձի, նշենի, իսկ Նէպոլի ծոցից հարաւ աճում են նաև՝ նարնջենի և կիտրոնի ծառ:

Աւելի փարթամ այգիներ կան Սիցիլիայում՝ այստեղ լեռների ստորոտներից բղխում են յորդ աղբիւրներ, որոնք հնարաւորութիւն են տալիս արւեստական կերպով ոռոգելու այգիները: Նարինջ, կիտրոն, մանդարին,—այնչափ մեծ քանակութեամբ են ստացւում Սիցիլիայում, որ նրանցով բարձում են ամբողջ նաւեր և արտահանում դէպի եւրոպական զանազան երկիրներ:

Իտալիայի լեռնային շրջաններում (Ալպերում և Ապեննիններում) իտալացիները իրենց գլխաւոր ուշադրութիւնը դարձնում են անասնաբուծութեան վրայ: Ալպերի լանջերին բազմացնում են խոշոր եղջիւրաւոր անասուններ, իսկ Ապեննինների

\*) Մետաքսի արտադրութեամբ Իտալիան յետ է մնում միայն Չինաստանից և Ենպոնիայից:



վրայ՝ միայն էշ, ոչխար և այծ, որոնք կարող են գոհանալ նաև միայն կոշտ խոտով և թփերով:

Իտալիայի ավերը ողողող ծովերը բաւական հարուստ են ձկներով: Այս պատճառով՝ ձկնորսութիւնը ծովափնեայ բնակիչների ապրուստի համար կարևոր միջոց է համարւում:

Հանքագործութիւնը Իտալիայում զարգացած չէ:

Մշակողական արդիւնագործութիւնը Իտալիայում աննշան է՝ այնտեղ քարածուխ չլինելու պատճառով:

Միայն Լոմբարդական դաշտավայրում, Ալպերի ստորոտների մօտ, վերջին ժամանակներս հիմնւել են շատ գործարաններ (բամբակի, մետաքսի և այլն), որոնք բանեցւում են արագահոս գետերով: Իտալիայի մնացած մասերում յաճախ պատահում են միայն մակարոնի գործարաններ (մակարոնը իտալացիների սիրած բանն է):

Այսպիսով ուրեմն՝ Իտալիան արդիւնագործական երկիր չէ, այլ զիւղատնտեսական: Մրգեղէնի (նարինջ, կիտրոն, խաղող, նուշ) արտադրութեամբ Իտալիան առաջինն է եւրոպական բոլոր պետութիւնների թւում: Իտալացիները ոչ ոքից յետ չեն մնում նաև ձիթենու իւղի և գինու արտադրութեամբ. գինին Իտալիայում այնչափ էժան է, որ կազմում է թէ՛ հարուստների և թէ՛ աղքատների ամենօրեայ խմիչքը:

Իտալիայի առետուրը հնումը շատ զարգացած էր, իսկ Ամերիկայի գիւտից յետոյ ընկաւ. Սուէզի ջրանցքը փորելուց յետոյ նորից կենդանանում է: Ճենովա և ուրիշ նաւահանգիստներ ունեն առևտրական նշանակութիւն: Իտալացիները արտահանում են գլխաւորապէս—մետաքս, գինի, ձիթենու իւղ, բրինձ, մրգեղէն. ներմուծում են՝ հացահատիկներ, մետաղեայ գործիքներ, քարածուխ: Միջերկրական ծովի վրայ երթևեկում են շատ թւով իտալական առևտրական նաւեր:

Իտալացիները, մանաւանդ գիւղացիները աղքատ կեանք են անցկացնում:

Թէպէտ նրանք իրենց այգիներում և արտերում աշխատում են անընդհատ, համարեա ամբողջ տարին - տասներկու ամիս, բայց և այնպէս ապրուստի համար հազիւ են կարողանում խղճուկ միջոցներ հայթայթել: Նրանք հողից խլում են այն ամիսը, ինչ կարճ է նա տալ: Սակայն իտալացիների հողաբաժինները փոքր են, շատ գիւղացիներ էլ ամենևին սեփական հող չունեն. ուստի և հարկադրւած են կալւածա-



տէրերին թանգ վճարել և նրանցից կապալով հող վերցնել: Անեկանե-  
լի դրութիւնը ստիպում է շատ խտալացիների թողնել իրենց հայրե-  
նիքը: Իւրաքանչիւր տարի մի քանի հարիւր հազար խտալացիներ աշ-  
խատանք որոնելու նպատակով գնում են Շւէյցարիա, Գերմանիա,  
Ֆրանսիա և կամ ընդմիշտ գաղթում են Ամերիկա:

1906 թւականին Իտալիայից հեռացել են 788 հազար հոգի, որոն-  
ցից 512 հազարը՝ գէպի Ամերիկա:

Ժողովրդական կրթութիւնը Իտալիայում շատ չէ զարգա-  
ցած: Բարձրագոյն դպրոցներ (օրինակ համալսարաններ) այն-  
տեղ բաւական թւով (քսան և մէկ) կան. բայց տարրական  
դպրոցների թիւը քիչ է, մանաւանդ Հարաւային Իտալիայում,  
որտեղ ազգաբնակչութեան մեծ մասը անգրագիտ է:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՒ ՔԱՂԱՔՆԵՐԸ.—Շատ վաղուց չէ,  
որ Իտալիան բազկացած էր մի շարք անջատ, մանր պետու-  
թիւններից, որոնք միայն անցեալ դարում հետզհետէ միա-  
ցան: 1870 թւականին կազմւեց միացեալ Իտալիայի սահմա-  
նադրական թագաւորութիւնը: Թագաւորի իշխանութիւնը սահ-  
մանափակւած է պարլամենտով:

Իտալիայի մայրաքաղաքն է Հռոմ (500 հազարից աւելի  
բնակիչներով): Հռոմը գտնւում է Իտալիայի կենտրոնում,  
Տիբեր գետի վրայ: Հռոմում են նստում թագաւորը և երկրա-  
գնդի բոլոր կաթողիկոսների հոգևոր պետը—պապը. այնտեղ է  
գտնւում նաև իտալական պարլամենտը:

Հռոմը շատ հին քաղաք է, երկու և կէս հազար տարուց աւել է ինչ  
գոյութիւն ունի: Այդ քաղաքում մնացած կան հնութեան շատ յիշա-  
տակարաններ: Քաղաքի կենտրոնում է գտնւում Հռոմի Ֆորումը—այն  
հրապարակը, որտեղ դեռ Քրիստոսի Ծննդից առաջ տեղի էին ունենում  
Հռոմի քաղաքացիների ժողովները: Ֆորումի վրայ և նրա մօտերքում  
պահւած կան հեթանոսական տաճարների աւերակներ: Հինց այստեղ  
մօտիկ է գտնւում նաև Կոլիզէյը—հսկայական կիսաւեր մի կրկէս, որ-  
տեղ Հռոմի հեթանոս արիւնոուշտ կայսրները քրիստոնեաների վրայ գա-  
զաններ էին բաց թողնում՝ նրանց յօշոտել տալու համար: Աւելի ուշ ժա-  
մանակւայ շէնքերի թւում նշանաւոր են՝ Ս.Պետրոսի տաճարը, որ եր-  
կրագնդիս ամենաընդարձակ և ամենաշքեղ (իւր նկարներով և արձաննե-  
րով) տաճարն է, Վատիկանը մի հսկայական արքունիք է, բազկացած  
է աւելի քան 10,000 սենեակներից. դա պապի վեհարանն է: Վատիկա-



նում պահուում են բազմահատոր գրքերի և նկարների ընտիր ժողովածուներ:



Նկ. 28. Սուրբ Պետրոսի ճառարը եւ հրապարակը Հռոմում:

**Միլան** (500 հազարից աւելի բնակիչ.)—Հոմբարդիայի արդիւնագործական կենտրոնն է, մետաքսի բազմաթիւ գործարաններով. գտնուում է մի քանի նաւարկելի ջրանցքների և երկաթուղային գծերի հանգույցում, որոնցից ամենանշանաւորն է Սէն-Գովթարդի գիծը:

**Տուրին**—նմանապէս արդիւնագործական նշանաւոր քաղաք է Դորա-Ռիպարիա գետի վրայ, ուր սա Պօ գետն է թափուում: Դորա-Ռիպարիայի հովտով անց է կացրած (Մոն-Սընեսի վրայով) երկաթուղային գիծ դէպի Ֆրանսիա:

**Ճենովա**—Ճենովայի ծոցի ափին: Իտալիայի ամենանշանաւոր նաւահանգիստն է. մեծ նշանակութիւն ունի նոյն իսկ Շւէյցարիայի և հարաւային Գերմանիայի համար:

Ճենովայում կանգնեցրած է Կոլումբոսի արձանը. Կոլումբոսը այգտեղ է ծնել, մեծացել և նաւագնացութիւն սովորել:

**Վենետիկ**—նաւահանգիստ է Ադրիատիկ ծովի ափին:

Վենետիկը գտնուում է բազմաթիւ կղզիների վրայ: Փողոց Վենետիկում քիչ կայ, գրանց գերը կատարում են կղզիների մէջ գտնուող



նեղուցները և արևատական կերպով փորած ջրանցքները: Կառքերի փոխարէն երթեկում են գոնդոլներ (նաւակ):

Վենետիկից ոչ հեռու ընկած Ս. Ղաղարի կղզու վրայ է գտնւում Մխիթարեան վանքը և միաբանութիւնը, որ մօտ երկու հարիւր տարի առաջ հիմնեց սեբաստացի Մխիթար արքահայրը: Մխիթարեան միաբանութեան նշանակութիւնը մեծ է հայոց լեզւի և գրականութեան զարգացման գործում: Վանքում կայ հարուստ գրադարան, դպրոց և տըպարան: Այնտեղ տպւում են շատ գրքեր և «Բազմավէպ» ամսագիրը:



Նկ. 29. Ջրանցք Վենետիկում: Գոնդոլներ:

**Ֆլորէնցիա.**— Մեծ քաղաք է, Արնօ գետի վրայ. շրջապատւած է ընդարձակ այգիներով:

Ֆլորենցիան հռչակւած է իր թանգարաններով:

Նէապոլ (500 հազ. աւելի բնակիչ).— Նշանաւոր նաւահանգիստ է Նէապոլի ծոցի ափին, գտնւում է Վեզուվ հրաբխային սարի մօտ:

Նէապոլից ոչ հեռու գտնւում է Պոմպէյը: (Նկ. 27) Սա հռոմէական հին քաղաքներից մէկն է: 79 թւին, Ք. յ. տեղի ունեցած Վեզուվի ժայթքումից կործանւեց և մոխրի տակ մնաց. վաղուց չէ ինչ պեղումներ են կատարել այդտեղ և բաց արել կործանւած քաղաքը: Նէապոլի թանգարանում են պահւում Պոմպէյի պեղումների միջոցին գտնւած

ամեն տեսակ բազմաթիւ առարկաներ—հին հոռոմայեցիների տնային իրեր, զարդարանքներ և նկարներ:

Նէապոլից հարաւ ընկնում է Սորրենտի կրաքարային թերակղզիները: Նէապոլը, Վեզուվը, Սորրենտի թերակղզին և նրա շարունակութիւն կազմող Կապրի կղզին պատկանում են երկրագնդի տմենաչքնաղ վայրերի թւին:



Նկ. 30. Տեսարան Նէապոլ քաղաքում՝ Վեզուվ հրաբուխի հետ:

Պալերմո Կատանիա—նշանաւոր նաւահանգիստներ են Սիցիլիա կղզու վրայ. շրջապատւած են նարնջի և կիտրոնի ծառերի պուրակներով:

Բարի և Բրինդիզի—նաւահանգիստներ են Ադրիատիկի հարաւային ծովափին. գտնւում են մի պտղաւէտ հարթութեան ծայրին, որ ծածկւած է միլիոնաւոր նշենիներով:

Իտալիան առաջնակարգ դեր է խաղացել համաշխարհային պատմութեան մէջ: Իտալիայի գաւակ են եղել (միջին դարում) այնպիսի աշխարհահռչակ բանաստեղծներ, ինչպէս են Դանտէ, Պետրարկա, Արիօստո. այնպիսի հանճարեղ նկարիչներ և քանդակագործներ, ինչպէս են Ռաֆայէլ, Լէօնարդո-դա-Վինչի, Միքէլ Անջէլօ: Երաժշտութեան զարգացումն ևս մարդկութիւնը մեծ չափով պարտական է Իտալիային: Իտալացի են եղել յայտնի ճանապարհորդներ և նորանոր երկիրներ գտնողներ. Կոլումբոսը Ճենովա քաղաքից էր, Մարկո-Պօլօն—Վենետիկ քաղաքից:

Իտալիայի քաքաքները իրենց բազմաթիւ պատկերասրահներով, թանգարաններով և հնութեան յուշարձաններով, նաև իտալական պարզ երկնակամարը, փայլուն արևը և կապոյտ, հայելանման ծովը այժմ էլ



դէպի իրենց են գրաւում բազմաթիւ ճանապարհորդներ (սովորաբար ձմեռայ վերջին և գարնան սկզբներին) Եւրոպայի և Ամերիկայի զանազան երկիրներից: Տասնեակ հազարաւոր կաթոլիկներ ամեն տարեւուրտ են գնում Հոոմ՝ կաթոլիկութեան կենտրոնը և զապի աթոռանիստը:

Իտալական թագաւորութեան մէջ չէ մտել Ապեննինեան թերակղզու հիւսիս-արեւելեան կողմն ընկած մի փոքրիկ շրջան՝ իր 10 հազար բնակիչներով. դա ՍԱՆ-ՄԱՐԻՆՕ կոչւած աննշան հասարակապետութիւնն է, որ գտնւում է Իտալիայի հովանաւորութեան տակ:

## ՊԻՐԵՆԷՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ:—Պիրենէեան թերակղզին աւելի մեծ տարածութիւն է բռնում, քան ո՛չ միայն Ապեննինեան, այլ նաև Բալկանեան թերակղզին: Պիրենէեան թերակղզու ափերը քիչ են կտրուած: Սրանով նա յիշեցնում է հարևան Աֆրիկան, Պիրենէեան լեռներով թերակղզին համարեաւ անշատուած է մայր ցամաքից և կարծէք մի առանձնացած, անշատ աշխարհ լինի: Իր մակերևոյթի կազմութեամբ էլ այդ թերակղզին յիշեցնում է աւելի Աֆրիկան, քան Եւրոպան: Նրա տարածութեան կէսից աւելին բռնում է Իսպանական ընդարձակ բարձրաւանդակը: Լեռնաշղթաներ կան թերակղզու միայն ծայրերում.—հիւսիսում՝ Պերինէեան և Կանտաբրեան լեռները, իսկ հարաւում՝ Գրանադեան լեռները:

Իսպանական բարձրաւանդակը ովկիանոսի մակերևոյթից աւելի քան  $1\frac{1}{2}$  վերստ բարձր է: Սիեբրա-Գլադարրամա լեռնաշղթան բաժանում է Իսպանական բարձրաւանդակը երկու մասի—Հին-Կաստիլեան (հիւսիսում) և Նոր-Կաստիլեան (հարաւում) բարձրաւանդակ: Բարձրաւանդակի հարաւային մասը կոչւում է Սիեբրա-Մորենա:

Իսպանական բարձրաւանդակի մակերևոյթը հարթ է, արևելեան կողմը աւելի բարձր է, քան արևմտեանը, այդ պատճառով էլ նրա զետեղը հոսում են դէպի Ատլանտեան ովկիանոս. նշանաւոր են՝ Դուլէրո՞



գետը—Հին Կաստիլիայում և Տախո, Գուադիալմա—Նոր Կաստիլիայում։ Այս գետերը հոսում են արագ, խոր հովիտների միջով և շատ տեղ կազմում են սահանքներ։

Իսպանական բարձրալանդակի կլիման ցամաքային է։ Ովկիանոսից փչող քամիները իրենց հետ բերած խոնավութիւնը թողնում են թերակղզու ծայրերում։ Ամառը սաստիկ շոգ (մինչև 40°) և երաշտ է լինում, իսկ ձմեռը մինչև 10° սառնամանիքներ. բարձրալանդակը ծածկւում է ձիւնով։

Բարձրալանդակի քուսականութիւնը աղքատ է։ Անտառներ չկան։ Ամեն տեղ տարածւում են ընդարձակ տափաստաններ՝ փշատերև թփերով և կոշտ խոտով ծածկւած։

Մի քանի լեռնագագաթներ, օրինակ Մալադետտա խմբում գրտնուղ Անետա գագաթը, 3 վերստից աւելի բարձր են։ Պիրենէեան լեռների Ֆրանսիական լանջերի վրայ մթնոլորտային տեղումներ շատ են թափւում, այնտեղ կանաչին են տալիս հիւթառատ խոտով ծածկւած մարգագետիններ և փշատերև անտառներ, իսկ Իսպանական լանջերի վրայ մթնոլորտային տեղումներ քիչ են թափւում, անտառ համարեա չկայ, եղած արօտատեղիներն էլ խղճուկ են։

Պիրենէեան լեռները տարածւում են 400 վերստ երկայնութեան վրայ. իրենց բարձրութեամբ նրանք Յերոպայում 2-րդ տեղն են բռնում Ալպերից յետոյ. Պիրենէեան լեռները բաժանում են թերակղզին մայր ցամաքից, նրանք բաղկացած են մի քանի զուգահեռական լեռնաշղթաներից։

Պիրենէեան լեռների շարունակութիւնն են կազմում Կանտաբրեան լեռները։ Հարաւային կողմից նրանք էլ չոր են և անապատային, իսկ հիւսիսային լանջերում բնութիւնը բոլորովին հակառակն է։

Գրանադեան լեռները ձգւում են թերակղզու հարաւարեւելեան կողմում։ Նրանց կատարները մինչև ամառւայ կէսը ձիւնով են ծածկւած լինում։ Ամենաբարձր լեռնաշղթան է՝ Սիերրա-Նևադա. տեղ-տեղ յաւերժական ձիւնով է ծածկւած։ Ամենաբարձր գագաթն է՝ Մուլհասեն, որ Անետայից բարձր է։ Գրանադեան լեռների լանջերը քարքարոտ են և լերկ։

Պիրենէեան թերակղզու՝ Միջերկրական և Պորտուգալական ծովափնեայ մասերի կլիման մերձարեւադարձային է։



Գրանադեան լեռների հարաւային ստորոտներում հասնում են նոյն իսկ շաքարեղէգ, փրենիկեան արմաւենի և այլն: Այս ծովափերը եւրոպայի ամենատաք մասերն են: Նարնջենի, թզենի, նշինի և ուրիշ պտղատու նուրբ ծառեր աճում են Միջերկրականի ծովափին ամեն անդ, միայն թէ արեւստական կերպով ջրեւելոց յետոյ, որովհետեւ այնտեղ ամառը լինում է շատ շոգ և չոր: Թերակղզու միւս կողմում, պորտուգալական ծովափին, կլիման աւելի խոնաւ է, անձրեւ շատ է գալիս՝ շնորհիւ ովկիանոսից փչող քամիների: Պտղատու նուրբ ծառերը այնտեղ աճում են նաև առանց արեւստական կերպով ջրեւելու: Իսպանական բարձաւանդակի՝ դէպի ովկիանոս նայող լանջերի վրայ պատահում են խցանակաղնու մեծ անտառներ:

Անդալուզեան և Արագոնեան դաշտավայրերը իրենց բնութեամբ նման են մերձակայ ծովափերին. նրանց կլիման ևս մերձարևադարձային է, միայն թէ՝ շատ չոր. բուսականութիւնը տափաստանային է: Անդալուզիայով է հոսում Գլադալկիւիւր գետը, իսկ Արագոնիայով՝ Էբրօ գետը: Այս գետերի ափերին տարածւում են մշտադալար ծառերի և խաղողի այգիներ, որոնք ոռոգւում են արեւստական կերպով:

Բնական հարստութիւններով Պիրենէեան թերակղզին շատ չէ յետ մնում Ապենինեան և Բալկանեան թերակղզիներից: Ճիշտ է, նրա հողը աւելի պակաս արգաւանդ է, կլիման էլ բաւարար չափով խոնաւ չէ, բայց դրա փոխարէն երկիրը հարուստ է հանքերով, յատկապէս երկաթի և պղնձի հանքերով:

Պիրենէեան թերակղզու ազգաբնակչութիւնը կազմում են՝ իսպանացիներ, պորտուգալացիներ և բասկեր (հիւսիսային կողմում, Պիրենէեան լեռների մօտ): Իսպանացիները և պորտուգալացիները իրար ցեղակից ռոմանական ժողովուրդներ են. բասկերը հին իբերական ժողովրդի յետնորդներն են. իբերներն էին հնումը Պիրենէեան ամբողջ թերակղզու բնակիչները:

ԻՍՊԱՆԱՑԻՆԵՐԻ ԵՒ ՊՈՐՏՈՒԳԱԼԱՑԻՆԵՐԻ ԶԲԱՂԾՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ԿԵԱՆՔԸ. — Պիրենէեան թերակղզու բնակիչները զբաղւում են գլխաւորապէս գիւղական տնտեսութեամբ:

Միջերկրական ծովի ափին իսպանացիները զբաղւում են գլխաւորապէս այգեգործութեամբ: Իսպանական բարձրաւանդակի և Գրանադեան լեռների լանջերին ձգւած են բազմաթիւ



այգիներ: Մշակում են պտղատու նուրբ ծառեր—նարնջենի, նրունենի, նշենի, խաղողի որթ և ձիթենի:



Նկ. 31. Իսպանուհի:

Արևեստական ոռոգման համար ջանք չեն խնայում, որովհետև այդ միջոցով 20—30 անգամ աւելացնում են հողի բերքը: Պտղատու ծառերի տակ ևս ցանում են հացահատիկներ, կարտոֆիլ, իսպանական սոխ և այլն: Միևնույն հողաբաժնից այսպիսով տարեկան մի քանի հունձ են վերցնում:

Կան մարգագետիններ, որտեղ տարեկան մինչև 12 անգամ խոտահարք է լինում: Իսպանացիները արտահանում են մեծ քանակութեամբ թարմ միրգ, մանաւանդ նարինջ: Պատրաստում են չամիչ, գինի և ձէթ:

Արեւմտեան ծովափում պորտուգալացիները նմանապէս մշակում են պտղատու նուրբ ծառերի այգիներ. գլխաւոր ուշադրութիւնը դարձնում են խաղողի մշակութեան և զինեգործութեան վրայ. այդտեղի գինին յայտնի է «պորտվէյն» անունով և արտահանւում է ուրիշ երկիրներ, գլխաւորապէս Անգլիա: Պորտուգալացիները զբաղւում են նաև երկրագործութեամբ և այգեգործութեամբ. իրենց արտերը նրանք հնձում են տարեկան երկու անգամ:

Իսպանական բարձրաւանդակի լանջերին բազմացնում են՝ ոչխար, այծ և խոզ: Մեծ նշանակութիւն ունի նաև խցանակաղնու կեղեի արտադրութիւնը. այդտեղից խցան է արտահանւում դէպի երկրագլխի բոլոր կողմերը:

Թերակղզու հիւսիսային կողմում կլիման մերձարեւ-



Նկ. 32. Պորտուգալուհի:



ւաղարձային չէ, այլ՝ բարեխառն և շատ խոնաւ: Այդտեղ գըլ-խաւոր նշանակութիւն ունի անասնաբուծութիւնը: Լեռների ստորոտներում և հովիտներում մշակում են եգիպտացորեն, տնե-րի մօտերքում—խնձորենու և տանձենու այգիներ:

Բոլորովին ուրիշ է տնտեսական զբաղմունքը թերակղզում մէջտեղում,—Իսպանական բարձրաւանդակի վրայ: Այդտեղ ա-հագին տարածութիւններ ամենեւին մշակւած չեն և ծառայում են իբրև արօտատեղիներ ոչխարի հօտերի համար: Վերջերս իսպանացիները սկսել են աւելի ու աւելի վարել տափաստան-ները և աշնանացանքս անել—ցորեն և հաճար ցանել: Կլիմայի չորութիւնը խանգարում է երկրագործութեան զարգացմանը: Իսպանացիք իրենց անդի համար բաւարար չափով հացահա-տիկ չեն արտադրում, ուստի և մի մասը ստիպւած են գնել օտարներից:

Ծովափնեայ քնակիչների համար ապրուստի օժանդակ մի-ջոց է հանդիսանում ձկնորսութիւնը: Նշանակութիւն ունի նաև ծովային աղի արտադրութիւնը, որին նպաստում են չոր կլի-ման և ծովերի մեծ քանակութեամբ աղ պարունակելը:

Հանքագործութիւնը Պիրենէեան թերակղզում գոյութիւն ու-նի հին ժամանակներից սկսած: Անդալուզիայի լեռներում և Սիբերրա-Նեադայում շահագործում են հարուստ պղնձահանքեր, արդիւնաբերում են նաև երկաթ, սնդիկ, կապար, արծաթ, քա-րածուխ և այլն: Սակայն հանքագործութիւնը ամբողջապէս գտնւում է օտարերկրացիների, գլխաւորապէս անգլիացիների և գերմանացիների ձեռքում. իսպանական հանքերից նրանք հում նիւթը նաւերով փոխադրում են իրենց հայրենիքը և իրենց երկրի գործարաններում են արդիւնագործում:

Մշակողական արդիւնագործութիւնը զարգացած չէ. որոշ նշանակութիւն ունի միայն բամբակէ և բրդէ գործւածքներ պատրաստելը:

Երկրում եղած երկաթուղիները կառուցել են օտարերկրա-ցիները, մեծ մասով ֆրանսիացիները: Ծովային նաւագնացու-թիւնը գտնւում է անգլիացիների ձեռքում, մինչդեռ հին ժա-մանակներում իսպանական և պորտուգալական ծովագնացները



երկար ճանապարհորդութիւններ էին անում ծովով և նորանոր երկիրներ գտնում:

(Յիշել Կոլումբոսի, Վասկո-դէ-Գամայի և Մագելլանի գիւտերը):

Ժողովրդական կրթութիւնը խղճայի դրովթեան մէջ է գրտնւում: Իսպանացիների  $\frac{2}{3}$  և պորտուգալացիների  $\frac{3}{4}$  մասը անգրագէտ է: Նրանց մէջ քիչ կան ձեռնարկող ոգու տէր և կրթւած մարդիկ: Նրանցից շատերը տրամադիր են անգործութեան և զանազան զւարճութիւնների. յայտնի են օրինակ՝ Իսպանական ցլամարտերը:

Իսպանացիները և պորտուգալացիները աղքատ կեանք են անց կացնում: Գիւղացիների մեծ մասը զուրկ է սեփական հող ունենալուց. բարձր գին վճարելով՝ կալածատէրերից են կապալով հող վերցնում. բացի դրանից՝ նրանք պետութեանը մեծամեծ հարկեր են վճարում: Այս է պատճառը, որ նոյն իսկ Միջերկրականի ծովափին ընկնող փարթամ, ալգեշատ վայրերում հողի կապալառուները կիսաքաղց կեանք են անցկացնում:

ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՔԱՂԱՔՆԵՐԸ ԵՒ ԳԱՂՈՒԹՆՆԵՐԸ.—

Պիրենէեան թերակղզու վրայ գտնւում են Իսպանիա և Պորտուգալիա սահմանադրական թագաւորութիւնները: Իսպանիան բռնում է թերակղզու մեծ մասը ( $\frac{5}{6}$ -ը) և Բալէարեան կղզիները. Պորտուգալիան բռնում է թերակղզու արեւմտեան ծովափնեայ մասը—Մինիօ գետից դէպի հարաւ:

ԻՍՊԱՆԻԱՆ բաւական մեծ պետութիւն է,—աւելի ընդարձակ տարածութիւն է բռնում, քան Իտալիան և Անգլիան (առանց գաղութների):

Իսպանիայի մայրաքաղաքն է՝ Մադրիդ ( $\frac{1}{2}$  միլիոնից աւելի բնակիչ.), որ գտնւում է Պիրենէեան թերակղզու կենտրոնում. ունի համալսարան. Մադրիդից դուրս են գալիս երկաթուղային գծեր դէպի թերակղզու բոլոր կողմերը:

Իսպանիայի միւս նշանաւոր քաղաքները գտնւում են երկրի ծայրերում:

Բարցելոնա—նաւահանգիստ է և Իսպանիայի ամենանշանաւոր առևտրական ու գործարանային քաղաքը: Բնակիչների թւով յետ չէ մնում Մադրիդից:



**Վալենսիա, Մալագա, Խերես.**—այս քաղաքները գտնուում են փարթամ, արևատական կերպով ոռոգւող այգիների և դաշտերի մէջ: Նշանաւոր են մրգեղէնի և գինու արտահանութեամբ:

**Կադիս**—պատերազմական և առևտրական նաւահանգիստ է:

**Սևիլիա**—գործարանային քաղաք է և նաւահանգիստ՝ Գալիսիական Վերի վրայ: Երբ գետը վարարում է՝ նրա վրայով մինչև Սևիլիա քաղաքն են գալիս ծովային փոքր նաւեր:

**Գրանադա**—Սիերա-Նեադիայի ստորոտում, այգիների մէջ: Այդ տեղ է գտնուում Ալնամբրա կոչւած գեղեցիկ արքունիքը: Այս արքունիքը շինել են մաւրերը, արաբները, որոնք երկար ժամանակ (8-րդ դարից սկսած մինչև 15-րդ դարը) իշխում էին Պիրենէան թերակղզում:

**ՊՈՐՏՈՒԳԱԼԱՅԻ** մայրաքաղաքն է՝ **Լիսաբոն** (300 հազ. աւելի բնակիչ). նշանաւոր նաւահանգիստ է Տախօ գետաբերանի մօտ, շատ լաւ նաւակայանով: Լիսաբոնում կանգ են առնում հիւսիս-արևմտեան Եւրոպայից դէպի Հարաւային Ամերիկա, Աֆրիկա, Ասիա (Միջերկրական ծովով) և Աւստրալիա գնացող նաւերը:

Լիսաբոնը միևնոյն ժամանակ եւրոպական երկաթուղային գծերի արևմտեան վերջին կէտն է: Հարաւային Ամերիկա և Հարաւային Աֆրիկա ուղևորւողները սովորաբար երկաթուղով գնում են մինչև Լիսաբոն և այնտեղ նաւ նստում:

**Օպորտօ**—Դուէրօ՛ի գետաբերանին. նշանաւոր է գինու արտահանութեամբ:

Իսպանիայի և Պորտուգալիայի զաղութները հնումը ընդարձակ էին: Իսպանիային էին պատկանում ամբողջ Միջին Ամերիկան՝ Անտիլեան կղզիներին հետ միասին, Հարաւային Ամերիկան (քացառութեամբ Բրազիլիայի), Ֆիլիպպեան կղզիները: Պորտուգալիային էին պատկանում՝ Բրազիլիան, Աֆրիկայի ծովափնեայ ընդարձակ երկիրներ, Հնդկաստանը, Սումատրան, Եւաւն: Այս գաղութներից իսպանացիները և պորտուգալացիները ստանում էին մեծամեծ օգուտներ: Բայց նրանք չկարողացան իրենց ձեռքին պահել այդ գաղութները: Սրանցից մի քանիսը յամառ պատերազմներ մղելուց յետոյ կարողացան ազատութիւն ձեռք բերել և անկախ պետութիւններ դարձան. օրինակ՝ Մեքսիկան, Բրազիլիան և ընդհանրապէս Կենտրոնական և Հարաւային Ամերիկայի բոլոր հասարակապետութիւնները: Շատ գաղութներ էլ անցան հոլլանդացիների, անգլիացիների, ֆրանսիացիների և ամերիկա-



ցիւների ձեռքը: Ներկայումս Իսպանիային են պատկանում՝ միայն Կանարեան կղզիները և Սէուտա կղզին (Ջիբրալտարի նեղուցի ափ-  
րիկական ափին): Պորտուգալիային են պատկանում՝ Մադէյրա, Ազո-  
րեան կղզիները և բաւական ընդարձակ գաղութներ՝ արևադարձային  
Աֆրիկայում. բայց այս գաղութները պորտուգալացիների համար անօ-  
գուտ են, նրանց հետ առևտուր էլ անում են անգլիացիները:

Անգլիացիները իրենց ձեռքն են ձգել նոյն իսկ Պիրենէեան թե-  
րակղզու մի կէտը. նրանց է պատկանում Ջիբրալտար բերդը, որ լա-  
ամրացրած է, իշխում է Ջիբրալտարի նեղուցի վրայ: Ստորոտում կայ  
նաւահանգիստ, ուր մտնում են նեղուցով անցնող անգլիական բազմա-  
թիւ նաւեր: Ջիբրալտարը ահագին նշանակութիւն ունի անգլիացինե-  
րի համար իբրեւ ամրոց. նա կաշող է փակել օտար նաւերի մուտքը  
դէպի Միջերկրական ծովը:

Իսպանիայի հիւսիսային կողմում, Պիրենէեան լեռների  
մէջ, գտնւում է ԱՆԴՈՐՐԱ կոչւող անկախ, բայց աննշան հասա-  
րակապետութիւնը, որ ունի  $5\frac{1}{2}$  հազար բնակիչ և գտնւում է  
Իսպանիայի հովանաւորութեան տակ:

## Փ Ր Ա Ն Ս Ի Ա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ:— Ֆրանսիայի միայն եր-  
կու ծայրերում են բարձրանում լեռնաշղթաներ. արևելքում—  
Ալպերը՝ Իւրայի հետ, իսկ հարաւում—Պիրենէեան լեռները:  
Երկրի մնացած ամբողջ տարածութիւնը բռնում են կամ լեռ-  
նախմբեր, կամ ցածր հարթութիւններ:

Ֆրանսիայի ամենամեծ լեռնախումբը գտնւում է երկրի  
հարաւ-արևելեան կողմում և բարձրաւանդակի նմանութիւն  
ունի,  $1\frac{1}{2}$  վերստից աւելի բարձրութեամբ. դա կոչւում է Կեն-  
տրոնական-Ֆրանսիական բարձրաւանդակ: Ֆրանսիական  
բարձրաւանդակը դէպի արևմուտք աստիճանաբար ցածրանում  
է, իսկ դէպի հարաւ-արևելք բարձրանում է. սա կոչւում է  
Սևենն: Այս բարձրաւանդակը կտրտւած է խոր հովիտներով,  
որոնցով հոսում են՝ Լուարա գետը, նրա վտակ Ալլիէ՝ն և այլն:

Բարձրաւանդակի վրայ մի քանի տեղ գտնւում են հանգած հրա-  
բուխներ. մանաւանդ շատ են զբանք Օւերնի բարձրութեան վրայ. նը-  
շանաւոր են՝ Մոն-Դոր և Պիուի-դը-Դոմ հրաբուխները: Թէպէտ Օւեր-



նիի բոլոր հրաբուխները վաղուց է արդէն, ինչ չեն գործում, բայց նրանցից շատերը լաւ պահպանել են իրենց խառնարանները (բերան)։ հրաբխային ժայթքումների հետքերը դեռ երևում են—նրանց լանջերին և ստորոտներին սառած դրութեան մէջ մնացել են լաւայի հեղեղներ, սրոնք դեռ ևս չեն ծածկւել հողով։ գետերի հովիտներում էլ, մանաւանդ Ալլիէի հովտում, շատ տեղ բլրում են հանքային տաք աղքիւրներ։

Որովհետեւ Կենտրոնական բարձրաւանդակը բաւական բարձր է և գտնւում է արեւմտեան խոնաւաքեր քամիների ճանապարհին, ուստի և այնտեղ երկիրն քրքր ամպամած է, կլիման՝ խոնաւ, Ձմեռը այնտեղ շատ ձիւն է գալիս, ամառն էլ զով է լինում և անձրևային։ Առաջ Կենտրոնական բարձրաւանդակի վրայ աճում էին փշատերեւ անտառներ, բայց նրանք համարեա բոլորն էլ արմատախիլ են արւած. այժմ նրանց տեղ տարածւում են մարգագետիններ և մացառուտներ։ Բոլորովին այլ է Լուււրա և Ալլիէ գետերի հովիտների բնութիւնը. այդտեղ կլիման տաք է, բուսականութիւնը՝ հարուստ. այդտեղ կան ընկուզենու և շագանակենու ամբողջ պուրակներ։

Մի ուրիշ լեռնախումբ բռնում է Փրանսիայի հիւսիսարեւմտեան անկիւնը—Բրետանի թերակղզին և Նորմանդիայի մի մասը։ Նա իր մեծութեամբ և բարձրութեամբ չէ կարող հասնել Կենտրոնական բարձրաւանդակին. ամենաբարձր տեղերում իսկ նա ծովի մակերևոյթից ընդամենը 200 սաժեն է բարձր, իսկ մեծ մասը՝ նոյնիսկ 100 սաժենից ցածր։ Նրա մակերևոյթը միակերպ է։ Բրետանի և Նորմանդիայի կլիման ծովային է։ Բրետանում աճում են մշտադալար ծառեր՝ մրտենի, դափնի, և եապոնական կամելիա. իսկ խաղող չի հասնում այնտեղ։ Պտղատու ծառերից լաւ հասնում է միայն խնձորենին։ Երկրագործութեամբ այնտեղ պարապել կարելի է, բայց աւելի լաւ աճում է խոտը. Բրետանի և Նորմանդիայի մարգագետինները բռնում են ընդարձակ տարածութիւններ և միշտ կանաչ են։

Փրանսիայի երրորդ լեռնախումբը—Վոգեզները բարձրաւում են Փրանսիայի և Գերմանիայի սահմանում։ Իր բարձրութեամբ այդ լեռնախումբը մի փոքր միայն յետ է մնում Կենտրոնական լեռնախմբից։



Ֆրանսիական դաշտավայրերը տարածւում են Կենտրոնական լեռնաշխարհի շուրջը՝ երեք կողմից: Դէպի հիւսիս տարածւում է Հիւսիսային-Ֆրանսիական դաշտավայրը (նա կոչւում է նաև Պարիզեան դաշտավայր, որովհետև մօտաւորապէս նրա կենտրոնում է գտնւում Պարիզ քաղաքը): Այդ դաշտավայրով են հոսում հետեւեալ գետերը—Սոմմա, Սենա, և Լուարա: Պարիզեան դաշտավայրի հողը արգաւանդ է: Կլիման համարեա այնպէս մեղմ է, ինչպէս Բրետանում, բայց համեմատաբար աւելի չոր և տաք: Սա Ֆրանսիայի ամենաբերրի մասն է. այդտեղ շատ լաւ աճում են ցորեն և բազուկ, իսկ հարաւային կողմում՝ նաև խաղող ու շաքարի ճակնդեղ:

Պարիզեան դաշտավայրը արեւելեան կողմում աստիճանաբար բարձրանում է և աննկատելի կերպով բարձրաւանդակ դառնում. այդտեղ են ընկնում Լօտարինգիայի և Լանզը բարձրաւանդակները. դրանց վրայ տարածւում են կաղնու փարթամ անտառներ:

Կենտրոնական լեռնաշխարհից դէպի արեւմուտք տարածւում է Գարոննայի դաշտավայրը: Սրա մէջտեղով հոսում է Գարոննա գետը: (Գարոննայի գետաբերանը մակընթացութեան և տեղատուութեան շնորհիւ լայնացել է և կոչւում է Ժիրոնդ): Գարոննայի դաշտավայրի կլիման մեղմ է և տաք. այդտեղ հասնում են ոչ միայն ցորեն և խաղող, այլ և եգիպտացորեն ու դեղձ: Այդտեղ պատահում են մշտադալար ծառերի մի քանի տեսակներ, օրինակ՝ խցանակաղնի: Գարոննայի դաշտավայրը մեծ մասով շատ բերրի է:

Կենտրոնական լեռնաշխարհից դէպի արեւելք, նրան Իւրալից և Ալպերից բաժանող մի հովտի մէջ ընկնում է Ռոնայի դաշտավայրը: Այդտեղով է հոսում Սոննա գետը, (Ռոնայի վտակ), իսկ յետոյ՝ Ռոնա գետը: Ռոնայի դաշտավայրը հարաւային կողմից բաց է. այս պատճառով այդ հարթութեան նոյն իսկ հիւսիսային կողմում, Սոննայի ափերին, կլիման այնքան մեղմ է, որ այնտեղ շատ լաւ աճում են խաղող և եգիպտացորեն. իսկ այդ նոյն դաշտավայրի հարաւում՝ կլիման մերձարեւադարձային է: Այդտեղ աճում են մշտադալար թփեր և ծառեր, որոնցից առանձին նշանակութիւն ունի ձիթենին:

Ֆրանսիական Ալպերը բաղկացած են շատ լեռնաշղթա-



ներից, որոնք գոյացել են բիւրեղացած (արևելեան կողմում) և կրաքարային (նրանցից արևմուտք) տեսակներից։ Ֆրանսիական Ալպերի ամենաբարձր գագաթն է՝ Մոնբլան (ծովի մակերևոյթից  $4\frac{1}{2}$  վերստ բարձր)։ Իւրա լեռնաշղթան ևս կրաքարային ծագում ունի։



Նկ. 33. Մոնբլան լեռան տեսարան՝ Շամունի գիւղից։ Արձան ի յիշատակ գիտնական Մոսսիւրի և Բաւմ ուղեցոյցի, որը առաջին անգամ բարձրացաւ Մոնբլանի գագաթը և յետոյ ցոյց տւեց Մոսսիւրին ճանապարհը։

Ֆրանսիայի հարաւային կողմում, իսպանական սահմանի վրայ, բարձրանում են Պիրենէեան լեռները. սրանց՝ դէպի Ֆրանսիա նայող լանջերը ծածկւած են մարգագետիններով և անտառներով, մինչդեռ իսպանական լանջերը լերկ են։

Ֆրանսիայի բնակիչների թիւն է՝ 39 միլիոն։ Ազգաբնակութեան ամենամեծ մասը կազմում են ումանական ցեղին պատկոնող ֆրանսիացիները. սրանց լեզուն, ֆրանսերէնը, ունի երկու գլխաւոր բարբառ—հիւսիսային և հարաւային։ Հիւսիսային բարբառն է դարձել ֆրանսիական գրական լեզու։

Ֆրանսիայի միայն ծայրերում ապրում են նաև ուրիշ ազգութիւններ, բայց փոքր չափով. հարաւ-արևելեան կողմում—իտալացիներ,



հիւսիս-արեւելեան կողմում—Ֆլամանդցիներ (գերման ժողովուրդ), հիւսիս-արեւմուտքում—բրետոնցիներ (թւով 1 միլիոն. սրանք մնացորդներ են մի հին ժողովրդի, կելտերի, որոնք առաջ գրաւել էին Ֆրանսիայի և Գերմանիայի մի խոշոր մասը). հարաւ-արեւմտեան կողմում ապրում են քսակեր (հին իրերական ժողովրդի մնացորդներ, թւով 100 հազար):

### ՅՐԱՆՍԻԱՅԻՆԵՐԻ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ԿԵԱՆՔԸ:—

Ֆրանսիան նախ և առաջ երկրագործական երկիր է: Բնակիչները կէսը իր աշխատանքը հողի վրայ է թափում, գլխաւորապէս հողից է ստանում իր ապրուստի միջոցները: Ֆրանսիայի ամբողջ տարածութեան կէսից աւելին ծածկւած է արտերով և այգիներով<sup>1)</sup>: Առանձնապէս խնամքով է մշակւած Հիւսիսային Փրանսիական դաշտավայրը: Երբ մարդ ամառւայ վերջին անցնում է այդ դաշտավայրով՝ նրա առաջ փուռում են ցորենի ոսկեգոյն-գեղնաւուն ընդարձակ արտեր, որոնց մէջ բազմաթիւ գիւղացիներ խումբ-խումբ աշխատում են և հնձում արտերը: Յորենի հունձը միշտ էլ առատ է լինում: Բացի ցորենից՝ Հիւսիսային Ֆրանսիական դաշտավայրում մշակում են նաև՝ վարսակ, խոտաբոյսեր, բազուկ, որոնցով գիւղացիները կերակրում են իրենց ձիերին և կաթնատու կենդանիներին: Ապա՝ այդ դաշտավայրում ցանում են մեծ քանակութեամբ ճակնդեղ, որից ախշափ շաքար են պատրաստում, որ ոչ միայն ամբողջ Ֆրանսիային է բաւականութիւն տալիս, այլ մի մասն էլ ուրիշ երկիրներ են արտահանում:

Սենա, Լուարա գետերի և նրանց վտակների հովիտներում անընդհատ տարածւում են այգիներ. այդ այգիներում աճուք են՝ խնձորենի, կեռասենի և խաղողի որթ: Եկամտի մեծ աղբիւր է հանդիսանում զինեգործութիւնը, որ առանձնապէս զարգացած է Սենա գետի վտակ Մարնայի հովտում—Շամպայն նահանգում: Այստեղ պատրաստում են աշխարհահռչակ շամպայն գինին:

Շատ լաւ է մշակւած նաև Գարոննայի դաշտավայրը: Այդ-

<sup>1)</sup> Եւրոպայի և ոչ մի ուրիշ պետութեան մէջ մշակւած հողերը այդչափ մեծ տարածութիւն չեն բռնում:



տեղի տաք կլիման թոյլ է տալիս մշակել ոչ միայն ցորեն, այլ նաև եգիպտացորեն: Այգիներից մեծ քանակութեամբ ստացւում են՝ դեղձ և սալոր: Խաղողի այգիները այդտեղ աւելի ևս մեծ տեղ են բռնում, քան Հիւսիսային Ֆրանսիական դաշտավայրում: Գարոննայի ափերին տարածւող այգիներից ստացւող զինին, որ յայտնի է Բորդօ գինի անունով, շատ է հռչակւած շամպայնի հետ միասին:



Նկ. 34. Խաղողի այգիներ Շամպայնում:

Աւելի մեծ տարածութիւններ են բռնում խաղողի այգիները Ռոնայի դաշտավայրի հարաւային մասում: Այնչափ առատութեամբ գինի է արտադրւում այնտեղ, որ գինեգործները երբեմն դժւարութեամբ են կարողանում ամբողջը վաճառել \*): Բացի խաղողի որթից՝ Ռոնայի հարթութեան հարաւային կողմում մշակւում են նաև մեծ քանակութեամբ ձիթենի և թթենի: Զիթապտղից ստացւում է ընտիր ձէթ, որ Պրովանս նահանգի անունով «Պրովանսի ձէթ» է կոչւում և լաւ հռչակ ունի: Թըթենու տերւներով կերակրւում են շերամի որդերին: Ռիվիերայում, այսինքն Միջերկրականի ծովափնեայ մասում, Ալպերից դէպի հարաւ, ահագին քանակութեամբ բազմազան

\*) Գինու արտադրութեամբ Ֆրանսիայի հետ մրցում է միայն Իտալիան:

ծաղիկներ են աճում—վարդ, մեխակ, յաւմիկ և այլն: Այս ծաղիկներից պատրաստում են անուշահոտ իւղեր (դուխիներ):



Նկ. 35. Տեսարան Ռիվիերայում:

Փրանսիայի լեռնախմբերը անյարմար են երկրագործութեան համար, որովհետեւ դեռինք քարքարոտ է, կլիման էլ՝ չափից աւելի խոնաւ: Այդտեղի բնակիչները զբաղւում են գլխաւորապէս անասնաբուծութեամբ:

Բրետանը և նրա հարեան Նորմանդիան հարուստ են հիւթաշատ մարգագետիններով, ուստի և Փրանսիայի այդ մասերում ծաղկում է կաթնասնտեսութիւնը: Բազմացնում են նաեւ թէ բեռնակիր և թէ արագավազ ընտիր ձիեր:

Այդտեղ մշակւում են նաեւ պտղատու ծառերի, յատկապէս խնձորենու այգիներ:

Կենտրոնական լեռնաշխարհի ամենալաւ մասերը խոր գետահովիտներն են: Գետափերին տարածւում են շատ այգիներ և շագանակի պուրակներ. շագանակը խեղճ գիւղացիները գործ են ածում հացի փոխարէն: Իսկ Կենտրոնական լեռնաշխարհի բարձր սարահարթերը ամայի են. ձմեռը այդտեղ ձիւնը երկար ժամանակ նստած է մնում, գարնանը հովիւները այդտեղ են քշում հովիտներից ոչխարի ահագին հօտեր և այդտեղ արածացնում են մինչև աշուն. ոչխարի կաթից պատրաստում են ընտիր պանիր:



Անասնաբուծութիւնն է նաև Ալպերի ու Պիրենէեան լեռների բը-  
նակիչների գլխաւոր զբաղմունքը:

Ֆրանսիայի ափերը ողողող ծովերը հարուստ են ձկներով,  
ուստի և ծովափնեայ բնակիչների համար, մանաւանդ Բրետա-  
նում, ձկնորսութիւնը ապրուստի կարևոր օժանդակ միջոց է  
համարուում:

Ֆրանսիայի ամենալաւ ձկնորսները, դրա հետ միասին նաև ա-  
մենափորձեալ ծովագնացները՝ բրետոնցիներ են: Սրանք մեծ առազա-  
տանաւերով մտնում են Գերմանական ծովը, հասնում են Իսլանդիայի  
մօտերը, որտեղ նրանք բռնում են մեծ քանակութեամբ ձուկ: Նրանք  
նաւում են նոյն իսկ Ատլանտեան օվկիանոսով, դէպի Նիու-Փաուել-  
լենդի ափերը:

Հանքագործութիւնը Ֆրանսիայում կարևոր զբաղմունքնե-  
րից է: Գերմանիայի սահմանի մօտ գտնւում են հարուստ եր-  
կաթահանքեր, իսկ Բելգիայի սահմանի մօտ—քարածուխի հան-  
քեր: Երկաթ և քարածուխ ստացւում են նաև Կենտրոնական  
լեռնաշխարհում, Լուարայի և Ալլիէի հովիտներում: Այն վայ-  
րերում, որտեղ ստացւում է քարածուխ և երկաթ, այնտեղ էլ  
զարգացած է մշակողական արդիւնագործութիւնը: Ֆրանսիայում  
գործարաններ շատ կան, որոնք պատրաստում են այն բո-  
լորը, ինչ անհրաժեշտ է Ֆրանսիացիներին—զանազան գործ-  
ւածքներ, մեքենաներ, յախճապակէ ամաններ և այլն: Գոր-  
ծարանային շատ ապրանքներ արտահանւում են Ֆրանսիայից  
ուրիշ երկիրներ: Մեծ հռչակ ունեն Ֆրանսիայում պատրաս-  
տած մետաքսէ գործւածքները և արդուզարդի ու մոզայի  
բազմատեսակ առարկաները: Ֆրանսիական ապրանքներն ընդ-  
հանրապէս աչքի են ընկնում իրենց նրբութեամբ, ճաշակով և  
շքեղութեամբ: Արտաքին առևտրի շրջանառութեամբ Ֆրան-  
սիան յետ է մնում միայն Անգլիայից, Գերմանիայից և Միա-  
ցեալ-Նահանգներից:

|                                                        |                    |
|--------------------------------------------------------|--------------------|
| 1905 թւականին արտաքին առևտրի շրջանառութիւն ունեցել են. |                    |
| Անգլիան (առանց գաղութների).                            | 9.187.000.000 ուռ. |
| Գերմանիան . . . . .                                    | 6.273.000.000 »    |
| Միացեալ-Նահանգները . . . . .                           | 5.126.000.000 »    |
| Ֆրանսիան . . . . .                                     | 4.580.000.000 »    |
| Հոլլանդիան. . . . .                                    | 3.584.000.000 »    |
| Բելգիան , . . . .                                      | 3.425.000.000 »    |
| Ռուսաստանը. . . . .                                    | 1.712.000.000 »    |



Ժանսպարհների հաղորդակցութիւնը Ֆրանսիայում շատ զարգացած է։ Բացի երկաթուղային գծերի խիտ ցանցից՝ ամենուրեք կան յարմարաւոր խճուղիներ։ Ֆրանսիական գետերը մեծ չեն, ուստի և յարմար չեն նաւարկութեան համար. բայց Ֆրանսիացիները խորացրել են այդ գետերը և միացրել իրար հետ բազմաթիւ ջրանցքներով։

Նշանաւոր են հետեւեալ ջրանցքները.—Բուրգունդական, որ միացնում է Սենա գետը Ռոնայի վտակ Սոննայի հետ. Կենտրոնական ջրանցք, որ միացնում է Լուարա գետը կրկին Սոննայի հետ. Հարաւային ջրանցք, որ միացնում է Գարոննան Ռոնայի և Միջերկրական ծովի հետ։

Ֆրանսիայի ծովային նաւատորմը բաւական մեծ է. Ֆրանսիական նաւերը լողում են դէպի հեռաւոր երկիրներ։

Վերջին ժամանակներում Ֆրանսիայի արդիւնագործութեան, առևտրի և ճանապարհների հաղորդակցութեան մէջ նկատելի է ոչ-բաւարար առաջադիմութիւն, —մինչդեռ ուրիշ երկիրներ, մանաւանդ Անգլիան և Գերմանիան, աւելի ու աւելի առաջադիմում են։ Այս դրութեան գլխաւոր պատճառը այն է, որ Ֆրանսիային բաւականութիւն չէ տալիս հայրենի երկրից ստացւող քարածուխը, որ անհրաժեշտ է գործարանների, երկաթուղիների և շոգենաւերի համար. ուստի և Ֆրանսիացիները ստիպւած են մեծ քանակութեամբ քարածուխ գնել Անգլիայից, Բելգիայից և Գերմանիայից։

Ալպերում և Վոգեզներում շատ գործարաններ բանում են լեռնային գետերի և գետակների օգնութեամբ. բայց այդ լեռները գտնւում են ծայրագաւառներում, գլխաւոր քաղաքներից հեռու։

Միւս պետութիւնների հետ մրցելուն արգելք է հանդիսանում և այն, որ Ֆրանսիայի ազգաբնակչութիւնը վերջին ժամանակներում շատ դանդաղ է աճում։ Այդ երկրում ծնւում են համարեա այն թւով մարդիկ, ինչ թւով որ վախճանւում են. լինում են նոյնիսկ տարիներ, երբ մեռածների թիւը աւելի է ծնւածների թւից։ Մինչդեռ Եւրոպայի մնացած բոլոր պետութիւնների ազգաբնակչութիւնը անընդհատ և արագ կերպով աճում է։



Վերջին ժամանակներում Ֆրանսիայի ազգաբնակչությունը մէկ տարւայ ընթացքում աւելանում է հազիւ 60.000 հոգով, իսկ Գերմանիայում—800.000-ով:

| 1872 թւականին ունէին՝ |                | իսկ 1908 թւին ունէին՝ |                |
|-----------------------|----------------|-----------------------|----------------|
| Ֆրանսիան              | 36 միլ. բնակիչ | Ֆրանսիան              | 39 միլ. բնակիչ |
| Անգլիան               | 33 » »         | Անգլիան               | 45 » »         |
| Գերմանիան             | 42 » »         | Գերմանիան             | 63 » »         |

Ֆրանսիացիները ընդհանրապէս հարուստ են, բարեկեցիկ ապրուստ ունեն: Ֆրանսիական գիւղացիները ունենում են ոչ միայն սեփական հող, տուն և անասուններ, այլ նաև բաւական փող: Նրանք այդ փողերը խնայողական դրամարկղ կամ բանկ են զցում, իսկ սրանք էլ իրենց կողմից այդ փողերը պարտք են տալիս ուրիշ պետութիւնների: Ֆրանսիական ահագին դրամագլուխներ դրած են օտարերկրեայ զանազան ձեռնարկութիւնների մէջ:

Ֆրանսիացիները աշխատասէր, խնայող և հաշուով մարդիկ են: Դարերից ի վեր մեծ հարստութիւններ են դիզել Ֆրանսիայում և ժառանգութիւն թողնել սերունդէ սերունդ:


Ժողովրդական կրթութիւնը Ֆրանսիայում քարձր է: Տարրական, միջնակարգ և բարձրագոյն դպրոցներ այնտեղ շատ կան: Ֆրանսիական գիտնականները և գրողները համաշխարհային հռչակ ունեն: Ֆրանսերէն շատ գրքեր թարգմանւում են եւրոպական բոլոր լեզուներով: Սակայն ժողովրդական կրթութեան մէջ ևս վերջերս գերմանացիները ֆրանսիացիներից աւելի առաջ են անցնում: Ֆրանսիայում 1000 նորակոչ զինւորներից անգրագէտ են դուրս գալիս 35 հոգի, իսկ Գերմանիայում—3000 հոգուց միայն 1-ը:

Թէև տարրական կրթութիւնը Ֆրանսիայում պարտադիր է, բայց զլխաւորապէս շնորհիւ այն հանգամանքի, որ կաթոլիկ հոգևորականութեան ձեռքին էր գտնւում մինչև վերջերս դպրոցների մի խոշոր մասը, անգրագէտներ դեռ կան ֆրանսիացիներին մէջ:

**ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՒ ՔԱՂԱՔՆԵՐԸ:**— Ֆրանսիան հասարակապետութիւն է: Երկրի համար օրէնքներ հրատարակելու իրաւունքը պատկանում «Ազգային ժողովին» (պարլամենտ)



տին), որ բաղկացած է օրէնսդրական երկու հաստատութիւնից (պալատից). 1. «պատգամաւորների ժողով», որի անդամներին ընտրում է ամբողջ ժողովուրդը 4 տարով, 2. «սենատ» (ծերակոյտ), որի անդամներն ընտրւում են 9 տարի ժամանակով՝ առանձին յանձնաժողովների կողմից: Պետութեան ներկայացուցիչ հանդիսանում է հասարակապետութեան նախագահը, որին ընտրում է «Ազգային ժողովը»՝ 7 տարով: Հասարակապետութեան նախագահն է յարաբերութիւն պահպանում օտար պետութիւնների հետ, նա է նշանակում մինիստրներին, որոնք կառավարում են երկիրը և պատասխանատու են ժողովրդական ներկայացուցիչների (պարլամենտի անդամների) առաջ: Մինիստրները իրենց պաշտօնում մնալ կարող են միայն այնչափ ժամանակ, քանի դեռ վայելում են պարլամենտի վստահութիւնը. հակառակ դէպքում նրանք պարտաւոր են հրաժարւել:



Նկ. 36. Պարիզեան ճեարան (յետևում երևում է էյֆելեան աշտարակը):

Ֆրանսիայի մայրաքաղաքն է՝ Պարիզ (Իլ-դը-Ֆրանս նահանգում): Պարիզը Ֆրանսիայի սիրտն է: Այդտեղ է գտնւում պարլամենտը, այդտեղ է նստում հասարակութեան նախագահը: Պարիզը հսկայական, համաշխարհային քաղաք է, ունի մօտ 3 միլիոն բնակիչ. մեծութեամբ Պարիզը յետ է մնում միայն



ձոնդոնից և Նիու-Եորկից: Պարիզը գտնւում է Ֆրանսիական դաշտավայրի կենտրոնում, Սենա գետի և Նրա վտակ Մարնայի խառնարանի մօտ: Պարիզը միացած է Ֆրանսիայի բոլոր մասերի հետ երկաթուղիներով, գետերով ու ջրանցքներով: Ոչ մի պետութեան մէջ մայրաքաղաքը չունի այն մեծ նշանակութիւնը, ինչ որ Պարիզը՝ Ֆրանսիայի համար: Պարիզում են գտնւում ոչ միայն պետական գլխաւոր հաստատութիւնները, այլ և այնտեղ են կենտրոնացած դպրոցական ամենալաւ հաստատութիւնները, գրադարանները, թանգարանները, պատկերասրահները և թատրոնները: Պարիզում է գտնւում Ֆրանսիական ամենալաւ համալսարանը, այնտեղ են հրատարակւում Ֆրանսերէն ամենայայտնի գրքերը, հանդէսները և լրագիրները: Այնտեղ է կենտրոնացած Ֆրանսիայում պատրաստւած ամեն տեսակ ապրանքների առևտուրը: Բացի դրանից՝ Պարիզում քաղմագան գործարաններ և արհեստանոցներ աւելի շատ կան, քան թէ Ֆրանսիական որևէ ուրիշ քաղաքում: Այս ամենի պատճառով էլ իրենց խելքով և ընդունակութեամբ աչքի ընկնող բոլոր Ֆրանսիացիները ձգտում են դէպի Պարիզ, որպէս զի այնտեղ գործադրեն իրենց ոյժերը: Այս հանգամանքը օգուտ է բերում մայրաքաղաքին, բայց փաս է գաւառական քաղաքների համար:

Պարիզը տարածւում է Սենա գետի երկու ափերին, որոնք միացած են իրար հետ բազմաթիւ կամուրջներով: Քաղաքի ամենահին մասը գտնւում է կենտրոնում, մի փոքր կղզու վրայ: Այդտեղ է գտնւում «Աստուածամօր Պարիզեան մայր եկեղեցին» (Notre Dame de Paris).

Քաղաքի ամենահոուն փողոցները գտնւում են Սենայի աջ ափին: Այդտեղ վաղ առաւօտից սկսած մինչև ուշ գիշեր երթևեկում են բազմաթիւ կառքեր, աւտոմոբիլներ, էլեքտրաքարշեր և այլն: Պարիզում կայ նաև ստորերկրեայ էլեքտրաքարշ: Երկար շարքերով ձգւում են շքեղ խանութներ. կան այնպիսի մեծ վաճառատներ, որոնք ամբողջ շէնքեր են գրաւում և ունեն հարիւրաւոր, նոյնիսկ հազարաւոր գործակատարներ: Այդտեղ են կենտրոնացած նաև քաղաքի թատրոնները, սրճարանները, որոնք երեկոները շատ լաւ լուսաւորւում են և լիքը լինում ժամանակ անցկացնող հասարակութեամբ: Սենայի աջ ափին է գտնւում նաև Լուվրը. սա մի մեծ արքունիք է, որտեղ առաջ ապրում





Նկ. 37. Լուվրի բանգարանը Պարիզում:

էին Ֆրանսիայի թագաւորները. իսկ այժմ այդտեղ են գետեղւած գանազան թանգարաններ և պատկերասրահներ:

Սենայի ճակի ափին են գտնուում՝ սենատը, պատգամաւորների ժողովը, համալսարանը, համարեա մնացած բոլոր բարձրագոյն դպրոցները, որոնք կենտրոնացած են այսպէս կոչւած «Լատինական թաղում»։ Այդտեղ բնակուում են բազմաթիւ ուսանողներ, որոնց թւում նաեւ շատ օտարերկրացիներ։ Այդտեղ է գտնուում Մարսեան դաշտը, որտեղ կադմակերպուում են համաշխարհային ցուցահանդէսներ. այդտեղ է աշխարհիս ամենաբարձր աշտարակը—«Էյֆելեան աշտարակը» (150 սաժէն բարձր)։ Այդ աշտարակի կատարից լզիտողի առջև տարածուում է ամբողջ Պարիզը՝ մինչև 50 վերստ շրջակայքով։ Այնտեղից երևում են քաղաքի գործարանային արւարձանները, այգիները, բնդարձակ պարկերը։

Պարիզի արւարձաններից նշանաւոր են՝ Վերսալ—քեղ այգիներով և արքունիքներով, Սելը՝ պետական յախճապակէ գործարանով։

Որովհետև Պարիզի նշանակութիւնը Ֆրանսիայի համար վերին աստիճանի մեծ է, ուստի և նա շատ լաւ ամրացրած է. քաղաքը շրջապատւած է խրամատով և բերդապարիսպով։ Բացի դրանից՝ պաշտպանւած է բազմաթիւ մարտկոցներով։

**Հաւր**—նաւահանգիստ է Սենայի գետաբերանի մօտ։

Այդ նաւահանգիստը նշանաւոր է իր հաղորդակցութեամբ՝ Անգլիայի, Գերմանիայի և Մեացեալ-Նահանգների հետ։

**Ռուան**—գործարանային քաղաք է և նաւահանգիստ Սենայի վրայ։

**Լիլ**—գործարանային մեծ քաղաք է Բելգիական սահմանի մօտ՝ քարածուխի հարուստ հանքերով։ Նշանաւոր է ճոթեղէն



արդիւնագործութեամբ և մետաղաձուլական գործարաններով:

**Ռէյմս**—Շամպայն նահանգում, նմանապէս գործարանա-  
յին քաղաք է:

**Ռէյմսը** կենտրոն է շամպայն գինու առևտրի: Այդ գինին մեծ  
չափերով պատրաստում է քաղաքի շրջակայքում և պահում է գետ-  
նի տակ փորած հսկայական նկուղներում, կան մինչև 13 վերստ եր-  
կայնութիւն ունեցող նկուղներ:

**Րուլոն և Կալէ**,—այդտեղով են երթեկում Անգլիա:

Կալէից մինչև Դուվը նաւահանգիստը (Անգլիա) շոգենաւը գնում է  
բնդամենը մէկ և կէս ժամում:

**Շերբուրգ**—պատերազմական նաւահանգիստ է:

**Րիեստ**—նմանապէս պատերազմական նաւահանգիստ է,  
ունի նաւաշինարաններ, որտեղ պատրաստում են զրահակիր նա-  
ւեր, մարտանաւեր և պատերազմական ուրիշ նաւեր:

**Նանտ**—նաւահանգիստ է Լուարայի գետաբերանի մօտ:

**Րորդօ**—նաւահանգիստ է Ժիրոնդի վրայ, մակընթացու-  
թեան շնորհիւ մատչելի է ովկիանոսային նաւերի համար: Այդ-  
տեղ է կենտրոնը «բորդօ» գինու արտադրութեան և առևտրի:

**Տուլուզա**—Գարոննայի և «Հարաւային ջրանցքի» միացման տե-  
ղում: Մոնպելիէ—Միջերկրականի ափին: Դրանք հարաւային Փրան-  
սիայում արդիւնագործական նշանաւոր քաղաքներ են, ունեն համալ-  
սարան:

**Լիոն**—մեծ քաղաք է (մօտ 500 հազար բնակչով), գտնու-  
ում է Ռոնա գետի և Նրա վտակ Սոննայի խառնարտնի մօտ:  
Ոչ միայն Փրանսիայում, այլ նաև ամբողջ աշխարհում մե-  
տաքսագործութեան ամենանշանաւոր կենտրոնն է:

**Կրեզօ**—«Կենտրոնական ջրանցքի» վրայ, մետաղաձուլա-  
կան հսկայական գործարանով:

Այդ գործարանում պատրաստում են՝ շոգեմեքենաներ, ուրիշ  
տեսակ մեքենաներ, թնդանոթներ, զրահներ՝ պատերազմական  
նաւերի համար և նոյնիսկ ամբողջ ականանաւեր, որոնք ջրանցքով  
ծովն են դուրս գալիս:

**Սան-էտիէն**—Լուարայի հովտում, քարածուխի հանքերի մերձա-  
կայքում, արդիւնագործական քաղաք է, նշանաւոր է մեքենաների և  
գէնքի արդիւնագործութեամբ:

**Վիլի**—բուժավայր (կուրօրտ) է Ալլիէ գետի վրայ, ունի  
հանքային տաք աղբիւրներ:



**Մարսէյլ**—իր մեծութեամբ Ֆրանսիայի երկրորդ քաղաքն է (ունի 500 հազարից աւելի բնակիչ): Նշանաւոր նաւահանգիստ է՝ հաղորդակցութիւն պահպանելու համար Ասիայի և Աֆրիկայի հետ:

**Տուլոն**—պատերազմական նաւահանգիստ է Միջերկրական ծովի ափին:

**Նիցցա**—բուժավայր է Ռիվիերայում—Միջերկրականի ծովափին:

Հիւսիսային քամիներից պաշտպանւած է լեռներով. շրջապատւած է փարթամ ծաղկանոցներով և մշտադալար ծառերի այգիներով:

Զմեռ ժամանակ, երբ աւելի հիւսիս բնկնող երկիրներում ցուրտ և խոնաւ է լինում, այդտեղ, Ռիվիերայում, սովորաբար եղանակը լինում է տաք, պայծառ: Այս պատճառով էլ ձմեռը այդտեղ են գալիս շատ հարուստներ և հիւանդներ՝ ոչ միայն Ֆրանսիայից, այլ նաև ուրիշ երկիրներից:

Նիցցայից ոչ-հեռու գտնւում է ՄՈՆԱԿՕ կոչւող անկախ, բայց աննշան իշխանութիւնը ( $1\frac{1}{2}$  քառ. մերստ տարածութեամբ և 15,000 բնակիչներով): Մոնակոն յայտնի է նրանով, որ այնտեղ, ծովափին, գտնւում է Մոնտէ-Կարլօն, թղթախաղի յայտնի տնով: Մոնակոն իր գոյութիւնը պահպանում է գլխաւորապէս թղթախաղից ստացւող եկամուտով:

**ՅՐԱՆՍԻԱՅԻ ԿԱԼԻԱՄՆԵՐԸ**:—Եւրոպայում Ֆրանսիային պատկանում է Կորսիկա կղզին, որ իր բնութեամբ նման է Սարդինիային. բնակիչներն են՝ իտալացիներ:

Միւս աշխարհամասերում Ֆրանսիային են պատկանում բազմաթիւ գաղութներ. դրանք բոլորը միասին իրենց տարածութեամբ Ֆրանսիայից տասն անգամ մեծ են:

Աֆրիկայում գտնւող ֆրանսիական գաղութներից նշանաւոր են—Ալժիր, Թունիս, Սուդանի մի մասը և Մադագասկար:

Ասիայում—Հնդկաչինի արևելեան մասը:

Ամերիկայում—Գլխանայի մի մասը և Մարտինիկա կղզին:

Աստրալիայում—Նոր-Կալեդոնիա և Տայիթի:

Իր գաղութների հետ Ֆրանսիան պահպանում է տոնտորական սերտ կապ. այնտեղ է ուղարկւում իր գործարանային



ապրանքները և այնտեղից արտահանում է հում նիւթեր ու սը-  
նընդի միջոցներ:

Ալժիրից արտահանում են՝ գինի, պրովանսի ձէթ, բանջարեղէն,  
որ այնտեղ աւելի շուտ է հասնում քան Ֆրանսիայում: Սուդանից  
արտահանում են—արմաւի ձէթ, կաուչուկ. Մադագասկարից—բամբակ  
և համեմունքներ. Հնդկաչինից—բրինձ, և այլն:

Շատ ֆրանսիացիներ գաղթում են Ալժիր և Թունիս ու բնակու-  
թիւն հաստատում այնտեղ, կազմելով ազգաբնակչութեան տիրապետող  
դասակարգը:

## Բ Ե Լ Պ Ի Ս

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ:—Իր բնութեամբ Բելգիան  
բաժանւում է երկու մասի—հիւսիսային և հարաւային: Հիւ-  
սիսային Բելգիան հարթ է: Գերմանական ծովի ափերին տա-  
րածւում են մի շարք դիւններ (աւազաթմբեր), որոնք սկսւում  
են Ֆրանսիայում, Պա-դը-Կալէի մօտ, և շարունակւում են Հոլ-  
լանդիայում: Դիւնների յետևում տարածւում են մարգագե-  
տիներ, իսկ աւելի հեռւում՝ բլրաշատ հարթութիւններ: Այդ  
հարթութիւնները արգաւանդ են:

Հիւսիսային Բելգիայով է հոսում Շելդա գետը:

Հարաւային Բելգիան լեռնոտ է. այդ մասում են տա-  
րածւում Արդենները, որոնք ներկայացնում են ընդարձակ  
լեռնաշխարհ: Արդենները բարձրաւանդակի նմանութիւն ունեն,  
կտրուած են խոր գետահովիտներով: Թէպէտ Արդենները բար-  
ձրը չեն (ամենաբարձրը՝ 300 սաժէն), բայց միշտ ամպերով  
են պատած լինում, որովհետեւ ընկնում են արեւմտեան խո-  
նաւաբեր քամիների առաջ: Արդենները ծածկւած են անտառ-  
ներով, մարգագետիներով և մացառուտներով: Արդենների  
հիւսիսային ստորոտների մօտ, երկրի խորքում, գտնւում են  
քարածուխի և երկաթի ընդարձակ հանքեր, որոնք կազմում են  
Բելգիայի բնական հարստութիւնը:

Բելգիայում ապրում են 7 միլիոնից աւելի մարդիկ <sup>1)</sup>:

<sup>1)</sup> 1 միլիոնով աւելի, քան Եւրոպական Թիւրքիայում, որ Բելգի-  
այից 6 անգամ մեծ է իր տարածութեամբ:



Մէկ քառակուսի վերստի վրայ Բելգիայում միջին հաշուով ապրում են 250 հոգի: Ոգգաբնակութեան խտութեամբ Բելգիան ամբողջ երկրագնդի վրայ առաջին պետութիւնն է:

Բելգիայի բնակիչներն են՝ հիւսիսում—Ֆլամանդցիները, իսկ հարաւում—վալոնները: Ֆլամանդցիները գերման ժողովուրդ են, խօսում են հոլլանդերէնին նման լեզուով. իսկ վալոնները ումանական ժողովուրդ են, ֆրանսիացիներին ցեղակից և խօսում են ֆրանսերէն լեզուով: Թէ ֆլամանդցիները և թէ վալոնները կաթոլիկ են <sup>1)</sup>:

**ԲԵՆԼԳԻԱՅԻՆՆԵՐԻ ԶԲԱՆՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ԿԵԱՆՔԸ:**—Բելգիացիների գլխաւոր զբաղմունքներն են, մանաւանդ հարաւային մասում, հանքագործութիւնը և գործարանային արդիւնագործութիւնը: Բարածուխի արտադրութիւնը Բելգիայում սկսել է շատ վաղուց, —աւելի շուտ, քան Եւրոպայի մի ուրիշ երկրում: Դարերի ընթացքում շատ քարածուխ են փորել-հանել այդտեղ. չնայելով դրան՝ Բելգիայում քարածուխի արտադրութիւնը այժմ էլ շարունակւում է ահագին չափերով, միայն թէ հանքահորերը (շախտաները) աւելի ու աւելի խորանում են. նրանցից մի քանիսը հասել են մինչև  $1\frac{1}{2}$  վերստ խորութեան—ծովի մակերևոյթից աւելի քան 1 վերստ ցածր. դրանք երկրագնդի ամենախոր հանքահորերն են:

Բացի քարածուխից՝ Բելգիայում ստացւում է նաև մեծ քանակութեամբ երկաթ: Եւ ահա, շնորհիւ երկաթի ու քարածուխի առատութեան՝ փոքրիկ Բելգիան դարձել է Եւրոպայի արդիւնագործական առաջնակարգ երկիրներից մէկը: Առանձնապէս զարգացած է այնտեղ մեքենագործութիւնը, հրազեններ, ապակեայ ամանեղէն և ճոթեղէն պատրաստելը:

Գիւղատնտեսութիւնը Բելգիայում երկրորդական նշանակութիւն ունի. բայց այդ զբաղմունքն ևս օրինակելի կերպով է առաջ տարւում: Հողը ամեն տեղ, բացի Արդեններից, խնամ-

<sup>1)</sup> Բելգիայի ազգաբնակչութեան 55 տոկոսը ֆլամանդցիներ են, 45 տոկոսը՝ վալոններ: Մակայն վերջիններս առաջիններից աւելի բարձր են իրենց մտաւոր կարողութիւններով և առաջադիմութեամբ: Պետական լեզուն էլ ֆրանսերէնն է:



քով է մշակուժ և տալիս է ցորենի, ճակնդեղի ու կտաւատի առատ հունձ: Ճակնդեղից պատրաստում են շատ շաքար: Խոնավ տեղերում բելգիացիները մշակում են գլխաւորապէս խոտաբոյսեր և բազմացնում են ձիեր ու կովեր: Բելգիական բեռնակիր ձիերը հռչակած են ամբողջ եւրոպայում:



Նկ. 38. Քարածուխի եւ երկաթի հանքերի տարածումը Եւրոպայում:

Ճանապարհների հաղորդակցութիւնը Բելգիայում շատ է զարգացած: Երկաթուղային գծերի ցանցը ոչ մի պետութեան մէջ այնչափ խիտ չէ, որչափ Բելգիայում<sup>1)</sup>:

Բացի երկաթուղիներից՝ Բելգիայում փորել են նաև շատ ջրանցքներ, որոնցով համարեա՞յն այնչափ բեռ է տեղափոխւում, որչափ երկաթուղով:

Արտաքին առևտրի շրջանառութեամբ փոքրիկ Բելգիան առաջ է նոյնիսկ Ռուսաստանից (նաև Աւստրո-Ունգարիայից և Իտալիայից): Արտահանութեան գլխաւոր առարկաներն են՝ մետաղեայ գործիքներ և քարածուխ: Ներմուծւում է՝ գլխաւորապէս հացահատիկ:

<sup>1)</sup> Չկայ Բելգիայում և ոչ մի տեղ, որ երկաթուղուց հեռու լինէր աւելի քան 10 վերստ:



Շնորհիւ արդիւնագործութեան հսկայական դարգացման՝ Բելգիայում դիզել են անագին դրամագլուխներ: Հարուստ մարդկանց թիւը այդ երկրում շատ մեծ է. իւրաքանչիւր 80 հոգուց մէկը ապրում է իր դրամագլխի տոկոսով միայն: Բելգիական անագին դրամագլուխներ շահեցւում են օտարերկրեայ ձեռնարկութիւնների մէջ: Հենց Ռուսաստանում շատ գործարաններ, հանքեր, էլեքտրական լուսաւորութեան և էլեքտրաքարշի ընկերութիւններ բելգիացիների ձեռքին են գտնւում (օրինակ՝ Թիֆլիսի էլեքտրաքարշի ընկերութիւնը բելգիական է): Բայց, չնայելով դրան, բանւոր դասակարգը Բելգիայում քիչ վաստակ ունի և ապրում է բաւական խեղճ. ընդհանրապէս՝ ժողովրդի անտեսական կացութիւնը Բելգիայում նախանձելի չէ:

Ժողովրդական կրթութեան կողմից էլ Բելգիան յետ է մընացել հարեան երկիրներից: Բարձրագոյն և միջնակարգ դպրոցների թիւը Բելգիայում բաւարար է (կայ 5 համալսարան, որոնցից 3-ը՝ մասնաւոր): Սակայն տարրական դպրոցների թիւը բաւարար չէ, ուսումնի ևս պարտադիր չէ. բնակիչների 12 տոկոսը անգրագէտ է: Այստեղ էլ նկատելի է կաթոլիկ հոգևորականութեան բացասական ազդեցութիւնը, որի ձեռքում է գտնւում ժողովրդական կրթութեան ղեկը:

**ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՒ ՔԱՂԱՔՆԵՐԸ:**—Բելգիան սահմանադրական լծագաւորութիւն է:

Բելգիայի մայրաքաղաքն է՝ Բրիւսսէլ (600 հազար բն.), գտնւում է երկրի կենտրոնում, շատ երկաթուղային գծերի հանգույցում. նշանաւոր առևտրական և արդիւնագործական քաղաք է:

Արդիւնագործական միւս նշանաւոր քաղաքներն են.— Լիւտիխ կամ Լիեժ՝ Մասսի վրայ,—գինագործական, մեքենագործական և շինարարական գործարաններով: Գենտ—Շելդայի վրայ—կտաւի և չթի գործարաններով:

Անտովերպեն—նշանաւոր նաւահանգիստ է Շելդայի վրայ. ծովի մակընթացութեան շնորհիւ այդտեղ են հասնում նոյնիսկ ովկիանոսային շատ նաւեր:



**Օստէնդէ**—նաւահանգիստ է Գերմանական ծովի վրայ: Յայտնի է ծովային լողարաններով:

Բելգիան զաղուլթներ չունի. բայց Բելգիայի թագաւորի հովանաւորութեան տակ է գտնուում Աֆրիկայի Կոնգօ շրջանը. այդտեղից Բելգիա են բերում կաուչուկ և փղոսկր:

Բելգիայի հարաւ-արեւելեան կողմում, Գերմանիայի սահմանների մօտ, գտնուում է ԼՈՒԲՍԵՄԲՈՒՐԳ մեծ-դքսութիւնը: Իր բնութեամբ Լուքսեմբուրգը նման է Հարաւային Բելգիային: Մեծ-դքսութեան ազգաբնակչութիւնը բաղկացած է գերմանացիներից և մասամբ ֆրանսիացիներից. զբաղւում են գիւղատնտեսութեամբ և հանքագործութեամբ— երկաթի արտադրութեամբ:

## Հ Ո Լ Լ Ս Ն Գ Ի Ս

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ:** —Հոլլանդիան կամ Նիդերլանդիան<sup>1)</sup> ցածր երկիր է. նրա  $\frac{1}{4}$  մասը գտնուում է նոյն իսկ ծովի մակերևոյթից ցածր: Երկիրը ծովից պաշտպանում են ծովափի դիմները (աւազամբեր), որոնք ներկայացնում են բնական պատնէշներ ծովի ալիքների դէմ: Այդ դիւնները երբեմն 30 սաժէն բարձրութիւն և 3—5 վերստ լայնութիւն են ունենում: Դիւնների մէջ եղած տարածութիւնների վրայ հոլլանդացիները կառուցել են 7—8 սաժէն բարձրութեամբ արւեստական պատնէշներ: Այդ պատնէշները այնքան լայն են, որ նրանց վրայ շատ տեղ գցել են ծառուղիներ և խճուղիներ: Այդպիսի պատնէշներ են կանգնեցրել նաև գետերի ափերին:

Պատնէշների կառուցումը պահանջել է, ի հարկէ, երկարատև, յամառ աշխատանք և հսկայական ծախքեր: Այդ պատնէշները կառուցել են հոլլանդացիները հետզհետէ, միջին դարերից սկսած: Միմիայն արտաքին, այսինքն դէպի ծովը նայող պատնէշները 3 միլիարդ (3 հազ. միլիոն) ուրբուց աւելի են նստել ժողովրդի վրայ: Պատնէշների պաշտպանութիւնն էլ ահագին ջանքեր է պահանջում կառավարութիւնից. բազմաթիւ ճարտարապետներ հետևում են, որ այդ պատնէշները չլիսուեն, որովհետև ծովի ամեն մի հեղեղումը կարող է մեծամեծ աւերումներ առաջացնել և տասնեակ հազարաւոր մարդկանց ջրի տակ անել: Այսպէս՝ 13-րդ դարում պատահած հեղեղումները ջրի տակն են արել երկրի մի մասը և գոյացրել այժմեան Զիւդերզէէ ծոցը. Ֆրիսլանդեան կղզիներն էլ նոյն պատճառով կտրւել են մայր ցամաքից:

<sup>1)</sup> «Նիդերլանդիա» անունը նշանակում է «ցածր երկիր»:



Սակայն պատնէշները դեռ բաւական չեն՝ ծովից ցածր գտնւող վայրերը հեղեղումներից պաշտպանելու համար: Այդպիսի վտանգ սպառնում են երկրին ոչ միայն ծովը, գետերը, այլ և մթնոլորտային տեղումները և յորդ աղբիւրները: Սրանց շուրջ չէ կարող ինքն իրեն հոսել ծովը (ինչո՞ւ). ուստի երկիրը չորացնում, շուրջ հեռացնում են բազմաթիւ ջրանցքներով և քամաղացների միջոցով շարժւող ջրհան մեքենաներով:

Հոլլանդացիները ոչ միայն պաշտպանում են իրենց երկիրը ծովի հեղեղումներից, այլ և անընդհատ կռիւ մղելով ծովի դէմ, ոչ մի ջանք չեն խնայում և յետ են խլում ծովից ընդարձակ հողամասեր և չորացնելով դարձնում են արգաւանդ դաշտեր: Այս կերպ հոլլանդացիները ծովից ցամաքացրել են 4 հազար քառ. վերստ տարածութիւն: Ներկայումս նրանք ձեռնարկում են նոյնիսկ ցամաքացնելու Զիւդերզէէ ծոցը <sup>1)</sup>:

Հոլլանդիայի այն վայրերը, որոնք շրջապատւած են պատնէշներով և ամեն կողմից կտրուած են ջրանցքներով, կոչւում են պոլդեր: Սրանց հողը շատ արգաւանդ է, որովհետեւ բազկացած է տիղմից: Պոլդերները ծածկւած են արտերով կամ կանաչ մարգագետիններով:

Հոլլանդիայի կլիման խոնավ է, երկիրը մառախլապատ: Փետինը շատ էլ յարմար չէ հացահատիկներ բուսցնելու համար. ամենից լաւ աճում են ալյուտեղ մարգագետնի խոտեր:

Ազգաբնակչութեան մեծ մասը կազմում են հոլլանդացիները. հիւսիսում ապրում են նաև Հոլլանդացիներին ցեղակից ֆրիզներ, իսկ հարաւում—նմանապէս հոլլանդացիներին ցեղակից ֆլամանդցիներ: Հոլլանդացիները պատկանում են գերման ցեղին. կրօնով նրանց մեծ մասը բողոքական է, փոքր մասը՝ կաթոլիկ:

**ՀՈԼԼԱՆԴԱՅԻՆԵՐԻ ԶԲԱՆԾՈՒՆՔԵՐԸ ԵՒ ԿԵԱՆՔԸ:**—Արգաւանդ, բայց շատ խոնավ պոլդերները ամենից աւելի յարմար են անասնաբուծութեան համար, որն և կազմում է Հոլլանդիայի

<sup>1)</sup> Հոլլանդացիները մի այսպիսի խօսք ունեն, թէ՛ «Աստուծոս տեղծել է ծովը, իսկ մենք—ծովափնեայ ցամաքը»:



քնակիչները գլխաւոր զբաղմունքը: Հովանդական գիւղացիները պահում են ընտիր կովեր և արտադրում են մեծ քանակութեամբ կաթ ու սլանիք: Հովանդական պանիրն ևս, շէյցարականի պէս, լաւ հոշակ ունի: Համարեա ամեն մի գիւղում կայ պանրագործարան: Կաթը և պանիրը հովանդացիների արտահանութեան գլխաւոր առարկաներն են. արտահանում են գլխաւորապէս դէպի Անգլիա և Գերմանիա: Հովանդացիները երկրագործութեամբ ևս պարապում են, բայց փոքր չափով: Մի բանի պուղերներում զարգացած է ծաղկաբուծութիւնը:



Նկ. 39. Հովանդական գիւղացու բակ: Խոքը գիւղացին և նրա կինը կով են կթում: Զախ կողմը՝ ջրանցք, որ համարեա խոտով է ծածկւած:

Հովանդիայի ավերը ողողող ծովերը և ծոցերը, նաեւ պուղերների ջրանցքները հարուստ են ձկներով. ուստի և հովանդացիների համար ապրուստի կարեւոր օժանդակ միջոց է ծառայում ձկնորսութիւնը. մանաւանդ շատ ձուկ են որսում հովանդացիները Գերմանական ծովում:

Հովանդացիները ճարպիկ ծովագնացներ են: Դեռ 17-րդ դարում նրանք ծովային հեռաւոր ճանապարհորդութիւններ արին և ձեռք բերին ընդարձակ գաղութներ Զոնդեան կղզիների

վրայ: Գաղութների հետ ունեցած առևտուրն էլ հոլանդացիներին շատ օգուտ է բերում: Արտաքին առևտուրը Հոլանդիայում շատ է զարգացած. այդ կողմից նա նոյնիսկ Բելգիայից առաջ է: Գործարանային արդիւնագործութիւնը Հոլանդիայում չէ զարգացած՝ երկրում քարածուխ չլինելու պատճառով. մեծ նշանակութիւն ունի միայն նաւաշինութիւնը:

Հաղորդակցութեան միջոցները Հոլանդիայում գերադանց են: Երկաթուղային գծերի ցանցը թէպէտ շատ խիտ չէ, բայց դրա փոխարէն՝ ջրանցքներով երթեկեկում են բազմաթիւ շոգենաւեր և լաստեր:

Ժողովրդի քարեկեցութիւնը Հոլանդիայում աւելի բարձր է, քան Բելգիայում: Հոլանդական գիւղացիները լիսռատ ապրուստ ունեն: Նրանց տներում և բակերում պահպանւում են խիստ կարգ ու կանոն և մաքրութիւն:

Ժողովրդական կրթութիւնը շատ է տարածւած Հոլանդիայում. 1000 հոգուց միայն 18-ն է անգրագէտ:

**ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ, ՔԱՂԱՔՆԵՐԸ ԵՒ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ:—**

Հոլանդիան սահմանադրական թագաւորութիւն է: Պետութեան մայրաքաղաքն է՝ Հաագ: Սա մի փոքր, խաղաղ քաղաք է՝ չքեղ պարկերով շրջապատւած:

Ամստերդամ—Հոլանդիայի ամենամեծ քաղաքն է (500 հազարից աւելի բն.). նշանաւոր նաւահանգիստ է Զիւդերզէէ ծոցի ափին: Մի մեծ ջրանցք, որ մատչելի է նոյնիսկ ծովային նաւերի համար, կապում է Ամստերդամը ուղղակի Գերմանական ծովի հետ: Մի քանի ուրիշ, աւելի փոքր, ջրանցքներ կապում են Ամստերդամը Հոլանդիայի զանազան մասերի հետ: Լինելով նշանաւոր նաւահանգիստ՝ Ամստերդամը միևնոյն ժամանակ Հոլանդիայի արդիւնագործական կենտրոնն է: Այնտեղ են շինւում և նորոգւում նաւեր, պատրաստւում խաւիսներ և այլն:

Ամստերդամը յիշեցնում է Վենետիկ քաղաքը. ամբողջապէս կը տրրտւած է ջրանցքներով, որոնք քաղաքը բաժանում են 90 կղզիամասերի:

Ամստերդամից ոչ հեռու գտնւում է Զաանդամ (Զաարդամ), որ-



տեղ 18-րդ դարի սկզբում նաւաշինութիւն սովորեց ոռոսաց կայսր Պետրոս Մեծը:

**Ռոտտերդամ**—Հոլլանդիայի ամենանշանաւոր նաւահան-գիստն է:

Գտնւում է Հոենոսի բազուկներից մէկի վրայ և միացած է Գերմանական ծովի հետ մի ջրանցքով. այդ ջրանցքով մինչև Ռոտտերդամ են գալիս հասնում ծովային նաւեր: Ռոտտերդամի մօտ գտնւում են նաւաշինութեան մեծ գործարաններ:

Հոլլանդիայի գաղութները շատ բնդարձակ են. իրենց տարածութեամբ նրանք 62 անգամ, իսկ բնակիչների թւով 7 անգամ մեծ են Հոլլանդիայից: Հոլլանդիային են պատկանում—Սումատրա, Եւա կղզիները, Բորնէօի մի մասը, Յելեբես, Մոլուկկեան կղզիները, Նոր-Գւինէայի մի մասը, Վեստ-Ինդիայում մի քանի կղզիներ, Գւինանայի մի մասը: Այդ բոլոր գաղութների թւում ամենանշանաւորն է՝ Եւա կղզին: Այդ կղզուց հոլլանդացիները բերում են մեծ քանակութեամբ շաքարեղէգ, սուրճ, ծխախոտ, պղպեղ և գաղութային (կոլոնիալ) ուրիշ ապրանքներ:

## Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ**.—Գերմանիայի հիւսիսային մասում տարածւում է «Գերմանական» կոչւող դաշտավայրը. նրանից հարաւ ընկնում են Գերմանական լեռնախմբերը, իսկ աւելի հարաւ—Վերին-Գերմանական կամ Բաւարական բարձրաւանդակը:

Գերմանական դաշտավայրը տարածւում է Հոլլանդիայի սահմանից սկսած, արեւմտեան կողմում, մինչև Ռուսաստանի սահմանը—արեւելքում: Այդ դաշտավայրը համարեա ամբողջապէս ծածկւած է հնումը հիւսիսային Գերմանիան բռնող սառցադաշտի մնացորդներով, տիղմով և աւազով. շատ տեղեր էլ ծածկւած են վալուներով: Հին սառցադաշտի այդ մնացորդները այնչափ շատ են, որ նրանցով կարելի կլինէր լցնել ամբողջ Բալտիկ ծովը:



Էլբա գետից դէպի արեւմուտք Գերմանական դաշտավայրը նման է Հոլլանդականին (վերջինս առաջինի շարունակութիւնն է կազմում): Գերմանական ծովի մօտերքում այդ դաշտավայրը շատ ցածր է, ծովը այդտեղ ևս, ինչպէս Հոլլանդիայում, մաշում է ծովափնեայ ցամաքը: Այն ծոցերը ուր թափւում են ներկայումս Էլբա և Վեզեր գետերը, առաջ ցամաք են եղել յետոյ միայն ծովը մաշել և ծոցեր է առաջացրել:

Այժմեան Հելզոլանդ կղզին մայր ցամաքից է կտրւած: Ծովի ալիքները ներկայումս էլ անդադար մաշում են այդ կղզու ափերը: Ծովի ափերին այդտեղ, ինչպէս նաև Հոլլանդիայում, տարածւում են ճահճոտ դաշտեր—մարշներ, որոնք նման են պոլդերներին: Նրանց մակերևոյթը հաւասար է ծովի մակերևոյթին, տեղ-տեղ էլ նոյն իսկ աւելի ցածր է (օրինակ՝ Էմս գետի բերանի մօտ): Ծովից մարշերը պաշտպանւում են, ինչպէս պոլդերները, պատնէշներով: Նմանապէս՝ ամեն կողմից նրանք կտրուած են ջրանցքներով: Մարշերից դէպի հարաւ ընկնում են գետերը, այսինքն սառցադաշտերից մնացած աւազոտ և տղմոտ վայրեր, որոնց վրայ տարածւում են մացառոտ տափաստաններ և տորֆային ճահճներ: Այդ տափաստաններից ամենամեծն է՝ Լիններուրգի տափաստանը, որ տարածւում է Էլբայի և Վեզերի միջև:

Էլբա գետից արեւելք Գերմանական դաշտավայրը այնքան էլ հարթ չէ: Բալտիկ ծովի ափերի երկայնութեամբ ձգւում են Մերձբալտեան բլրաշարքերը, որոնք գոյացել են հնումը այդտեղ եղած սառցադաշտի մորեններից: Բլրաշարքերի մէջ գտնւում են բազմաթիւ լճեր: Այդ լճերն ևս սառցադաշտային ծագում ունեն: Բալտիկ ծովի եզրը աւելի բարձր է, քան Գերմանական ծովինը. հա ցածր է միայն այն տեղերում, ուր ծովն են թափւում Օդեր, Վիսլա և Նեման գետերը: Սրանց գետաբերաններից գոյացել են սակաւաջուր ծովախորշեր (հաֆեր), որոնք ծովի հետ միացած են ջրի միայն չափազանց նեղ շերտերով:


Մերձբալտեան բլրաշարքերից դէպի հարաւ Գերմանական դաշտավայրը միապաղաղ է: Այդտեղ ամենուրեք պատահում են աւազոտ և ճահճային տեղեր. բայց մեծ տարածութիւն են բռնում նաև աւելի արգաւանդ հողեր:

Գերմանական դաշտավայրի կլիման բարեխառն է, սակայն



արևմտեան կողմում աւելի մեղմ է, ծովային, իսկ արևելեան կողմում— աւելի խիստ, ցամաքային:

Գերմանական լեռնախմբերը բռնում են համարեա այնչափ տարածութիւն, որչափ Գերմանական դաշտավայրը: Այդ լեռներից նշանաւոր են՝ Հարց—հիւսիսում, Վոգելզներ և Շւարցվալդ—հարաւում, Հռենոսեան լեռներ—արևմտեան կողմում, Բոհեմեան լեռների փէշերը—արևելքում և Տիւրինգեան անտառը—միջին մասում: Այս լեռները բաղկացած են գլխաւորապէս՝ գրանիտից, գդձաքարից և բիւրեղացած ուրիշ տեսակներից:



Նկ. 40. Հռենոսեան ձեռարան:

Լեռների լանջերը ուղղաձիգ են, իսկ գագաթները՝ կլոր: Նրանք բարձր չեն ( $1-1\frac{1}{2}$  վերստ) և մեծ մասով ծածկւած են խիտ անտառներով. այդ պատճառով են ասում՝ Տիւրինգեան «անտառ», (փոխառակ ասելով՝ լեռ), Բոհեմեան անտառ, Շւարցվալդ (Սև անտառ) և այլն:

Իրենց ձևով Գերմանական լեռները նման են միմեանց: Մնացած լեռներից զգալի կերպով տարբերւում են միայն Հռենոսեան լեռները, սրանք բարձրաւանդակի ձև ունեն և կտրուած են Հռենոս գետի և նրա վտակների՝ Մոզելի և Լանի հովիտներով: Հռենոսի միւս նշանաւոր վտակներից՝ Մայնը



իր սկիզբը առնում է Տիւրինգեան լեռներից, իսկ Նեկկարը՝ Շւարցվալդից:

Հոենոսեան բարձրաւանդակի վրայ տեղ-տեղ պատահում են հրաբուխի բերաններ՝ ջրով լցւած. տեղ-տեղ էլ բարձրանում են իրենց ձեռք լաւ պահպանած հանգած հրաբուխներ: Գերմանական լեռների միջև ընկնում են հովիտներ: Նշանաւոր է՝ Շւարցվալդի և Վոգեզների միջև ընկնող Հոենոսեան հովիտը: Հովիտների կլիման մեղմ է, հողը՝ շատ արգաւանդ, ուր նոյնիսկ խաղող է հասնում:

Գերմանական լեռները տարածւում են մինչև Դանուբ գետը, որ իր սկիզբը առնում է Շւարցվալդից: Դանուբից դէպի հարաւ գտնւում է Վերին-Գերմանական կամ Բաւարական բարձրաւանդակը: Այս բարձրաւանդակի համեմատաբար ցածր մասում, Դանուբի հովտում, հողը արգաւանդ է. իսկ աւելի բարձրադիր մասում, Ալպերի մօտ, ծածկւած է հին սառցադաշտերի մնացորդներով և լճերով: Այդտեղի կլիման աւելի տաք չէ, քան Բալտիկ ծովի ափերի կլիման:

Ալպերի միայն հիւսիսային՝ կրաքարային փէշերն են մտնում Գերմանիայի սահմանների մէջ:

Բնական հարստութիւններով Գերմանիան յետ չէ մնում Ֆրանսիայից: Զիշտ է, Գերմանիայի հողը մեծ մասով այնչափ արգաւանդ չէ, կլիման էլ այնպէս մեղմ չէ, ինչպէս Ֆրանսիայում, բայց դրա փոխարէն երկրի խորքում թաղւած կան աւելի հարուստ հանքեր—մանաւանդ քարածուխի, երկաթի և աղի հանքեր:

Գերմանիայի բնակիչների թիւն է՝ 63 միլիոն: Ազգաբնակչութեան ահագին մեծամասնութիւնը—<sup>9</sup>/<sub>10</sub>-ը գերմանացիներ են: Սրանց լեզուն, գերմաներէնը, երկու գլխաւոր բարբառ ունի—վերին և ստորին գերմանական բարբառներ <sup>1)</sup>: Գերմանիայում կան նաև ուրիշ ազգութիւններ, որոնք ապրում են

<sup>1)</sup> «Վերին»-գերմանական բարբառով խօսում են հարաւային գերմանացիները, իսկ «ստորին»-գերմանական բարբառով—հիւսիսային գերմանացիները: Վերին-գերմանական բարբառը աւելի քաղցրահնչիւն է, աւելի մշակւած, ուստի և այդ բարբառն է դարձել գերմանացիների գրական լեզուն:




պետութեան ծայրերում. արեւելեան կողմում՝ լեհեր (մօտ  $3\frac{1}{2}$  միլ.) և վենդեր. արեւմտեան կողմում՝ ֆրանսիացիներ և հոլլանդացիներ. հիւսիսում՝ դանիացիներ: Գերմանիայի բնակիչների մօտ  $\frac{2}{3}$ -ը բողոքական է,  $\frac{1}{3}$ -ը՝ կաթոլիկ:

**ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԻ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ԿԵԱՆՔԸ:**—Գերմանիան Եւրոպայի միակ պետութիւնն է, որտեղ հաւասարապէս զարգացած են թէ՛ գիւղատնտեսութիւնը և թէ՛ գործարանային արդիւնագործութիւնը:

Դիւղատնտեսութիւնը Գերմանիայում հասել է կատարելագործութեան բարձր աստիճանին: Գերմանական դաշտավայրը աչքի չէ ընկնում արգաւանդութեամբ. սակայն նա շատ լաւ մշակած է և տալիս է համարեա այն չափով առատ հունձ, որչափ Հիւսիսային Ֆրանսիական դաշտավայրը: Գերմանական գիւղացիները հողը մշակում են շատ հիմնովին, գիւղատնտեսական գիտութեան օրէնքների համաձայն: Գերմանացիները բերք են վերցնում նաև այնպիսի հողամասերից, որ ուրիշ երկիրներում համարւում են անյարմար և չեն մշակւում բոլորովին: Գերմանացիները հետզհետէ չորացնում են ճահիճները. նրանք առանց ցանելու չեն թողնում ոչ մի կտոր հող, միայն թէ ամեն տարի փոխում են ցանքսի տեսակի:

Գերմանական դաշտավայրի սակաւ բերրի վայրերում ցանում են գլխաւորապէս հացար, որ գերմանացիների համար նոյն նշանակութիւնը ունի, ինչ որ ֆրանսիացիների համար՝ ցորենը. ցանում են նաև վարսակ ու գարի: Միևնոյն հողաբաժնում ուրիշ տարիներ հացահատիկների փոխարէն ցանում են խոտաբոյսեր և հասարակ ճակնդեղ:



Յիլ. 41. Երկրագործութեան արածման համեմատական մեծութիւնը Եւրոպական պետութիւններում և Միացեալ-Նահանգներում:



Զբաղւելով երկրագործութեամբ՝ նրանք բազմացնում են նաև առնասուններ,—ծի, կով, խոզ: Գերմանական դաշտավայրի աւելի արգաւանդ մասերում, յատկապէս հարաւային շերտում, պատահում են շաքարի ճակնգեղի ընդարձակ դաշտեր:

Հարաւային Գերմանիայում, լեռնալանջերին և բարձրաւանդակներին վրայ, գերմանացիները անում են նոյն ցանքսերը, ինչ որ հիւսիսում: Իսկ լեռնագոգերում, որտեղ կլիման աւելի տաք է և հողն էլ աւելի արգաւանդ, ցանում են՝ ցորեն, եգիպտացորեն, խաղող, գայլուկ և մշակում են զանազան պտղատու ծառեր: Այգեգործութիւնը և երկրագործութիւնը առանձնապէս զարգացած են Հռենոսի հովտում:

Բաւարական քարծրաւանդակի վրայ ևս, Դանուբի հովտում, ծաղկում է երկրագործութիւնը: Այդտեղի արգաւանդ հողում լաւ աճում են՝ ցորեն և գայլուկ:

Ալպերի փէշերի մօտ ապրող բնակիչները զբաղւում են անասնաբուծութեամբ: Այնտեղ ամենուրեք տարածւում են հիւթաշատ խոտով ծածկւած կանաչ արօտատեղիներ, որոնց վրայ արածում են կաթնատու անասունների հօտեր:

Մեծ հողատարութեամբ մշակելով հողը՝ գերմանացիները միևնոյն ժամանակ լաւ պահպանում են իրենց անտառները—մաքրում են, պաշտպանում են վնասակար միջատներից և այլն: Քիչ-քիչ միայն նրանք կտրտում են անտառը. շատ տեղ նրանք նոյն իսկ նոր անտառներ են տնկում, որոնց մէջ ծառերը աչքի են ընկնում իրենց որոշ դասաւորութեամբ:

Ահագին նշանակութիւն ունի Գերմանիայի համար հանքագործութիւնը: Գերմանիան քարածուխի արտադրութեամբ յետ է քնում միայն Միացեալ-Նահանգներից և Անգլիայից, իսկ երկաթի արտադրութեամբ՝ միայն Միացեալ-Նահանգներից:

|                   |                              |                          |
|-------------------|------------------------------|--------------------------|
| Քարածուխի արտադր. | 1907 թ. երկաթի արտադրութիւնը | 1907 թ.                  |
| Մ.-Նահանգն.       | 25.770 միլ. փութ             | Մ.-Նահանգ, 1.600 մ. փութ |
| Անգլիա .          | 16.610 » »                   | Գերմանիա . 800 » »       |
| Գերմանիա .        | 12.550 » »                   | Անգլիա . 620 » »         |
| Աւստ.-Ունգ.       | 2.640 » »                    | Ֆրանսիա . 220 » »        |
| Ֆրանսիա .         | 2.210 » »                    | Ռուսաստան . 170 » »      |
| Ռուսաստան .       | 1.520 » »                    |                          |

Քարածուխ և երկաթ Գերմանիայում շատ լեռների մէջ կան, յաճախ իրար մօտ: Քարածուխի ամենահարուստ հանքեր, նմանապէս երկաթի նշանաւոր հանքեր, գտնւում են Գերմանիայի հարաւ-արեւելեան



կողմում, Աւստրո-Ունգարիայի և Ռուսաստանի սահմանների մօտերը: Ապա՝ քարածուխի շատ հարուստ հանքեր կան նաև Հոենոսեսան լեռների հիւսիսային ստորոտների մօտ, Հոենոսի վտակ Ռուրի շրջանում: Երկաթի ամենահարուստ հանքերը գտնւում են Հոենոսի մի ուրիշ վտակի՝ Մոգելի շրջանում,—Ֆրանսիայի և Լուքսեմբուրգի սահմանի մօտ:

Յինկի արտադրութեամբ Գերմանիան միւս բոլոր երկիրներից առաջ է. իսկ պղնձի և կապարի արտադրութեամբ յետ է մնում միայն մի քանի երկիրներից: Հանքագործութեան մէջ գերմանացիները շատ ճարպիկ են. նրանք յաջողութեամբ մետաղ են ստանում նոյն իսկ այնպիսի աղքատ հանքերից, որոնք ուրիշ երկիրներում ամենևին չեն էլ շահագործւում:

Գերմանիայում արտադրւում են նաև բազմազան ուրիշ հանքեր—վիմագրական քար, նաւթ (Լիւնեբուրգի տափաստանում), գրաքար և սաթ: Բայց առանձնապէս մեծ նշանակութիւն ունի աղի արտադրութիւնը. երբեմն  $1\frac{1}{2}$ —2 վերստ հաստութեամբ աղահանքեր են պատահում Գերմանիայում: Բացի սովորական, կերակրի աղից, գերմանացիները արտադրւում են մեծ քանակութեամբ նաև ուրիշ տեսակ աղ, այսպէս կոչւած «ստասֆուրտեան»<sup>1)</sup> աղ», որ գործ է դրւում գլխաւորապէս հողը պարարտացնելու համար:

Հանքագործութիւնից աւելի ևս զարգացած է Գերմանիայում մշակողական արդիւնագործութիւնը: Գործարաններում և արհեստանոցներում աշխատում են այն թւով մարդիկ, ինչ թւով՝ դաշտերում և արօտատեղիներում, այգիներում և անտառներում: Ամբողջ Գերմանիայում ամենուրեք կան գործարաններ, մանաւանդ՝ Հոենոսեսան շրջանում և Սաքսոնիայում<sup>2)</sup>:

Գործարանային արդիւնագործութեան բոլոր ճիւղերի մէջ Գերմանիայում առաջին տեղը բռնում է մետաղագործութիւնը: Գերմանացի բանւորների ձեռքի տակից դուրս են

<sup>1)</sup> Այդ աղը «ստասֆուրտեան» է կոչւում այն պատճառով, որ սկզբում դրանից արտադրել սկսեցին Ստասֆուրտ քաղաքի մօտակայքում, Հարց լեռների հիւսիսային ստորոտների մօտ: Այդ աղից արտադրւում է տարեկան 200 միլ. փութ.

<sup>2)</sup> Հոենոսեսան շրջանում երկրագործութեամբ պարապում է ագգաբնակութեան ընդամենը  $\frac{1}{4}$  մասը, իսկ Սաքսոնիայում—հազիւ  $\frac{1}{8}$  մասը:



գալիս մետաղեայ ամեն տեսակ գործեր—սկսած ամենափոքրերից և հասարակներից, օրինակ՝ ասեղ, գրիչ, դանակ, ատաղձագործական և փականագործական գործիքներ, և վերջացրած խոշոր ու բարդ գործիքներով,—օրինակ՝ թնդանօթ, շոգեմեքենայ, շոգենաւ և ամեն տեսակ մեքենաներ։ Այս բոլորից պատրաստուում է անքան շատ, որ մետաղեայ ապրանքները կազմում են Գերմանիայի արտաքին առևտրի գլխաւոր առարկաները։

Հռենոսի վտակ Ռուրի ափին գտնուող Էսսեն քաղաքումն է մետաղաձուլական ամենամեծ գործարանը, դա Կրուպպի գործարանն է։ Այդտեղ պատրաստում են՝ երկաթուղու ուղւեր, վագոնների անիւներ և առանցքներ, շոգեմեքենաների և շոգենաւերի կաթսաներ, իսկ գլխաւորապէս՝ թնդանօթներ։ Կրուպպի գործարանը մի քաղաքի չափ է, այնտեղ աշխատող բանւորների թիւն է 30 հազար։ Կրուպպի գործարանում տարեկան 100 միլիոն փութ քարածուխ է վաւում։ Գործարանը ունի իր սեփական երկաթուղային գիծը, որով անցնում է օրական 50 գնացք։ Գործարանը ունի նաև քարածուխի և երկաթի սեփական հանքեր, երկաթահանքեր ունի նոյնիսկ Իսպանիայում, որոնցից հում նիւթը գործարանի տէրերը Էսսեն կն փոխադրում իրենց սեփական շոգենաւերով։ Գործարանը ունի 25 վերստ երկայնութեամբ (էմա գետի մօտ) մի դաշտ, որտեղ փորձի համար արձակում են գործարանում պատրաստած թնդանօթները։ Կրուպպի գործարանի բաժանմունքում, որ գտնւում է ծովափնեայ Քիլ քաղաքում, պատրաստում են զրահակիր նաւեր, մարտանաւեր, սկանանաւեր և մարդատար շոգենաւեր։

Երկրորդ տեղը, մետաղի արդիւնագործութիւնից յետոյ, բռնում է՝ քամիակի, քրդի և միտաքսի մշակութիւնը։

Երրորդ տեղը բռնում է քիմիական արդիւնագործութիւնը, այսինքն՝ զանազան թթւուտների, աղերի, ներկերի, սապոնի արտադրութիւնը և այլն։

Ապա՝ մեծ չափերով զարգացած է Գերմանիայում շաքարի եւ զարնջրի արտադրութիւնը։ Ճակնդեղից շաքար ստանալ,—դա գերմանական գիւտ է։ Գարեջուրն էլ գերմանացիների սիրած խմիչքն է։

Արտաքին առևտրի շրջանառութեամբ Գերմանիան յետ է մնում միմիայն Անգլիայից։ Գերմանիայից տրտահանւում են գլխաւորապէս գործարանային ապրանքներ, իսկ ներմուծւում են՝ հում նիւթեր և հացահատիկ։ Գերմանացիներին չեն բա-



ւականացնում իրենց երկրից ստացւող հացահատիկները, ուստի և մի մասը գնում են Ռուսաստանից և Միացեալ-Նահանգներին:

Գերմանիայի արտաքին առևտրին նպաստում է և այն հանգամանքը, որ նա ունի ծովային բազմաթիւ նաւեր, որոնք կանոնաւոր կերպով երթեկւում են ոչ միայն Եւրոպայի, այլ և մնացած աշխարհամասերի նշանաւոր նաւահանգիստների մէջ: Գերմանական մարդատար շոգենաւերը, որոնք Եւրոպայի և Հիւսիսային Ամերիկայի մէջ են երթեկւում, իրենց հսկայական մեծութեամբ և արագընթացութեամբ յետ չեն մնում անգլիական շոգենաւերից:

Ճանապարհների հաղորդակցութիւնը Գերմանիայում գերազանց է: Երկաթուղային գծերի ցանցի խտութեամբ Գերմանիան յետ է մնում միայն Բելգիայից և Անգլիայից: Երկաթուղային ճանապարհների երկայնութիւնը (55 հազար վերստ) համարեա այնչափ է, որչափ՝ Եւրոպական Ռուսաստանում, թէպէտ սրանից Գերմանիան տարածութեամբ 10 անգամ փոքր է:

Գերմանիայի գետերը, յատկապէս Հռենոսը, նմանապէս ծառայում են իբրև հաղորդակցութեան ընտիր միջոցներ: Այդ գետերի տաշտը շատ տեղ խորացրել և հարթել են, ափերն էլ ամրացրել են քարով: Նշանաւոր գետերը միացրած են ջրանցքներով: Այսպէս՝ Օդեր գետի վտակ Վարթան միացած է ջրանցքով Վիսլայի հետ, Էլբայի վտակներ Հաֆելը և Շպլէն—Օդերի հետ, Մայնը—Դանուբի հետ: Ամենից նշանաւորն է՝ Բիլի կամ «Վիրնելմ կայսեր» ջրանցքը, որ միացնում է Գերմանական ծովը Բալտիկ ծովի հետ: Այդ ջրանցքը մատչելի է նոյնիսկ ծովային մեծ նաւերի համար:

Գերմանացիները շատ քարեկեցիկ ապրուստ ունեն, — թէպէտ նրանք չունեն այնչափ խնայած կարողութիւններ, որչափ Ֆրանսիացիները, որովհետև առևտուրը և արգիւնագործութիւնը Գերմանիայում աւելի ուշ են սկսել զարգանալ, քան Ֆրանսիայում: Գերմանական գիւղացիները մեծ մասով ունեն սեփական հող և բաւականաչափ անասուն: Նրանց տները և միւս շէնքերը հաստահիմն են: Դործարանային բանւորներն էլ ստանում են բաւական լաւ աշխատավարձ:

Ժողովրդական կրթութիւնը Գերմանիայում այնպէս քար-



ծրը է, որպէս և ոչ մի ուրիշ պետութեան մէջ: Տարրական դպրոցներ Գերմանիայում շատ կան: Տարրական ուսումը պարտադիր է բոլոր երեխաների համար—սկսած 6 տարեկանից մինչև 14 տարեկան հասակը: Ժողովրդական դպրոցների ուսուցիչները ամենքի կողմից յարգւած են: Գերմանիայում շատ կան նաև միջնակարգ ու զանազան մասնագիտական դպրոցներ: Գերմանական համալսարանները և տեխնիկական բարձրագոյն դպրոցները համաշխարհային հռչակ են վայելում: Տպագրւած գրքերի քանակով Գերմանիայի հետ չէ կարող համեմատուել և ոչ մի երկիր: Բազմաթիւ գրական աշխատութիւններ, մանաւանդ գիտական գրւածքներ, թարգմանւում են օտար լեզուներով:

Նորակոչ անգրագէտ զինուորների թիւը մի քանի եւրոպական պետ.

|                                     |              |              |
|-------------------------------------|--------------|--------------|
| Գերմանիա                            | 3000 հոգուց. | 1 (1905 թ.)  |
| Դանիա                               | 1000 »       | 2 (1907 »)   |
| Շւէյցարիա                           | » »          | 5 (1905 »)   |
| Շւէդիա                              | » »          | 6 (1904 »)   |
| Անգլիա                              | » »          | 10 (1905 »)  |
| Հոլլանդիա                           | » »          | 18 (1906 »)  |
| Ֆրանսիա                             | » »          | 35 (1904 »)  |
| Բելգիա                              | » »          | 98 (1906 »)  |
| Յունաստան                           | » »          | 300 (1902 ») |
| Իտալիա                              | » »          | 306 (1905 ») |
| Եւր. Ռուսաստան (առանց Ֆինլեանդիայի) |              | 420 (1905 ») |
| Ռումինիա                            |              | 690 (1904 ») |

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ, ՔԱՂԱՔՆԵՐԸ ԵՒ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ.—

Գերմանիան 25 պետութիւնների դաշնակցութիւն է: Այդ դաշնակցութեան մէջ մտնում են՝ 4 թագաւորութիւն, 6 մեծ-դքսութիւն, 5 դքսութիւն, 7 իշխանութիւն, 3 ազատ քաղաք: Ամբողջ Գերմանիայի տարածութեան և ազգաբնակչութեան  $\frac{3}{5}$ -ից աւելին ընկնում է Գերմանիայի դաշնակցութեան մէջ մտնող ամենամեծ պետութեան՝ Պրուսիայի վրայ: Միւս 3 թագաւորութիւններն են—Բաւարիա և Վիւրտեմբերգ՝ Հաւաւային Գերմանիայում, Սաքսոնիա՝ Հիւսիսային Գերմանիայում: Գերմանական միւս պետութիւններից նշանաւոր է՝ Բադեն մեծ դքսութիւնը: Մնացած պետութիւններից իւրաքանչիւրը



ունի ընդամենը մի քանի հարիւր, երբեմն էլ մի քանի տասնեակ հազար բնակիչ, իսկ տարածութեամբ մեր մի նահանգից էլ մի քանի անգամ փոքր է: Բացի 25 պետութիւններից՝ Գերմանիային են պատկանում նաև Էլզաս ու Լոթարինգիա երկրամասերը, որոնք 1871 թւին Ֆրանս-պրոսական պատերազմից յետոյ Գերմանիային անցան և այժմ պատկանում են ամբողջ պետութեան ու կոչւում են «կայսերական երկիրներ»:

Գերմանական դաշնակցութեան մէջ մտնող 25 պետութիւններից ամեն մէկը անկախ է իր ներքին գործերի մէջ, ունի իր առանձին կառավարութիւնը և սահմանադրութիւնը: Ազատ քաղաքները—Համբուրգ, Բրեմեն և Լիւբեկ—մի-մի փոքրիկ հասարակապետութիւններ են, որոնք կառավարւում են ժողովրդի կողմից ընտրւող պատագամաւորական ժողովով: Պետական ընդհանուր գործերում բոլոր պետութիւններն էլ ենթարկւում են ընդհանուր գերմանական կառավարութեան. այդ ընդհանուր գործերն են—օտար պետութիւնների հետ յարաբերութիւն պահպանել, զօրք, պոստ, հեռագիր, մաքսատուն, և այլն:

Ամբողջ Գերմանիայի կառավարութեան գլուխն է Պրուսիայի թագաւորը, որը միևնոյն ժամանակ համարւում է ամբողջ Գերմանիայի կայսրը: Կայսրի իշխանութիւնը սահմանափակւած է պարլամենտով—ռայխստագով և դաշնակցական խորհրդով, որոնք Գերմանիայի ընդհանուր օրէնսդրական հաստատութիւններն են: Ռայխստագը ամբողջ Գերմանիայի ազգաբնակչութեան կողմից ընտրւած ժողովրդական պատգամաւորների ժողովն է, իսկ դաշնակցական խորհուրդը՝ բոլոր 25 պետութիւնների կառավարութիւնների ներկայացուցիչների ժողովը:

Գերմանական կայսրութեան և Պրուսական թագաւորութեան մայրաքաղաքն է—Բեռլին: Սա մի հսկայական քաղաք է, որ իր արւարձանների հետ միասին ունի մօտ 3 միլիոն բնակիչ: Այդտեղ է կայսրի աթոռանիստը, այգտեղ են գտնւում ռայխստագը և դաշնակցական խորհուրդը: Բերլինը գտնւում է Պրուսիայի կենտրոնում, Շպրէ գետի վրայ—ոչ հեռու այդ վրտակի և Հաֆելի խառնարանից և 15 երկաթուղային գծերի հանգույցում:

Թէպէտ Բերլինը Գերմանիայի համար չունի այն մեծ նշանակու-



Թիւնը, ինչ որ Պարիզը Ֆրանսիայի համար, բայց և այնպէս նա Գերմանիայի լուսաւորութեան, առևտրի և արդիւնագործութեան կենտրոնն է: Բերլինի համալսարանը և բարձրագոյն միւս դպրոցները ամենից աւելի ուսանողներ ունեն: Բերլինի վաճառատները իրենց մեծութեամբ յետ չեն մնում Պարիզի վաճառատներից: Այնքան շատ գործարաններ կան Բերլինում, որ այդ քաղաքի բնակիչների կէսից աւելին գործարաններում է աշխատում և ապրուստի միջոցներ հայթայթում: Առանձնապէս աչքի են ընկնում իրենց մեծութեամբ մետաղաձուլական գործարանները, որտեղ պատրաստում են շոգեկառքեր, էլեքտրական մեքենաներ և այլն:



Նկ. 42. Փողոց Բերլինում:

Բերլինը աշխարհիս ամենաբարեկէն քաղաքներից մէկն է: Նրա փողոցները հրաշալի կերպով սալաշատակւած են ասֆալտով, պահուած են շատ մաքուր, Այդ պատճառով էլ փողոցների օդը Բերլինում այնպէս փոշոտ չէ, որպէս ուրիշ մեծ քաղաքներում: Հաղորդակցութիւնը Բերլինում օրինակելի է: Փողոցներով ամեն տեղ անցնում են էլեքտրաքարշի գծեր. բացի դրանից՝ կան նաև էլեքտրաքարշի ստորերկրեայ գծեր: Փողոցներից վեր էլ, երկաթեայ բարձր սիւնների վրայ, կառուցել են երկաթուղու և էլեքտրաքարշի գծեր:

**Մագդերուրգ** — արդիւնագործական քաղաք է էլբա գետի վրայ:

Քաղաքից հարաւ տարածւում են ճակնդեղի ընդարձակ տնկարաններ և շաքարի բազմաթիւ գործարաններ: Այս պատճառով էլ Մագդերուրգը յայտնի է նաև շաքարի առևտրով:



Հաննովեր—արդիւնագործական քաղաք է:

Դորտմունդ և Էսսեն—յայտնի են մեքենաներ պատրաստող գործարաններով:

Բարմեն և Էլբերֆելդ, քիմիական նիւթերի, մահուղեղէնի և չթեղէնի գործարաններով:

Զոլինգեն.—այս քաղաքը յայտնի է դանակներ, մկրատներ, սղոցներ, խարտոցներ և ընդհանրապէս մետաղեայ մանր գործիքներ պատրաստող գործարաններով:

Կրեֆելդ—մետաքսեղէնի գործարաններով և Աախսեն—մահուղեղէնի գործարաններով:

Քէօլն—առևտրական և արդիւնագործական քաղաք է Հռենոսի վրայ. գտնուում է Բերլինից դէպի Պարիզ և Լոնդոն տանող ճանապարհի վրայ: Նշանաւոր է Քեօլնի տաճարը:

Վրանկֆուրտ—Մայնի վրայ. առևտրական նշանաւոր քաղաք է և երկաթուղային գծերի հանգույց:

Վիսըադեն—տաք աղբիւրներով հարուստ բուժավայր է. շրջապատւած է խաղողի և պլտղատու այլ ծառերի այգիներով՝ Հռենոսեան լեռների հարաւային ստորոտներում. ամառը այնտեղ են դիմում տաքնեակ հազարաւոր հիւանդներ:

Բրեսլաւ (500 հազ. բն.)

—արդիւնագործական և առևտրական քաղաք է Օդերի վրայ:

Քէօնիգսբերգ, Դանցիգ և Շտետին—նաւահանգիստներ են Բալտիկ ծովի վրայ. նշանաւոր են Ռուսաստանի հետ ունեցած առևտրով:



Նկ. 43. Քեօլնի տաճար:

**Քիլ**—նաւահանգիստ է Բալտիկ ծովի վրայ, Քիլի կամ «Վիլ-հելմ կայսեր» ջրանցքի սկզբին:

**Վերև յիշատակած բոլոր քաղաքները գտնւում են Պրուսական Թագաւորութեան մէջ:**

**Համբուրգ**—ազատ քաղաք է. ունի մօտ 1 միլիոն բնակիչ: Համբուրգը հսկայական նաւահանգիստ է՝ նաւաշինարաններով. իր ունեցած նշանակութեամբ նա յետ է մնում երկրագնդի միայն երկու նաւահանգիստներից—Լոնդոնից և Նիու-Եորկից: Համբուրգը գտնւում է Էլբայի վրայ, գետաբերանից 100 վերստ հեռու:

Գերմանական ծովի մակընթացութեան միջոցին Էլբայով մինչև Համբուրգ են գալիս ովկիանոսային մեծ շոգենաւեր, որոնք զանազան աշխարհամասերից այգտեղ են բերում հացահատիկներ, սուրճ, բամբակ, բուրգ ևայլն: Այս բոլորը նաւերից դատարկւում և տեղաւորւում են ապրանքային մեծ պահեստներում և ուղարկւում Գերմանիայի (նաև Աւստրո-Ունգարիայի) զանազան մասերը—կամ երկաթուղով, կամ գետերով և ջրանցքներով: Էլբայով դէպի վեր երթեկւում են տարեկան 40 հազարից աւելի նաւեր, որոնցից շատերը գնում են Բոհեմիա, մինչև իսկ Պրագա քաղաքը:

**Բրեմեն**—ազատ քաղաք է, նաւահանգիստ Վեզերի վրայ:

**Լիւբեկ**—ազատ քաղաք է և նաւահանգիստ՝ Բալտիկ ծովի վրայ:

**Դրեզդեն**—(500 հազ. աւելի բնակիչ.)—Սաքսոնիայի մայրաքաղաքն է. գտնւում է Էլբայի վրայ: Հռչակւած է իր գեղարւեստական ճեմարանով, պատկերասրահներով և թանգարաններով.

**Լայպցիգ** (500 հազ. աւելի բն.)—դարձեալ Սաքսոնիայում ունի համալսարան, որ ամենահինն է Գերմանիայում: Լայպցիգը կենտրոն է եւրոպական գրավածառութեան և գերմանական տպագրութեան. այդտեղ կան հսկայական տպարաններ և վրձագրատներ:

**Միւնխեն** (500 հազ. աւելի բնակիչ.)—Բաւարիա Թագաւորութեան մայրաքաղաքն է. գտնւում է Դանուբի վտակ Իզարի վրայ. յայտնի է իր բարձրագոյն դպրոցներով և պատկերասրահներով: Միւնխենը յայտնի է ընտիր գարեջրի գործարաններով:



Նիւրընքերդ—գործարանային մեծ քաղաք է հիւսիսային Բաւարիայում: Այդտեղ պատրաստած հարիւր-միլիոնաւոր խաղալիքներ, մատիտներ և քարետախտակներ ծախւում են աշխարհի բոլոր կողմերում:

Շտուտգարտ—Նեկկար գետի վրայ. Վիւրտեմբերդ թագաւորութեան մայրաքաղաքն է—հարաւային Գերմանիայում:

Մաննհայմ—արդիւնագործական քաղաք է և նաւահանգիստ՝ Հռենոսի վրայ, ուր այդ գետն է թափւում Նեկկարը

Հայդելբերգ—փոքրիկ քաղաք է Նեկկարի վրայ. յայտնի է Հայդելբերգի համալսարանը:

Շտրասբուրգ—Էլզաս-Լոթարինգիայի գլխաւոր քաղաքը. գտնւում է Հռենոսը Մարնայի և Ռոնայի հետ միացնող ջրանցքների և Պարիզից Վեննա տանող երկաթուղային գծի վրայ:

Միլիտուզեն—Հռենոսեան-Ռոնեան ջրանցքի վրայ. արդիւնագործական քաղաք է. նշանաւոր է բամբակեղէնի մշակութեամբ:

Գերմանիայի գաղութները բաւական ընդարձակ են (5 անգամ աւելի տարածութեամբ, քան բուն Գերմանիան): Գլխաւոր գաղութները գտնւում են Աֆրիկայում: Այստեղ Գերմանիային են պատկանում—Կամբերունը, Հարաւ-Արեւմտեան Աֆրիկայի մի մասը (Օրանժ գետից հիւսիս) և Արեւելեան Աֆրիկայի մի մասը (Աֆրիկական մեծ լճերի մօտ):

Ապա՝ Գերմանիային են պատկանում Աւստրալիայում՝ Նոր-Գլինէայի հիւսիս-արեւելեան մասը, Բիսմարկի արշիպելագը և Պոլինեզիայի մի քանի ուրիշ կղզիներ: Ասիայում—Կիաօ-Չաու: Այս գաղութները վաղուց չէ ինչ ձեռք են բերել գերմանացիները և առայժմ սրանց ոչ մի օգուտ չեն բերում, որովհետեւ սակաւ բնակիչներ ունեն և աղքատ են:

## Պ Ա Ն Ի Ա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ:—Դանիան բռնում է Իւտլանդիա թերակղզու հիւսիսային մասը և զանիական կղզիները, որոնցից նշանաւոր են՝ Զելանդիա և Ֆինլենդ:



Իր բնութեամբ Դանիան նման է Հիւսիսային Գերմանիային: Թէ Իւտլանդիա թերակղզին և թէ դանիական կղզիները հարթ են և ծածկած սառցադաշտային կաւով, աւազով և վալուններով:

Իւտլանդիա թերակղզու արեւելեան ծովափի երկայնութեամբ ձգւում են բլրաշարքեր, որոնք ուղղակի շարունակութիւն են կազմում Գերմանական Մերձբալտեան բարձրութեան:

Բլրաշարքերի արեւմտեան կողմում ընկած է ամայի աւազոտ շերտ:

Զելանդիա և Ֆիւնեն կղզիները նման են Իւտլանդիային, բայց համեմատաբար աւելի արգաւանդ են, որովհետեւ այնտեղ աւազ քիչ կայ, այդ պատճառով էլ այդ կղզիները Դանիայի ամենալաւ մասերն են:

Դանիան շրջապատւած է ծովերով, ափերը կտրտւած են. կլիման էլ բաւական մեղմ, ծովային է:

Դանիայում ապրում են գերմանացիներին (աւելի ևս նորւեգացիներին ու շվեդներին) ցեղակից դանիացիները:

**ԴԱՆԻԱՅԻՆԵՐԻ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ԿԵԱՆՔԸ:**—Դանիան գիւղատնտեսական երկիր է: Բնակիչների կէսից աւելին զբաղւում է երկրագործութեամբ և անասնաբուծութեամբ:

Դանիայում հողը գիւղացիների սեփականութիւն է կազմում. նրանք իրենց դաշտերը մշակում են, գերմանացիների նման, շատ խնամքով. հողից նրանք ստանում են հացահատիկների լաւ հունձ: Սակայն դանիացիները իրենց գլխաւոր ուշադրութիւնը դարձնում են անասնաբուծութեան վրայ,—պահում են կովեր, խոզեր, և ընտանի թռչուններ: Դանիացիների արտահանութեան գլխաւոր առարկաներն են կազմում՝ իւղը, միսը, և հաւի ձուն (արտահանում են գլխաւորապէս Անգլիա):

Գործարանային արդիւնագործութիւնը Դանիայում զարգացած չէ, որովհետեւ երկրում չկան քարածուխի հանքեր:

Դանիացիները լիառատ ապրուստ ունեն:

Ժողովրդական կրթութիւնը քարճր է Դանիայում: Բացի փոքրահասակների համար յատկացւած դպրոցներից՝ Դանիայում կան նաև բազմաթիւ դպրոցներ—«Ժողովրդական համալսարան»



ներ»՝ չափահասների համար: Այս վերջին դպրոցներում երեկոները գիւղացիները և բանւորները լրացնում են իրենց կրթութեան թերին:

**ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՒ ՔԱՂԱՔՆԵՐԸ:**—Դանիական պետութիւնը կառավարում է թագաւորը, որի իշխանութիւնը սահմանափակած է պարլամենտի կողմից:

Դանիայի մայրաքաղաքը և միակ մեծ քաղաքն (մօտ 500 հազար բն.) է՝ Կոպենհագեն, — Զելանդիա կղզու վրայ, Զունդ նեղուցի ափին:



Նկ. 44. Ջրանց եւ փողոց Կոպենհագենում:

Դանիային են պատկանում Եւրոպայում նաև Իսլանդիա և Ֆարերեան կղզիները:

**ԻՍԼԱՆԴԻԱՆ** երկրագնդի ամենամեծ հրաբխային կղզին է. համարեա 3 անգամ մեծ է Դանիայից: Սա ծովի մակերևոյթից կէս վերստ բարձր է և սարահարթի ձև ունի: Սարահարթի վրայ ամեն տեղ գտնւում են բազմաթիւ հրաբուխներ, որոնցից նշանաւորն է՝ Հեկլա: Բոլոր հրաբուխներն էլ ծածկւած են յաւերժական ձիւնով և սառցով:

Իսլանդիայում յաճախ պատահում են տաք աղբիւրներ, կան նաև հէյզերներ:

Իսլանդիայի կլիման դաժան է: Այնտեղ անտառ չկայ, երկրագործութեամբ էլ պարապել չէ կարելի: Աւելի ցածր տեղերում տարածւում են մարգագետիններ, իսկ բարձր տեղերում—տունդրաներ:

Իսլանդիայի ընտանիքների թիւը 100 հազարից պակաս է: Իրենց ծագումով նրանք նորեկացիների յետնորդներ են: Նրանք ապրում են միայն կղզու ծայրերին, ցածր տեղերում, զբաղւում են՝ անասնապահութեամբ և ձկնորսութեամբ, ծովային թռչուններ որսալով, գազայ թռչունի բմբուլ հաւաքելով:

Իսլանդիան համարեա անկախ է, ունի իր յատուկ պարլամենտը՝ գլխաւոր քաղաքն է Ռէյկիաւիկ, որ ընդամենը 4,000 բնակիչ ունի:

Ֆարերեան կղզիներն ևս (Իսլանդիայից հարաւ) հրաբխային ծագում ունեն: Այս կղզիների վրայ բուն են դնում ծովային միլիոնաւոր թռչուններ. իսկ մարդիկ այնտեղ շատ քիչ թւով են ապրում (15 հազար). որսում են ձուկ, ծովային թռչուններ, հաւաքում են գազայի բմբուլ: Դանիայի գաղութները (Գրենլանդիա, Վեստ-Ինդիայի կղզիներից մի քանիսը) նրա համար համարեա ոչ մի նշանակութիւն չունեն:

## ՍԿԱՆԴԻՆԱՎԻԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ:—Սկանդինաւեան թերակղզին Եւրոպայի բոլոր թերակղզիների մէջ ամենամեծն է. նա հաւասար է Պիրենէեան և Ապենինեան թերակղզիներին՝ միասին վերցրած:

Սկանդինաւեան թերակղզու ափերը շատ կտրտւած են, նրանց մօտ գտնւում են բազմաթիւ ժայռոտ, մանրիկ կղզիներ, որոնք սկեր են կոչւում: Թերակղզու հիւսիս-արեւմտեան կողմում գտնւում է բաւական մեծ կղզիների արշիպելագ՝ Լոֆոտեան անունով:

Սկանդինաւեան թերակղզին լեռնոտ երկիր է. լեռները բաղկացած են բիւրեղացած տեսակներից—գրանիտից և գդաքարից:

Թերակղզու արեւմտեան ափի երկայնութեամբ, բաւական լայն տարածութեան վրայ, ձգւում են Սկանդինաւեան լեռները՝ ծովի մակերևոյթից  $1\frac{1}{2}$ — $2\frac{1}{2}$  վերստ բարձրութեամբ:



Սկանդինավեան լեռները աւելի մեծ տարածութիւն են բռնում, քան Ալպերը, Ապենինեան և Պիրենէեան լեռները՝ միասին։ Այդ լեռները իսկապէս ներկայացնում են մի շարք բարձրաւանդակներ, որոնք Սկանդինավայում ֆիելդ են կոչւում։

Մի քանի ֆիելդներ, օրինակ՝ Շօստեղալի ֆիելդը, ծածկւած են յաւերժական ձիւնով և սառցարաններով. սակայն մեծ մասով ֆիելդները ծածկւած են տորֆային ճահիճներով և մացառուտներով։ Միայն տեղ-տեղ, միապաղաղ հարթութիւնների միջում, գտնւում են յաւերժական ձիւնով ծածկւած առանձնակի լեռնագագաթներ. օրինակ՝ երկու և կէս վերստ բարձրութիւն ունեցող Գալդհէսպիգ լեռնագագաթը՝ Շօստուն-Ֆիելդում։ Շատ հնումը ամբողջ Սկանդինավեան ծածկւած է եղել սառցադաշտերով, որոնք հետզհետէ առաջ են շարժւել դէպի հարաւ, — հիւսիսային Գերմանիա և Ռուսաստան։ Սկանդինավեան թերակղզու մակերևոյթի կազմութեան ներկայ վիճակը հետեանք է նախնական սառցադաշտերի։

Արեւմտեան կողմում, այսինքն Ատլանտեան օվկիանոսի ափերին, Սկանդինավեան լեռները կտրւում են ուղղաձիգ կերպով. այդտեղ նրանք կտրուած են բազմաթիւ նեղ և երկայն ծովախորշերով, որոնք ֆիորդ են կոչւում։

Ֆիորդների թիւն է՝ մի քանի հարիւր. նրանցից 30-ը 50 վերստից աւելի երկայնութիւն ունեն, իսկ մէկը՝ Սոգնէ-Ֆիորդը 200 վերստից աւելի (1 վերստ խորութեամբ)։ Ֆիորդները կտրում-մտնում են Սկանդինավեան լեռների մէջ. նրանց ափերը ուղղաձիգ են, պատանման, երբեմն մի քանի հարիւր սաժեն բարձրութեամբ, շատերի վրայից ջրը՝ վէժներ են թափւում։

Որովհետեւ Սկանդինավեան թերակղզու արեւմտեան երկայնութեամբ անցնում է Գոլֆշտրոմ տաք հոսանքը, ուստի և թերակղզու այդ մասի կլիման մեղմ է, ծովային, և ֆիորդները ամենեւին չեն սառչում։

Սկանդինավեան լեռների արեւելեան լանջերը թեք են և աննկատելի կերպով միանում են մի ընդարձակ, բլրաշատ հարթութեան հետ, որ աստիճանաբար իջնում է դէպի Բոտնիկ ծոցի ափերը։ Այդ հարթութեամբ հոսում են բազմաթիւ գետեր։ Նշանաւոր են՝ Տորնէօ, Դալ, Գէօտա եւ Գլոմմեն գետերը։

Սկանդինավայում շատ կան նաև սառցադաշտային լճեր։ Անթիւ վալուններ, յաճախ հսկայական մեծութեամբ, ցրւած են այս հարթութեան վրայ ամեն տեղ։ Յաճախ պատահում են նաև կլոր, գրանիտի բլուր-



ներ՝ ծածկւած հողի բարակ շերտով կամ բոլորովին լերկ։ Այդ հարթութեան վրայ աճում են փշտերեւ ծառերի անտառներ, որոնց առանքում տեղ-տեղ կան տորֆային ճահիճներ և լճեր։ Բևեռային շրջանից հիւսիս քիչ ծառ է բնութւն, այն ևս՝ ցածրիկ, աւելի հիւսիս տաքածւում են տունդրաներ։

Որովհետեւ Սկանդինաւեան լեռները արեւմտեան քամիների առաջն առնում են, այդ պատճառով էլ այդ լեռներից արեւելք կլիման ցամաքային է. ամառը աւելի տաք է, քան արեւմտեան մասում՝ Ֆիորդներում, իսկ ձմեռը—ցուրտ, սառնամանիքներով, որոնք  $30^0-40^0$ -ի են հասնում։ Բոտանիկեան ծոցը ամեն առարի ձմեռը ափերի մօտ սառչում է, երբեմն էլ ամբողջովին ծածկւում է սառույցով։



Նկ. 45. Շուեդ-աղջիկներ։

Մի փոքր ուրիշ է բնութիւնը Սկանդինաւեան թերակղզու հարաւային մասում։ Սկագերրակ նեղուցից դէպի արեւելք տարածւում է մի ընդարձակ ցածրութիւն, որտեղ գտնւում են հետեւեալ մեծ լճերը—Վեններ, Վետտեր և Մելար։ Այս լճերը մնացորդներ են մի նեղուցի, որ հնումը միացնում էր Բալտիկ ծովը Սկագերրակի հետ։ Այս լճերի շուրջը, նաև աւելի հեռու՝ հարաւ ընկնող երկրամասը այնքան քարքարոտ չէ, ինչքան հիւսիսում. կլիման աւելի տաք է. ուստի և դա թերակղզու ասննարներրի մասն է։

Նկատւած է, որ Սկանդինաւեան թերակղզու ափերի գծագրութիւնը երկար ժամանակ անցնելուց յետոյ փոխւում է. մի քանի տեղ ծովափը բարձրանում է, ուրիշ տեղեր՝ ցածրանում։ Նկատւած է ընդհանրապէս, որ Սկանդինաւեան թերակղզու ափերը բարձրանում են, ծովը հետզհետէ յետ է քաշւում։ Նոյնը կատարւում է նաև հարևան Ֆինլեանդիայի ծովափերին։ Մի քանի քաղաքներ, որ առաջ ծովափին էին գտնւում և նաւահանգիստ էին, ժամանակի ընթացքում ծովափից հեռու են մնացել և կորցրել են իրենց նախկին նշանակութիւնը։ Սակայն



ծովափերի այդ բարձրացումը և ցածրացումը տեղի են ունենում շատ դանդաղ, դարերի ընթացքում, ուստի և կոչւում են ցամաքի դարաւոր տատանումներ:

Սկանդինաւեան թերակղզու ընտկիչների թիւն է՝ մօտ 8 միլիոն: Ազգաբնակութեան մեծ մասը կազմում են՝ շւեդները և նորւեգացիները. սրանք դանիացիներին ազգակից են և նրանց հետ կազմում են գերման ժողովուրդների հիւսիսային խումբը: Երկրի հիւսիսային կողմում, բացի նրանցից, ապրում են նաև դեղին ցեղին պատկանող երկու ժողովուրդներ—լապլանդացիներ (լոպարներ) և ֆիններ, որոնց թիւը մեծ չէ այնտեղ:



Նկ. 46. Տիսարան հարաւային Շւեդիայում:

**ՇԻԵԴՆԵՐԻ ԵՒ ՆՈՐԻԵԳՍՅՈՒՆԵՐԻ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ԿԵԱՆՔԸ:**—Սկանդինաւիայի հարաւային, համեմատաբար արդաւանդ մասում, բնակիչները զբաղւում են գլխաւորապէս երկրագործութեամբ և անասնաբուծութեամբ: Այդ մասում շւեդները և նորւեգացիները խնամքով մշակում են հողը և ցանում են՝ վաքսակ, հաճար և նոյն իսկ ցորեն: Բազմացնում են կաթնատու կենդանիներ և արտադրում են շատ իւղ, որ արտահանում են ուրիշ երկիրներ, —գլխաւորապէս Մանչիա: Աւելի հիւսիս, Սկանդինաւեան լեռների արեւելեան լանջերին և նրանց մօտ տաքածւող հարթութեան վրայ երկրագործութիւնը և անասնաբու-



ծութիւնը շատ չեն զարգացած, որովհետեւ երկիրը շատ քար-քարոտ է<sup>1)</sup>։ Այդտեղ գլխաւոր նշանակութիւն ունի անտառագործութիւնը։ Փայտի մի մասը արտահանում են, միւս մասը գործադրում են՝ լուցկու կոթ, կարտոն, թուղթ պատրաստելու համար։ շւեդական լուցկին ծախւում է երկրագնդի բոլոր կողմերում։ Երկրում եղած սղոցարանները, թղթի և այլ գործարանները բանեցւում են ջրվէժների օգնութեամբ։



Նկ. 47. Ջիմորստան Լոֆոտսկան կղզիների վրայ։

Սկանդինավիայի արեւմտեան ափերին, շնորհիւ մեղմ կլիմայի, երկրագործութեամբ պարապել կարելի է մինչև 70-րդ աստիճանը. սակայն դրա համար շատ քիչ հող կայ<sup>2)</sup>։ Այդ մասում գլխաւոր զբաղմունքն է՝ ձկնորսութիւնը։ Ահագին քանակութեամբ ձուկ են արտահանում նորեգացիները դէպի ուրիշ երկիրներ։

Շւեդների և նորեգացիների համար մեծ նշանակու-

<sup>1)</sup> Սկանդինավիական թերակղզու  $\frac{9}{10}$  պէտքական չէ երկրագործութեան համար։

<sup>2)</sup> Նորեգիայի ամբողջ տարածութեան միայն  $20\frac{1}{10}$  է հերկւում. 3 տոկոսը մարգագետին է, 24 տոկոսը՝ անտառ, իսկ 71 տոկոսը՝ բոլորովին անպէտք է։



Թիւն ունի հանքագործութիւնը: Սկանդինաւիայի ծովափերին շատ տեղ գրանիտ են կտրոււմ և ծովային նաւերով ուղարկոււմ Գերմանիա, Հոլլանդիա և Անգլիա: Ապա՝ Սկանդինաւեան թերակղզին շատ հարուստ է մանաւանդ երկաթահանքերով:

Երբեմն ամբողջ սարեր բաղկացած են լինում երկաթահանքերից, այն էլ լաւ տեսակի: Հարուստ երկաթահանքեր կան Դաննեմորա քաղաքի մերձակայքում, որտեղից տարեկան մի քանի միլիոն փութ ընտիր երկաթ է ստացուում: Բայց գլխաւոր հանքերը գտնուում են հիւսիսում, Շւեդական Լապլանդիայում: Այնտեղ կան սարեր, որոնք ամբողջապէս բաղկացած են երկաթահանքից. օրինակ՝ Կիրունա սարը:

Շւեդիայում ձեռք է բերուում նաև բաւական քանակութեամբ պղինձ, — դարձեալ ընտիր տեսակից:

Որովհետև քարածուխով Սկանդինաւեան թերակղզին աղքատ է, ուստի և երկաթի հանքի մեծ մասը անմշակ դրութեան մէջ արտահանուում է Գերմանիա և Անգլիա:

Գործարանային արդիւնագործութիւնը քիչ է զարգացած: Վերջերս միայն՝ շւեդները և նորւեգացիները սկսել են, շւէյցարացիների օրինակով, օգտուել երկրի արագահոս գետերի ոյժից՝ բանեցնելու համար գործարանները:

Ճանապարհների հաղորդակցութիւնը լաւ է թերակղզու հարաւային մասում միայն: Այդտեղ կան երկաթուղային շատ գծեր: Սկանդինաւիայի գետերը նաւարկելի չեն, չնայելով իրենց ջրառատութեան, որովհետև շատ ջրվեժներ և սահանքներ ունեն. այդ պակասը մասամբ լրացնում են թերակղզու հարաւում գտնուող մեծ լճերը:

Ճանապարհների հաղորդակցութեան թերին որոշ չափով լրացնում է հեռախօսը, որ բոլոր քաղաքները և նշանաւոր աւանները միացնում է իրար հետ: Ո՛չ մի ուրիշ երկրում հեռախօսը չունի այն նշանակութիւնը, ինչ Սկանդինաւիայում:

Ծովային նաւագնացութիւնը զարգացած է թերակղզու բոլոր ափերի երկայնութեամբ, — մանաւանդ արևմտեան կողմում: Նորւեգացիները յայտնի են իբրև առաջնակարգ ծովագնացներ: Նորւեգիայի առևտրական նաւատորմը իր մեծութեամբ յետ է մնում միայն անգլիականից և գերմանականից. նա նոյն իսկ Ֆրանսիական նաւատորմից մեծ է, միայն թէ՛ Նորւեգիա-



յում գործածութեան մէջ են մեծ մասով առաջատանաւեր, որոնք և պատրաստուում են նորւեգիայում:

Շւեդները և նորւեգացիները ապրում են բաւական լաւ, թէպէտ ոչ դանիացիների չափ:

Շւեդիայում հողի մեծամասնութիւնը գիւղացիների սեփականութիւն է, բայց կան նաեւ հողագուրկ գիւղացիներ. սրանք կալածատէրերից կապալով են վերցնում հողը: Հողագուրկ գիւղացիների դուրսութիւնը լաւ է, ուստի և ամեն տարի մօտ 20 հազար հօգի գաղթում են դէպի Միացեալ-Նահանգներ և Կանադա: Հողի մի մասը պատկանում է կալածատէր-ազնւականներին, որոնք այժմ էլ դեռ ապրում են իրենց հինաւուրց դղեակներում: Նորւեգիայում ազնւականութիւն չկայ ամենեւին:

Ժողովրդական կրթութիւնը շատ տարածւած է նրանց մէջ: Բոլոր քաղաքներում և գիւղերում կան ուսումնարաններ: Նորւեգացիները և շւեդները շատ ուսումնասէր են, ամենախուլ, յետ ընկած վայրերում ապրող ընտանիքների երեխաներին կրթութիւն տալու համար պաշտօնավարում են շրջիկ ուսուցիչներ: Բացի երեխաների համար յատկացւած ուսումնարաններից՝ շատ կան նաեւ չափահասների ուսումնարաններ—«Ժողովրդական համալսարաններ»: Բարձրագոյն ուսում տալու համար կան համալսարաններ,—թէպէտ ոչ շատ. բայց գիտութիւնները այնտեղ ուսուցանւում են հիմնաւոր կերպով,—համարեա այնպէս, ինչպէս գերմանական համալսարաններում:

Շւեդները շատ մեծ ուշադրութիւն են դարձնում Ֆիզիքական դաստիարակութեան վրայ: Նրանք վաղուց է ինչ հնարել են իրենց յատուկ, «շւեդական» կոչւած մարմնամարզութիւնը. այժմ մարմնամարզութիւնը ոչ միայն պարտադիր առարկայ է բոլոր դպրոցներում, այլ և ամեն տեղ քաղաքներում գոյութիւն ունեն մարմնամարզարաններ, ուր այցելում են բազմաթիւ մարդիկ—թէ տղամարդիկ և թէ կանայք:

Շւեդերէն, մանաւանդ նորւեգերէն գրքեր շատ են թարգմանւում օտար լեզուներով:

ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՔԱՂԱՔՆԵՐԸ:—Սկանդինաւեան թերակղզու վրայ գտնւում են երկու սահմանադրական թագաւորութիւններ—Շւեդիա և Նորւեգիա: Այս երկու պետութիւնները երկար ժամանակ գտնւում էին մէկ (շւեդական) թագաւորի իշխանութեան տակ. բայց վերջին տարիներս (1905 թ.)



այդ երկու պետութիւնները անջատեցին իրարից: Ներկայումս այդ պետութիւններից ամեն մէկը ունի իր թագաւորը և պարլամենտը:

Թէ Շւեդիայում և թէ Նորւեգիայում ազգաբնակութեան մեծագոյն մասը ապրում է գիւղերում. քաղաքներ քիչ կան:

**ՇԻՆԴԻԱՅԻ** մայրաքաղաքն է՝ Ստոկհոլմ (300 հազար բն.), նշանաւոր նաւահանգիստ է, գտնւում է Մեւար լճի և Բալտիկ ծովի միացման տեղում: Ստոկհոլմում է նստում շւեդական թագաւորը, այնտեղ է գտնւում պարլամենտը («ռիկսդագ»):

**Ուպսալա**—Շւեդիայի նախկին մայրաքաղաքը. յայտնի է իր համալսարանով:

**Գէօտեբորգ**—նշանաւոր նաւահանգիստ է Գէօտա գետի բերանի մօտ. ունի նաւաշինարաններ:

**ՆՈՐԻՆԳԻԱՅԻ** մայրաքաղաքն է—Քրիստիանիա. նշանաւոր նաւահանգիստ է. այդտեղ է թագաւորի աթոռանիստը, այդտեղ է գտնւում նաև պարլամենտը («ստորտինգ»): Քրիստիանիան Նորւեգիայի լուսաւորութեան կենտրոնն է. ունի համալսարան:

**Բերգեն** եւ **Տրոնհայմ**—նշանաւոր են ձկան արտահանութեամբ:

**Նարւիկ**—նաւահանգիստ է. այդտեղով է արտահանւում երկաթ՝ Շւեդական Լապլանդիայից. գտնւում է երկրագնդի ամենահիւսիսային երկաթուղային գծի ծայրին:

## Ա Ն Ք Լ Ի Ա

կամ

**ՄԵԾ-ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՒ ԻՐԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՅԵԱԼ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԻՒՆ**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ:**—Անգլիան եւրոպական պետութիւնների թւում միանգամայն առանձին դիրք է գրաւում. Նա ծովային պետութիւն է,—ամբողջապէս կղզիների վրայ է գտնւում: Այդ կղզիներն են՝ **Մեծ Բրիտանիա**,—ամենամեծ



կղզին Եւրոպայում, Իրլանդիա և շատ ուրիշ, մանր կղզիներ, գրանցից նշանաւոր են. հիւսիսում՝ Հեբրիդեան, Շետլանդեան, Օրկադեան կամ Օրկնէյեան կղզիները. իսկ հարաւում՝ Ուայտ և Նորմանդեան կղզիները:

Այս բոլոր կղզիները ցամաքային ծագում ունեն և իրենց բնութեամբ նման են մայր ցամաքի այն մասերին, որոնց մօտ են գտնւում նրանք: Մեծ-Բրիտանիա կղզու հարաւային մասը նման է Ֆրանսիային, իսկ հիւսիսային մասը—Սկանդինաւեան թերակղզուն:

Պաղը-Կալէ նեղուցի խորութիւնը ընդամենը 10 սաժէն է: Եթէ Գերմանական ծովի մակերևոյթը 20—25 սաժէնով իջնէր, այն ժամանակ բրիտանական կղզիները կմիանային հիւսիսային Գերմանիայի և Ֆրանսիայի հետ ու կզառնային մայր ցամաքի մասերը:

Մեծ-Բրիտանիա կղզու հարաւ-արեւելեան կողմում տարածւում է մի դաշտավայր, որի մէջ տեղով հոսում է Անգլիայի ամենամեծ գետը—Թեմզան, իսկ ծայրերով՝ Սկերն և Տրենտ գետերը: Այդ դաշտավայրը բլրաշատ է և արգաւանդ. ամառը տաք է լինում, աշնանը և ձմեռը երկինքը ամպամած է, իսկ երկիրը պատում է թանձր մառախուղ: Այդտեղ ևս, ինչպէս Ֆրանսիական դաշտավայրում, շատ լաւ աճում է ցորենը և բաւական լաւ՝ խնձորենին:

Մեծ-Բրիտանիայի հարաւ-արեւմտեան կողմում գտնւում է Կորնուոլ լեռնախումբը, որ իր կազմութեամբ, կլիմայով և բուսականութեամբ նման է հարեան Բրետանին (Ֆրանսիայում):

Հիւսիսում տարածւում են Շոտլանդական լեռները, որոնք շատ բանով նման են Սկանդինաւեան լեռներին: Շոտլանդական լեռները, մանաւանդ նրանց մէջ ամենաբարձրները, Գրամպեան լեռները, յարմար չեն մարդկային բնակութեան համար: Երկրագործութեամբ պարապել կարելի է այդտեղ միայն լեռնագոգերում:

Մեծ-Բրիտանիայի միջին մասում, աւելի արեւմտեան ափերի մօտ, բարձրանում են Պեննինեան կամ Պիկ լեռները և Ուէլս. վերջինիս գագաթն է՝ Մոդոն (1 վերստ բարձր.)։ Այս լեռներն ևս, Շոտլանդականի նման, լերկ են, բուսականութիւնից համարեա բոլորովին զուրկ:



Իրլանդիան նման է Մեծ-Բրիտանիային միայն իր ծայրերում, որտեղ բարձրանում են լեռնախմբեր։ Մնացած ամբողջ տարածութիւնը *մահմոտ դաշտավայր է*,—այնքան հարթ, որ այնտեղով հոսող Շաննոն գետը զժլարութեամբ է առաջ հոսում դէպի ծով եւ իր ճանապարհին գոյացնում է մի քանի լճեր։ Իրլանդիայի կլիման ծովային է։ Արեւմտեան քամիները Գոլֆշտրոմից բերում են տաք, գոլորշիառատ օդ, որ մի փոքր միայն ցրտելով՝ դառնում է ամպ եւ մառախուղ։

Իրլանդիայի հարաւային կողմում ձմեռը այնպէս մեղմ է լինում, որպէս Ռիվիերայում (հարաւ. Ֆրանսիայում, Միջերկրականի ծովափին)։ Այս պատճառով էլ այնտեղ աճում են մշտադալար մրտենիներ և դափնիներ. բայց ամառն էլ աւելի տաք չէ, քան Բոտնիկ ծոցի ափերին։ Իրլանդիայի եղանակը միշտ անձրեւային է, ամպոտ. ուստի և յարմար չէ այնտեղ մշակովի բոյսեր ցանել։ Հացահատիկները այնտեղ շատ խղճուկ հունձ են տալիս. լաւ աճում է միայն կարտոֆիլը։ Սաւկայն մարգագետինները հիւթաաշտ խոտով են ծածկւած, միշտ էլ մոյգ-կանաչ են. ամբողջ տարին անընդհատ խոտ է բուսնում այնտեղ։ Դրա համար է, որ Իրլանդիան «կանաչ կղզի» անունն է ստացել։

Համեմատելով Անգլիայի բնութիւնը հարեան Ֆրանսիայի բնութեան հետ, մենք տեսնում ենք, որ Ֆրանսիայի կլիման աւելի տաք է, աւելի արեւաշատ. բայց դրա փոխարէն՝ Անգլիան վերին աստիճանի հարուստ է հանքերով։ Մեծ Բրիտանիայի լեռները լի են քարածուխի և երկաթի հանքերի հաստ շերտերով։ Անգլիայի և Ֆրանսիայի աշխարհագրական դիրքերը մօտաւորապէս նոյնն են. այդ երկու երկիրներն ևս գտնւում են Նւրոպայի կենտրոնին մօտ և անմիջական հաղորդակցութիւն ունեն Ամերիկայի հետ։ Անգլիան, գտնւելով կղզիների վրայ, աւելի յարմար դիրք ունի՝ առևտրական յարաբերութիւն պահպանելու ուրիշ երկիրների հետ. այդ դիրքը աւելի անվտանգ է պետութեան համար։

Անգլիայի ընակիչների թիւն է՝ 45 միլիոն։ Միմիայն Մեծ-Բրիտանիան այնքան բնակիչ ունի, որքան՝ ամբողջ Ֆրանսիան, որ իր տարածութեամբ Անգլիայից երկու անգամ մեծ է։ Ազգաբնակչութեան խտութեան նայելով՝ Անգլիան յետ է մնում միայն Բելգիայից և Հոլլանդիայից։ Բնակիչների մեծ մասը—<sup>8/10</sup>-ը կազմում են անգլիացիները, որոնք պատկանում են գեր-



ման ժողովուրդների անգլո-սաքսոն ճիւղին: Ազգաբնակութեան  $1/_{10}$ -ը շոտլանդացիներ են,  $1/_{10}$ -ն էլ՝ իրլանդացիներ:

Այս վերջին ազգութիւնները մնացորդ են կելտ ժողովրդի, որ հընումը ապրում էր Մեծ-Բրիտանիա և Իրլանդիա կղզիների վրայ. բայց նրանք յետագայում խառնեցին մայր ցամաքից եկած գերմանների հետ: Այժմեան շոտլանդացիները և իրլանդացիները մեծ մասով խօսում են անգլիերէն լեզուով: Կելտերէն բարբառներ պահել են քիչ տեղերում միայն—Շոտլանդիայի հիւսիսային և Իրլանդիայի հիւսիս-արեւելեան կողմում, նաև Ուէլսի լեռներում:

Ազգաբնակութեան մեծ մասը—60 տոկոս, հետևում է անգլիական եկեղեցու. \*) դաւանութեան: Իրլանդացիները կաթոլիկ են: Անգլիայում կան նաև բազմաթիւ մանր աղանդներ, որոնք միւս դաւանութիւններին հաւասար ազատութիւն են վայելում:


ԱՆԳԼԻԱՅԻՆՆԵՐԻ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ԿԵԱՆՔԸ:—Անգլիացիների գլխաւոր զբաղմունքներն են՝ հանքագործութիւնը և գործարանային արդիւնագործութիւնը:

Հանքագործութիւնը Անգլիայում ունի այն նշանակութիւնը, ինչ որ Գերմանիայում: Բարածուխի արտադրութեամբ Անգլիան յետ է մնում միայն Միացեալ-Նահանգներից, իսկ երկաթի արտադրութեամբ—Միացեալ-Նահանգներից և Գերմանիայից:

Ուէլսի, Պեննինեան և Շոտլանդեան լեռների ստորոտներում փորած կան մինչև 1 վերստ խորութիւն ունեցող հանքահորեր, ստորերկրեայ սրահներ, որտեղ օր ու գիշեր աշխատում են հարիւր-հազարաւոր բանւորներ: Նոյն վայրերում կան բազմաթիւ ձուլարաններ, որտեղ երկաթահանքը խառնում են ածուխի հետ և մետաղ ստանում: Քարածուխի և երկաթի հանքերի իրար մօտ լինելը հեշտացնում է երկաթ արտադրելը. բայց Անգլիայի երկաթահանքերը սկսել են սպառել, ուստի անգլիացիները պակասը լրացնելու նպատակով հում նիւթ են բերում ուրիշ երկիրներից—Շեդդական Լապլանդեայից, Իսպանիայից, և նոյն իսկ Հարաւային Ռուսաստանից: Իսկ քարածուխ Անգլիայում դեռ ևս շատ կայ. այդտեղից մեծ քանակութեամբ քարածուխ է արտահանւում ուրիշ երկիրներ, իսկ մեծ մասը գործ է ածւում հենց Անգ-

\*) Անգլիական կամ եպիսկոպոսական եկեղեցին բողոքական և կաթոլիկ եկեղեցիների միջին տեղն է բռնում. դաւանութեամբ նա բողոքականութեան է մօտ, իսկ ծիսակատարութեամբ և եկեղեցական պաշտօնէութեամբ—կաթոլիկութեան:





Նկ. 48. Արդիւնագործութեան համեմատական մեծութիւնը եւրոպական պետութիւններում եւ Միացեալ-Նահանգներում:

լիայում: Քարածուխով եւ տաքացնում բնակարանները, քարածուխ եւ բանեցնում նաեւ գործարաններում:

Գործարանային արդիւնագործութեան զարգացման կողմից Անգլիան եւրոպայի առաջին պետութիւնն է: Այդ արդիւնագործութիւնը սկիզբ է առել Անգլիայում: Անգլիացիներն են եղել, որ գտել են շոգեմեքենան, նրանք են գտել նաեւ մանեղու, ոստայնանկութեան և ուրիշ տեսակ մեքենաներ: Անգլիացիները ոչ միայն գտան այդ մեքենաները, այլ և հենց իրենց ամենից առաջ սկսեցին գործնական նպատակների ծառայեցնել նրանց, — հիմնեցին առաջին գործարանները: Ներկայումս անգլիական գործարաններում է արդիւնագործում երկրիս վրայ ստացւող ամբողջ բամբակի կէսից աւելին. Անգլիական գործարաններում պատրաստած չիթ է բանեցնում ամբողջ մարդկութեան կէսից աւելին:

Անգլիայում մեծ քանակութեամբ պատրաստւում են նաեւ քրդէ ու կտաւէ կտորներ, որոնք աչքի են ընկնում իրենց նըրքութեամբ ու ամրութեամբ:

Ճոթեղէնի արդիւնագործութիւնից յետոյ երկրորդ տեղը բռնում է մետաղագործութիւնը, — շոգեմեքենաներ, վագոններ, ծովային նաւեր և զանազան մեքենաներ պատրաստելը: Անգլիական մեքենաները, զանազան գործիքները և մետաղեայ մանր ապրանքները (ասեղ, գրիչ, դանակ և այլն) լաւ հռչակ ունեն և արտահանւում են դէպի եւրոպական բոլոր երկիրները և ուրիշ աշխարհամասեր:

Անգլիական շոգեմեքենաներ են բանեցնում ոչ միայն Անգլիայում, այլ և Եգիպտոսում, Հնդկաստանում և Հարաւային Աֆրիկայում, յաճախ նաեւ Ռուսաստանում: Անգլիական նաւաշինարաններում է







Ծովափնեայ բնակիչներին համար, մանաւանդ Մեծ-Բրիտանիայի հիւսիսային ծովափերին, մեծ նշանակութիւն ունի ձկնորսութիւնը. այդ նպատակին են ծառայում հազարաւոր առագաստանաւեր և շոգենաւեր: Անգլիացիները բռնած ձկան մի մասը արտահանում են ուրիշ երկիրներ:

Երկրագործութիւնը, անասնաբուծութիւնը և ձկնորսութիւնը Անգլիայի ամբողջ ազգաբնակչութեան համար միայն փոքր չափով են սնունդի միջոցներ հայթայթում. օրինակ՝ Անգլիայում ստացւած հացահատիկները հազիւ 2 ամիս բաւականութիւն տան այդ երկրի ազգաբնակչութեան. այդ պատճառով էլ ուրիշ երկիրներից են Անգլիա ներմուծում՝ մեծ քանակութեամբ սննդի միջոցներ:

Արտաքին առեւտրի շրջանառութեամբ Անգլիան առաջին պետութիւնն է երկրագնդի վրայ: Բացի սննդի միջոցներից՝ ներմուծում են գլխաւորապէս հում նիւթեր արդիւնագործութեան համար, իսկ արտահանում են՝ գործարանային ապրանքներ:

Անգլիայի առեւտրի զարգացմանը նպաստում է նրա ծովային նաւատորմը, որ բաղկացած է 20,000 շոգենաւերից և 10,000 առագաստանաւերից: Անգլիացիները շատ լաւ ծովագնացներ են. անգլիական նաւերը երթեւեկում են երկրագնդի բոլոր ծովերով և այնքան բեռ են փոխադրում, որքան՝ եւրոպական մնացած բոլոր պետութիւններին պատկանող նաւերը՝ միասին:

Ժամապարհների հազորդակցութիւնը Անգլիայում օրինակելի է: Երկաթուղին ամենից առաջ Անգլիայում կառուցւեց:

Երկաթուղային գծերի ցանցի խտութեամբ Անգլիան յետ է մնում միայն Բելգիայից. սակայն Անգլիայում կան վայրեր, որտեղ երկաթուղիներ չեն ցանցը աւելի նոսր չէ, քան Բելգիայում. իսկ անդալսի վայրերը իրենց տարածութեամբ աւելի տեղ են բռնում, քան Բելգիայի թափաւորութիւնը: Անգլիայում երկաթուղային գնացքները շատ արագ են երթեւեկում. նրանց հետ մրցել կարող են միայն ամերիկական երկաթուղային գնացքները<sup>1)</sup>:

<sup>1)</sup> Բայց Անգլիայում երկաթուղով գնալը թանկ արժէ—3-րդ կարգը այնտեղ աւելի թանկ է, քան Ռուսաստանում—2-րդ կարգը: Ռուսական երկաթուղին ամենաէժանն է Եւրոպայում:



Անգլիական գետերը թէպէտ կարճ են, բայց ջրառատ են և նաւարկելի: Անգլիական գետաբերանները, շնորհիւ ծովային մակընթացութեան, մատչելի են ծովային մեծ նաւերի համար: Գետերի վերին հոսանքները միացած են իրար հետ ջրանցքներով: Շրջապատւած լինելով ծովով, Անգլիան ունի մի շարք յարմարաւոր նաւահանգիստներ, որոնք ամենեւին չեն սառչում:

Շնորհիւ արդիւնագործութեան, ճանապարհների հաղորդակցութեան և առևտրի զարգացման՝ Անգլիան ներկայումս Եւրոպայի ամենահարուստ երկիրն է. միայն թէ՛ երկրի հարըստութիւնները բաժանւած են անպէս անհամաչափ կերպով, որպէս և ոչ մի ուրիշ պետութեան մէջ: Գործարանների և առևտրական ձեռնարկութիւնների մեծ մասը գտնւում է միլիոնատէրերի ձեռքում. միլիոնատէրերին է պատկանում Անգլիայում նաև հողի մեծ մասը: Հողատէր գիւղացիներ Անգլիայում քիչ կան. իսկ հողը կապալով վերցնողները (ֆերմերները) միանգամայն կախում ունեն խոշոր կալաժատէր-լորդերից: Լորդերը ճնշում են կապալառուներին մանաւանդ Իրլանդիայում: Համեմատաբար աւելի լաւ դրութեան մէջ են գտնւում գործարանային բանւորները, որովհետև աշխատավարձը Անգլիայում աւելի բարձր է, քան Եւրոպայի մայր ցամաքում. ապրուստի միջոցներն էլ էժան են:

Աշխատանքը գործարաններում և հանքահորերում ծանր է, բայց շատ երկար չէ տևում,—օրւայ մէջ 8—9 ժամ: Կիրակնօրեայ հանգիստը ոչ մի երկրում այնպէս խստութեամբ չէ պահւում, որպէս Անգլիացում:

Կիրակի օրերը բոլոր գործարանները, խանութները և նոյնիսկ թատրոնները Անգլիայում փակում են. պոստն ևս փակւած է լինում, նամակները չեն հանւում տուփերից. նոյնիսկ երկաթուղային երթևեկութիւնը համարեա ընդհատւում է. երթեկում են միայն արագընթաց գնացքները: Կիրակի օրերը բոլոր անգլիացիները օգտւում են հանգստից. առաւօտները սովորաբար եկեղեցի են գնում, յետոյ երեխաների հետ միասին գնում են մի բացօթեայ տեղ թարմ օդ ծծելու,—մի պարկ կամ քաղաքից դուրս, այդտեղ նրանք ժամանակ են անցկացնում խոտերի վրայ, գնդակ կամ այլ բան խաղալով, մահոյկ նրստելով և այլն:

Ժողովրդական կըթովութիւնը Մեծ-Բրիտանիայում շատ է



զարգացած, իսկ Իրլանդիայում—ոչ բաւարար չափով: Բացի տարրական դպրոցներից՝ այնտեղ ամեն մի վայրում հիմնել են երեկոյեան դասընթացներ չափահասների համար: Միջնակարգ և տեխնիկական դպրոցներ շատ կան: Անգլիացիները առանձին ուշադրութիւն են դարձնում ֆիզիքական դաստիարակութեան վրայ. մարմնամարզական խաղերը դպրոցներում պարտադիր են: Անգլիական գրողները և գիտնականները համաշխարհային հռչակ են վայելում, —ինչպէս գերմանական և ֆրանսիական գրողները և գիտնականները:


**ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՒ ՔԱՂԱՔՆԵՐՔ:**—Մեծ-Բրիտանիայի և Իրլանդիայի Միացեալ Թագաւորութիւնը բաղկացած է երեք գլխաւոր մասերից—Բուն Անգլիա, Շոտլանդիա և Իրլանդիա: Առաջ սրանք առանձին-առանձին պետութիւններ են եղել, իսկ այժմ միեւնոյն թագաւորութեան մասերն են կազմում: Նրանց մէջ ամենանշանաւորն է Բուն Անգլիան, որի անունով էլ կոչւում է ամբողջ Միացեալ Թագաւորութիւնը:

Անգլիայի թագաւորութեան գլուխ են կանգնած՝ թագաւորը և պարլամենտը: Անգլիայի թագաւորը չունի աւելի իշխանութիւն, քան Ֆրանսիայի հասարակապետութեան նախագահը. նա մինիստրներ է նշանակում, որոնք սակայն իշխանութիւնը պահում են իրենց ձեռքում մինչ այն ժամանակ, քանի զեռ պարլամենտը վստահութիւն է տածում դէպի նրանց. հակառակ դէպքում մինիստրները պարտաւոր են հրաժարել: Անգլիական պարլամենտը բաղկացած է երկու պալատից—Վերին կամ լորդերի պալատ, և Ստորին կամ համայնքների պալատ: Համայնքների պալատը ժողովրդի կողմից ընտրւած պատգամաւորների օրէնսդրական ժողովն է. նա աւելի նշանակութիւն ունի, քան լորդերի պալատը, որ բաղկացած է ազնւականների—լորդերի և բարձր հոգեւորականութեան ներկայացուցիչներից: Անգլիական պարլամենտը ամենահինն է Եւրոպայում. նա ծագել է 13-րդ դարում, մինչդեռ եւրոպական միւս պետութիւնների պարլամենտները ծագել են 19-րդ դարում:

Անգլիայի մայրաքաղաքն է՝ ԼՈՆԴՈՆ, որ գտնւում է Թեմ-



պա գետի վրայ: Լոնդոնը երկրագնդի ամենամեծ քաղաքն է. միմիայն այդ քաղաքը, արւարձանների հետ միասին, բնակիչները թւով (7 միլիոնից աւելի) եւրոպական շատ պետու-



Նկ. 50. Պալատենիսի շէնքը Լոնդոնում:

թիւններից անց է: Լոնդոնը համաշխարհային առևտրի կենտրոնն է և երկրագնդի ամենանշանաւոր նաւահանգիստը: Թէպէտ նա Թեմզայի գետաբերանից 75 վերստ հեռու է գտնուում, բայց ծովի մակընթացութեան միջոցին մինչև այնտեղ են հասնում ովկիանոսային նաւեր: Այս մեծ նաւերից տարեկան 10.000 հատ, իսկ ծովային փոքր նաւերից 35.000 հատ գալիս են Լոնդոն և բերում են ամեն տեսակ ապրանքներ: Նաւերի կանգնելու, բեռ վերցնելու կամ դատարկելու համար Թեմզայի երկու կողմերում շինել են դոկեր, այսինքն՝ մեծ, արւեստական կերպով փորած աւազաններ, որոնց մօտ գտնուում են ապրանքի ահագին պահեստներ: Գլխաւորապէս առևտրական քաղաք և նաւահանգիստ լինելով՝ Լոնդոնը մեծ նշանակութիւն ունի նաև իբրև արդիւնազործական կենտրոն: Այնտեղ շատ կան գործարաններ և նաւաշինարաններ: Վերջապէս, Լոնդոնը նշանաւոր է նաև ժողովրդական լուսաւորութեան տեսակէտից. այնտեղ է տրւալագրւում անգլիական զրբերի, լրագիրների և հանդէսների մեծ



մասը. այնտեղ են գտնուում ամենալուս գրադարանները և թանգարանները: Նշանաւոր է մանաւանդ Բրիտանական թանգարանը (մուզէյ), որ պարունակում է գրքերի, ձեռագիրների, գեղարեստական հին երկերի ամենահարուստ ժողովածուներ և այլն:



Նկ. 51. Վիլհաւոս հրապարակը Սիսիում՝ «Անգլիական բանկի» մօտ:

Լոնդոնը բաժանուում է մի քանի մասի, որոնցից նշանաւոր են երեքը.—1. Սիտի, որ հին քաղաքամասն է. 2. Արեւմտեան Լոնդոն և 3. Արեւելեան Լոնդոն: Սիտիում է կենտրոնացած առեւտուրը: Այդտեղ գտնուում են՝ բանկեր—որոնց թւում նաև աշխարհիս ամենահարուստ «Անգլիական բանկը»—առևտրական գրասենեակներ և խանութներ: Մասնաւոր տներ այդտեղ շատ քիչ կան: Առաւօտները Սիտի են թափուում հարիւր-հազարաւոր մարդիկ, իսկ գիշերները այնտեղ միայն պահապաններն են մնում: Արեւմտեան Լոնդոնում են գտնուում՝ պարլամենտը, Վեստմինստերի վանքը (Անգլիայի ամենաշքեղ տաճարը), Բրիտանական թանգարանը, արքայական պալատը և լորդերի բազմաթիւ փառայեղ տներ: Այդտեղ են գտնուում Լոնդոնի ամենալուս պարկերը, որոնց թւում նաև՝ հսկայական «Հայդ-պարկը»: Արեւելեան Լոնդոնում են գտնուում գործարանները, այդտեղ ապրում են մեծ մասով բանուորներ, արհեստաւորներ և մանր առևտրականներ:

Լոնդոնը մարդու վրայ ազդում է նախ և առաջ իր մեծութեամբ:



Նա բռնում 300 քառ. վ. տարածութիւն: Արեւմուտքից արեւելք, Թեմդայի երկայնութեամբ, քաղաքը տարածւում է 25 վերստ, իսկ հիւսիսից հարաւ՝ 18 վերստ: Լոնդոնի բոլոր փողոցները միասին 11 հազար վերստ երկայնութիւն ունեն. քաղաքում կան մօտ 900 հազար տներ: Տներէ մեծամասնութիւնը երկյարկանի է, իւրաքանչիւր յարկ 2—4 պատուհանով և ուղղակի փողոցից մտնող դռնով: Ամեն մի այդպիսի տան մէջ ապրում է սովորաբար միայն մէկ ընտանիք: Փողոցների երթևեկով թիւնը Լոնդոնում շատ եռուն է,—մանաւանդ առաւօտները, երբ քաղաքի արւարձաններից դէպի կենտրոն են դիմում ահագին թւով մարդիկ, և երեկոները,—երբ ամենքը գործից տուն են վերադառնում: Բաղմաթիւ հանրակառքեր, աւտոմոբիլներ, կերեր (երկանիւ կառքեր), ստորերկրեայ և վերերկրեայ երկաթուղու զնացքներ, շոգենաւեր Թեմդայի վրայ,—այս բոլորը լիքն են լինում երթևեկողներով. բացի դրանից՝ փողոցներում էլ խմբերով բազմաթիւ անցորդներ են երթևեկում ոտքով:

Բարեշէն լինելու կողմից Լոնդոնը յետ է մնում Բերլինից և Պարիզից: Լոնդոնի փողոցները նեղ են, մանաւանդ Սիտիում և աչքի չեն ընկնում մաքրութեամբ: Օդը շնչել դժւար է: Զմեռը յաճախ խիտ մառախուղ է պատում քաղաքը, որ խառնւում է շոգենաւերից, երկաթուղուց, գործարաններից և վառարաններից բարձրացող ծխի հետ: Թանձր մառախուղի միջոցին Լոնդոնի փողոցներում ամբողջ օրը լապտերները վառւում են. պատահում է, որ մառախուղից լապտերները նոյնիսկ լոյս չեն տալիս. այդ ժամանակ արդէն փողոցների երթևեկութիւնը բոլորովին դադարում է:

Երկրագնդի վրայ ոչ մի ուրիշ քաղաքում աչքի չէ ընկնում այն սուր հակադրութիւնը, որ կայ Լոնդոնում՝ հսկայական հարստութիւնների և անծայր թշուառութեան մէջ. հարիւր-միլիոնների արժէք պարունակող զանազան պահեստների կողքին, պատահում է, որ քաղցից մեռնում են թշուառ մարդիկ:

Լոնդոնի արեւելեան կողմում գտնւում է Գրինիչը, որ առաջ առանձին քաղաք էր, իսկ այժմ միացած է Լոնդոնի հետ: Գրինիչում գտնւում է աստղադիտարան: Զանազան երկիրների աշխարհագրագէտներ համաձայնութեան գալով՝ Գրինիչի վրայով անցնող միջօրէականը ընդունել են իբրեւ գլխաւոր միջօրէական:

Օքսֆորդ և Քեմբրիջ—մեծ քաղաքներ չեն, բայց յայտնի են իրենց հին և առաջնակարգ համալսարաններով:



Քենտրերրի—անգլիական եկեղեցու պետի,— արքեպիսկոպոսի աթոռանիստը:

Դուվր—նաւահանգիստ է. այդտեղով է պահպանւում երթեկութիւնը մայր ցամաքի հետ: Պորտսմութ — պատերազմական նաւահանգիստ է. Պլիմութ—առևտրական նաւահանգիստ է:

Բրիստոլ և Կտրդիֆ—նշանաւոր նաւահանգիստներ են Բրիստոլեան ծոցի վրայ. Կարդիֆից արտահանւում է մեծ քանակութեամբ քարածուխ:

Լիւերպոլ (800 հազար բն.)—Անգլիայի երկրորդ նաւահանգիստն է. այդտեղով են ներմուծւում ահագին քանակութեամբ բամբակ և բուրդ. արտահանւում են՝ ճութեղէն և գործարանային ուրիշ տեսակ ապրանքներ:

Մանչեստեր (900 հազար բնակիչ)—Պեննինեան լեռների արևմտեան ստորոտների մօտ. աշխարհիս ամենանշանաւոր քաղաքն է՝ բամբակի արդիւնագործութեամբ: Մանչեստրի շուրջը գտնւում են գործարանային փոքր քաղաքներ, որտեղ ևս բամբակ է արդիւնագործւում: «Այստեղ է թագաւոր-բամբակը», ասում են անգլիացիները: Մանչեստրի առաջադիմութեանը նըպաստում են շրջակայքի քարածուխի հարուստ հանքերը և խոնաւ կլիման, որ յարմար է բամբակից ճութեղէն պատրաստելու համար: Լիդս—Պեննինեան լեռների արևելեան ստորոտների մօտ. կենտրոն է բրդեղէնի արդիւնագործութեան:

Շեֆֆիլդ և Բիրմինգհամ—արդիւնագործական մեծ քաղաքներ են. նշանաւոր են մետաղի արդիւնագործութեամբ: Այդ քաղաքներում պատրաստւում են՝ ասեղ, գրիչ, դանակ, ատաղձագործական և փականագործական զանազան գործիքներ, մեքենաներ, շոգեմեքենաներ, թնդանօթներ և այլն: Այդ քաղաքների շրջակայքում ևս, ինչպէս Մանչեստրի մօտ, գտնւում են շատ ուրիշ, աւելի փոքր քաղաքներ, որոնք կարծէք օգնականներ լինեն մեծ քաղաքների համար: Քաղաքների այդպիսի կուտակում ամբողջ երկրագնդի վրայ մէկ էլ Գերմանիայում միայն կայ, —Հոենոսեան լեռների հիւսիսային ստորոտների մօտ: Հուլլ—նշանաւոր նաւահանգիստ է Գերմանական ծովի



վրայ: Նիու-Կասլ—մեծ նաւաշինարաններ ունեցող նաւահանագիստ է. նշանաւոր է քարածուխի արտահանութեամբ:

Գլազգօ—նաւահանագիստ է Կլայդ գետի վրայ, Շոտլանդիայի ամենամեծ քաղաքն է (800 հազար բն.). այդտեղ կան հոկայական նաւաշինարաններ, որոնց մէջ կառուցուում են աւելի թւով ծովային նաւեր, քան որեւէ տեղ երկրագնդի վրայ:

Էդինբուրգ—Շոտլանդիայի նախկին մայրաքաղաքը, այժմ այդ երկրի լուսաւորութեան կենտրոնն է, հին համալսարանով:

Դուբլին—Իռլանդիայի նախկին մայրաքաղաքը, իսկ այժմ՝ նրա առևտրական գլխաւոր քաղաքը: Բելֆաստ—նշանաւոր է արդիւնագործութեամբ: Գործարանային արդիւնագործութեանը այդտեղ նպաստում է այն հանգամանքը, որ Շոտլանդիայի քարածուխի հանքերը մօտ են գտնուում:



Նկ. 52. Անգլո-սաֆոն ցեղի եւ նրանց գաղութների տարածումը:

ԱՆԳԼԻԱՅԻ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ:—Անգլիան բոլոր աշխարհամասերում ընդարձակ գաղութներ ունի: Իր գաղութների հետ միասին Անգլիան աշխարհիս ամենամեծ պետութիւնն է, որ բռնում է ցամաքի  $\frac{1}{5}$  մասից աւելին: Այդ պետութեան բնակիչների թիւն է մօտ 400 միլիոն, այսինքն՝ ամբողջ մարդկութեան  $\frac{1}{4}$  մասը: Անգլիներէնը ամենատարածւած լեզուն է երկրագնդի վրայ:



Անգլիայի բոլոր գաղութները կարելի է երեք կարգի բաժանել: Առաջին կարգին են պատկանում այն գաղութները, որոնք իրենց կլիմայի և բնական հարստութիւնների պատճառով յարմար են եւրոպացիների վերաբնակութեան համար: Դրանք են՝ Կանադա, Կապի-Երկիր, Աւստրալիայի հարաւ-արեւելեան մասը, Տասմանիա և Նոր-Զելանդիա: Երկրորդ կարգին պատկանում են այն գաղութները, որոնց բնական հարստութիւնները մեծ են, իսկ կլիման վատառողջ է եւրոպացիների համար. դրանք են՝ Բրիտանական Հնդկաստան, Արևադարձային Աֆրիկայի և Արևադարձային Ամերիկայի (Գլխանա, Եամայկա և ուր.) գաղութները: Այս գաղութները նշանաւոր են միայն առևտրական տեսակէտից: Վերջապէս, երրորդ կարգին պատկանում են այն գաղութները, որոնք զուրկ են բնական հարստութիւններից և անյարմար են եւրոպացիների վերաբնակութեան համար, բայց դրա փոխարէն նշանաւոր են իրենց աշխարհագրական դիրքով: Դրանք են՝ Ադեն—Արաբիայում, որ գտնւում է Բաբ-էլ-Մանդեբ նեղուցի ծայրին, Սինգապուր—Մալակկայի նեղուցի մօտ, Հոնգ-Կոնգ կղզին—Չինաստանի ափերին, Համբարձման կղզին—Ատլանտեան ովկիանոսում: Սրանց թւին են պատկանում նաև Զիբրալտարը և Մալտան:

Անգլիայի տիրապետութեան տակ գտնւող բոլոր երկիրներում արտադրւում է այն ամենը, ինչ որ անհրաժեշտ է մարդու համար. այդ գաղութներից շատ ապրանք է բերւում Անգլիա. Կանադայից—ցորեն, փայտեղէն, մորթի. Գլխանայից և Եամայկայից—շաքար, սուրճ, կակաօ. արևադարձային Աֆրիկայի կալւածներից—կաուչուկ, արմաւի ձէթ. Հնդկաստանից—ցորեն, բրինձ, բամբակ. Յէյլոն կղզուց—թէյ. Աւստրալիայից—միս, բուրդ, ոսկի և այլն: Այս ամեն տեսակ ապրանքներով բեռնած՝ անգլիական նաւերը լողում են ծովերով և ովկիանոսներով դէպի Անգլիայի ափերը և այդտեղից վերադառնում են՝ բեռնած քարածուխ և գործարանային ապրանքներ: Այս պատճառով անա՝ Անգլիայի համար անագին նշանակութիւն ունեն նրա գաղութները—արտաքին առևտրի և սեփական արդիւնադործութեան տեսակէտից:



Անգլիացիները գիտեն գնահատել իրենց գաղութները. սը-  
րանց հետ նրանք պահպանում են խաղաղ, գլխաւորապէս ա-  
ռելտրական յարաբերութիւն: Այդ գաղութներից շատերը, գըլ-  
խաւորապէս նրանք, որտեղ ապրում են հւրոպացի վերաբնակ-  
ներ, կառավարւում են ինքնուրոյն կերպով, ունեն նոյնիսկ  
իրենց պարլամենտները: Գաղութների և բուն Անգլիայի պաշտ-  
պանութեանն է ծառայում պատերազմական ահագին նաւա-  
տորմը, որ իր ոյժով շատ բարձր է մնացած պետութիւնների  
նաւատորմից: Անգլիան ծովային պետութիւն է, ուստի և ծո-  
վի վրայ են կենտրոնացած նրա գլխաւոր ոյժերը:

### Յ Ա Ն Կ

| երես                                               | երես                                                         |
|----------------------------------------------------|--------------------------------------------------------------|
| Ընդհանուր նկարագրութիւն . . . . . 5                | Իտալիա . . . . . 73                                          |
| Բալկանեան թերակղզի (ընդ-<br>նկարագր.) . . . . . 35 | Պիրենէեան թերակղզի (Իս-<br>պանիա և Պորտուգալիա) . . . . . 83 |
| Եւրոպական թիւրքիա . . . . . 39                     | Իելգիա . . . . . 105                                         |
| Բոլգարիա . . . . . 43                              | Հոլլանդիա . . . . . 109                                      |
| Սերբիա . . . . . 44                                | Գերմանիա . . . . . 113                                       |
| Չերնօգորիա . . . . . 46                            | Դանիա . . . . . 127                                          |
| Յունաստան . . . . . 48                             | Սկանդինաւեան թերակղզի<br>(Շւեդիա և Նորւեգիա) . . . . . 130   |
| Ռումինիա . . . . . 51                              | Անգլիա . . . . . 137                                         |
| Աւստրո-Ունգարիա . . . . . 52                       |                                                              |
| Շէէյցարիա . . . . . 65                             |                                                              |















